

17534

17535

323.2

3mL-8f

15 APR 2009

323.2

300-81

26 SEP 2006

[Handwritten signature]

Հասարակական մատենաարար թիւ 2

ԷՐՆԷՍԹ ԸՆԹՈՐՄԵՆ

**ԱՇԽԱՐՀԻ
ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Թարգմանեց (1910)

ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ



1915

ՏՊԱՐԱՆ «ՀԱՅՐԵՆԻՔ» Ի

ՊՕՍԹԸՆ

09 07 2013
Arlington Mass. U.S.A.
10/13/66



58118-67

ERNEST UNTERMANN
AUTHOR OF SCIENCE AND REVOLUTION'

THE WORLD'S REVOLUTION

TRANSLATED (1910)

BY

SHAHAN NATALIE

1915

HAIRENIK PRESS

BOSTON, MASS.

Hairenik Press, 7 Bennet St. Boston

Glin Ellen, Sonoma Co. Calif.

Dec. 10, 1909

Dear Camrade,

Your letter has been following me around from place to place, until at last it reached me here.

You are perfectly welcome to translate any of my works.

With fraternal regards

Ernest Untermann

Կլին Էլեն, Սոնոմա Գո. Քալիֆորնիա

Դեկտ. 10, 1909

Սիրելի ընկեր,

Ձեր նամակը տեղի տեղ պտտելով, վերջապես այս տեղ ինձ հասաւ :

Կատարելապէս ազատ էք թարգմանելու իմ գործերէս ունէ մէկը :

Եղբայրական բարևներով

ԷՐՆԵՍՏ ԸՆԹԸՐՄԵՆՆ

Handwritten signature and scribbles in the top left corner.

I

ԱՆՀԱՏԸ ԵՒ ՏԻԵՉԵՐԻՔԸ

Գտնւած էք երբէք բաց նաւակի մը մէջ, որ կ'ալեծփի ովկիանոսին վրայ. եղած էք երբէք բոլորովին առանձին ծովի ու երկինքի այդ անհուն ամայութեան մէջ, ուր կէս մատնաչափ տախտակ մը միայն կայ ձեր կեանքին ու հինգ հազար կանգնաչափ խորունկ աղի ջուրի անդունդի մը մէջտեղ. ըմբռնած էք երբէք այն իրողութիւնը թէ՛ ի՞նչ կը նշանակէ ունենալ միայն կղզիացած ուղեղ մը, ոսկոր ու մկանունք կուելու համար բնութեան ջախջախիչ ուժերու դէմ:

Սոսկ մարդ մը ու ազազուն նաւակ մը՝ հազարաւոր մզոն աղի ջուրի տարածու-

Թեան մը եւ երկիրնքի անսանձ հսկերուն
դէմ :

Ուղեղ մը նախատեսելու եւ յաղթելու
համար փոթորիկներն ու ամէհի ալիքնե-
րը, պաշտպանելու համար կէսօրի խան-
ձող արեւի տաքութեան, յորդառատ անձ-
րեններու, նենգաւոր հոսանքներու, ցուրտ
ու մենաւոր գիշերներու դէմ. զսպելու
համար ձեր անասնական մարմինի վայ-
րազ ձգտումները, որոնք ձեզ ձեր իսկ
դէմը պիտի հանէին ու պիտի թելադրէին
քանի մը յիմար վայրկեաններու մէջ
սպառել ձեր ունեցած ուտելիքի ու խմե-
լիքի պղտիկ պաշարը :

Չոյք մը յողնած աչքեր դիտելու հա-
մար ասպնջական կղզիի մը մշուշապատ
կապտեղերքը ու հեռաւոր մէգին մէջ
շարժակող առագաստի մը տարտամ ըստ-
ւերը, կամ շոգենաւի մը ծխազանդուր
զարդամանակը, որ երկնածիրի (sky-line)
ամպերուն վրա մոխրազոյն երիզ մը կը
դծէ :

Աջ ձեռք մը, բռնելու համար դժւարո-
րէն ղեկավարող թիակը. ձախ թեւ մը,
քաշելու համար ուռած առագաստի պա-
տառտած կտորը :

Եւ այսպէս օրէ օր, շաբաթէ շաբաթ

անընկճելի յաւիտենութիւնով պահելով
ձեր նաւակը իր ընթացքին մէջ, մերժե-
լով յուսահատական ամէն ճիշդ, սեւեռիյ
մէկ բանի — յաղթական դուրս դալ
բոլոր յորձանուտներու մէջէն եւ եզերք
մը ելնել, ուր կարելի պիտի ըլլար հետա-
պընդել ձեր բնականոն զարգացումը :

Սոսկական անհատ մը տիեզերքին
դէմ : Անհատապաշտութիւնը իր տրամա-
բանական ծայրայեղութեան մէջ :

Անհատապաշտութիւնը :— Ո՛չ, կա-
տարեալ հերքում մը անհատապաշտ փի-
լիսոփայութեան (Individualist Philoso-
phy) : Թո՛ղ անհատապաշտ մտածողը այս
փորձառութիւնը կրէ ու ասիկա ապահով
դարման մըն է «Ես»ի խրոխտ լարհուր-
դին դէմ :

Բայց երբ ես կ'ապրիմ ու կը պատմեմ
այն մանրակէտը թէ ես յաղթեցի ծո-
վին ու հողմերուն, ամայութեան ու իմ
իսկ տկարութիւններուն, թէ՛ ինձազա-
կան ուղիչանոսի մէկ բնակելի կղզին հա-
սայ ապահով. միթէ իմ ուժերուն, իմ դե-
րագոյն անհատականութեանս չէի՞ պար-
տիր յաղթանակս :

Ես չէի՞ որ վերջապէս ուժասպառ
կանդնեցայ Մինտանօի արեւելեան ծո-

վեզերքի ճերմակ աւազին վրայ ու ցըն-
ծուն աղաղակով մը հրաւէր կարգացի
հիւսիս-արեւելեան շրջանային հողմերուն
(monsoon) ու վրիւրագլուխ ալիքներուն
ու պոռացի երկու մղոն հեռու բուստա-
ծածկ խութերու ճակատին, որոնց մէջէն
անցք մը դտած խաղաղ ծանծաղուտքին
մէջ մտած էի :

Ե՞ս : Ես երբ գետին տաք աւազին վրայ
կ'իյնայի զդացումի կատաղի վերապրու-
մի մը մէջ տղայի մը պէս հեկեկալով, իմ
առաջին մտածումս անոր մասին էր, որի
արիւնը շրջան կ'ընէր երակներուս մէջ եւ
որի մտապատկերը կը ժպտէր ու կեանք
կը ներշնչէր ինձ .— Մօրս պատկերը : Ան
էր, որ թէեւ գրեթէ հազարաւոր մղոններ
հեռու, սակայն տառապած, վախցած,
յուսահատած ու կուած էր իմ կողմէս,
որ կ'ուրախանար իմ ճողոպրումիս հա-
մար եւ որի սէրը զիս երբեմն ետ, դէպի
իրեն կը քաշէր :

Իսկ իմ յաջորդ մտածումս ուրիշի մը
մասին էր, որի անդամները, կուրծքը,
ուսերն ու մուսյլ ճակատը իմ պատկերիս
կը նմանէին, եւ որի արիւնը մօրս արիւ-
նին հետ խառնուած կը զգամ երակներուս
մէջ .— Հայրս : Ան էր, որի մկաններն ու

ջիւղերը, ոսկորներն ու անվեհեր հաստա-
տամտութիւնը արեւմտեան Խաղաղակա-
նի ջուրերուն ու հովերուն դէմ ախոյեան
մը հանեցին :

Իսկ Հայրս ու մայրս որո՞նց շնորհներն
էին, որ կտակեցին ինձ :— Ուրիշ երկու
մայրերու ու հայրերու : Եւ այս չորսին
ետէն կը տարածւի երկար դարերու բազ-
մաճղի նախահայրական կալածք, որ ին-
քըզինքը, չեմ գիտեր ո՛ւր, անորոշ
մարդկութեան խոր արգանդին մէջ կը
կորսնցնէ :

Երբ իմ միսս ու արիւնս Մինտանօի ծո-
վեզերքը ելան, ինձի հետ ալ այնտեղ միլ-
իօնաւոր նախահայրերու միսն ու արիւ-
նը ոտք դրին : Մարդկութեան անցալը,
ներկան ու ապագան էր բիւրեղացած ան-
հատականութեան մը մէջ, որ կը հեկե-
կար Փիլիպեան կղզիներու լքւած ծովե-
զերքին վրա, եւ երջանիկ էր ազատած ըլ-
լալով մարդկային մէկ ճիւղը բնաշրջումի
վաղահաս ներդործութեան :

Իսկապէս ամէն բան տեղի ունեցած էր
իմ մէջ, իմ քսանըմէկ տարեկան անհա-
տական միս ու արիւնիս մէջ . բայց ո՛ր-
քան աննշան կերպով, բաղդատելով ար-
իւնի այն անհունօրէն երկար գլծին հետ .

այսինքն՝ ծառաբնակ (tree-dwelling) մարդի, Բըրեիէրիի (երկրաբանական երրորդ շրջան) շրջանէն — գրեթէ մէկ միլիօն տարի առաջ — մինչեւ իմ օրս :

Այդ բոլորը, սակայն, պարզ միտի եւ արիւնի մասնակցութիւն մը չէր միայն, որ ունէին իմ Ֆիզիքական անձնականութեանս հետ, եւ ինչ որ ուրիշներու կը պարտէի :

Ամէն բանէ առաջ կար նաւակս : Արդիւնք մը, ինչպէս ես, միլիօնաւոր անձանօթութիւններու : Այն բարակ տախտակները, որոնք զիս ահազու խորութիւններու վրայէն ապահով բերած էին, երբեմն Օրէկօն շոճիի սպրոդ ու կանաչ մաս մըն էին : Աւելը, որ անոնց մէջ շրջան բրած էր, բուսահիւթը, հոյզը հի՛ն առակի մը պարզեւն էին, որ տարիներ ու տարիներ բուսական նախահայրերու անչափելի գիծի մը մէջ հոսած էին : Հազարաւոր ձեռքեր աշխատեցան, գործեցին, կտրեցին այդ շոճին ու սղացարան բերին. ուրիշներ տախտակներ սղոցեցին անկէ, իրարու վրա դիզեցին, բեռնակառքով շոգեկառք տարին, որ իր կարգին տարաւ նաւաշինութեան կայարանը. հոն շատ ձեռքեր զայն տաշեցին, վերջապէս տախ-

տակները կտրատեցան ու ձեւաւորեցան ու իմ նաւակիս երեւոյթը առին, որ իր գեղեցկութիւնովն ու թեթեւութիւնովը ինձ հաճելի երեցաւ :

Յետոյ շինեցան ձկուն կայմն ու նուրբ թիերը, որոնք ուրիշ ծառերէ եկած, մարդկային ձեռքերու ուրիշ մէկ ճիւղին յանձնուած էին :

Իսկ ներկը, որ սլտի պաշտպանէր փայտին ջիղերը, մարդկային գործունէութեան եւ մտացիութեան ուրիշ մէկ ճիւղը առաջացուց :

Առագաստը պէտք էր ու ան ալ դրւեցաւ : Տակաւին անոր վրայ թաց եւ մռնչող ալիքներու ցայտքերը, որոնք դիզւեցան, կուտակեցան մեր վերջին խելագընաց նաւարկութեան ատեն : Ի՛նչ տեսակ գործող ձեռքեր կը պատկերացնէ ան. մշակել, ցանել, հնձել բամբակը, մանել դերձանը, գործել կտաւը, կտրել, ներկել ու ներկայ ձեւին բերել զայն ու ամբողջ արտածական ու առեւտրական գործառնութիւններն ընել :

Առաջամասի այն երկաթը, որ թաց աւաղին վրայ կը հանգչի, այն սղինձէ դամերը, որոնք արեւին տակ կը փայլին, եւ որոնց վրայէն ծովը լւաց ներկը, աւազ ու

խճաքար էին. իսկ այն թիերու բռնիչնե-
րը, որոնք ժանգէ պահելու համար կալ-
ւանիք եղած մետաղով պահւած են, ձեռ-
արեւստի ուրիշ ճիւղ մը կ'ենթադրեն, որ
հաղարաւոր տարիներու փորձառութիւնը
կը ներկայացնէ: Առանց կրակի, հանքա-
ծո՛ւխի, առանց հալել-ձուլելու դործո-
ղութեան անոնք դոյութիւնն չպիտի ու-
նենային:

Ու այն հին դոյլը, իր երկաթահիւս
կոթով: Առանց անոր ո՞ւր պիտի ըլլայի
ես հիմա, երբ ալիքները ջուր կը լեցնէին
նաւակիս մէջ: Եւ այն ճերմակ երկաթ
թելերը, որոնք պաշտպանեցին առաջա-
տըս ու տասներկու ոտք թիակիս հետ
օգնեցին որ նաւակս լաւ դեկավարեմ:
Ո՞րքան տարբեր մարդեր ու ազգութիւն-
ներ աշխատած են անոնց վրայ իմ ձեռքս
անցնելէ առաջ:

Ես չչինեցի բուրդէ բաճկոնակը, որ
դիս տաք պահեց, ո՛չ ալ մոմլաթէ վե-
րարկուները, որոնք դիս պաշտպանեցին
անձրեւին ու աղի ջուրին դէմ, ո՛չ ալ քա-
ուչուէ կօշիկները, որոնք պաշտպանեցին
ոտքերս ջուրին ու սուր խիճերուն դէմ:
Լաթերուս ամէն մէկ կոլթը ուրիշի մը
դործն էր, որ չէի ճանչցած, ինչպէս նաև

պիսիւքն ու սալմօնի վերջին տուփը, ո-
րոնք պատրաստւած էին իմ ուտելիքիս
համար:

Այս բոլոր բաները եղան, որովհետեւ
միլիօնաւոր մարդերու միացած ուժերը
միլիօն մը տարի սպառեցան արտադրելու
համար գործիքները, որոնք անհրաժեշտ
պէտքեր էին սնունդի, հագնելիքի, ապաս-
տանարանի եւ բոլոր պէտքերու պատրաս-
տութեան համար, իսկ առանց միլիօննե-
րու այս միացած ուժին ու աշխատանքին
այս առարկաները շուտով պիտի հիննա-
յին եւ մաշէին, եւ ես աւելի կարօտ պի-
տի ըլլայի քան խեչափառները, որոնք կը
չալէին բոլորտիքս:

Բայց վերջապէ՛ս իմ ուղեդս... — Ո՛չ
ան ալ իմա չէ բոլորովին: Անցեալ միլի-
օններու արիւնը հետքեր ձգած են անոր
վրայ, եւ ծանօթութիւնը, որ ամբարւած
է անոր մէջ, չէ՞ որ կը պարտէի անոնց,
որ ինձ սովորեցուցին և այդ ուսուցիչները
իրենց փորձառութիւնն ու խելացիութիւ-
նը կը պարտէին մարդկութեան ուսում-
նասիրութեան:

Ես ալ փորձառութիւն ու ծանօթութիւն
ունեցայ իմ անձնական կեանքովս, բայց
անոնց ամէն մէկը արդէն հիմքի մը վրայ

կառուցւեցաւ, որ ուրիշներ ինձ փոխ տը-
ւած էին, ու իմ կեանքս ալ պիտի արգա-
սաւորէ անոնցը, որոնց հետ շփուեցայ եւ
անոնք ալ, իրենց կարգին, պիտի ըլլան
իմ Ֆրիդրիքական ու մտաւորական սերուն-
դըս:

Միլիօններ չե՞ն աշխատած ստեղծելու
համար մարդկային լեզուն: Բեւեռային
աստղը, արեւը, լուսինը եղան իմ բարե-
կամներս, որովհետեւ ուրիշներ ինձ սով-
րեցողքին հասկնալ անոնց դիրքն ու շար-
ժումները: Կրակին գործածելու վարժու-
թիւնս, աշխարհագրական ծանօթութիւնս
ովպիանոսին վրա ճամբաս կարենալ դըտ-
նելու կարողութիւնս, հոսանքներու ուժ-
գընութիւնը չափելու, հովերու բնութիւ-
նը ճշգրտելու գիտութիւնս կրնայի՞ ունենալ
առանց անցեալ մթերւած իմացականու-
թեան:

Եւ եթէ միտքս կըղկացած մնար արեւ-
ադարձային կըղկիին մէջ, առանց ուրիշ
զարգացած միտքերու փոխանակութեան,
ի՞նչ պիտի ըլլայի ես մտաւորապէս՝ իմ
ցեղակիցներուս մէջ: Թերեւս կրնայի
Մինտանօի վայրի բնիկներուն մէջ նոր
միտքեր տարածել, բայց իմ հոգեկան ձե-
ւակերպումս պէտք ունէր ճերմակ մարդե-

րու միտքին:


Երբեմն երբեմն անձնականութիւնս
պէտք ունեցաւ ճնշելու տիրող ստորնու-
թիւններէն, կեանքի ուրախութիւննե-
րուն ու տքնութիւններուն մէջէն երթալու
համար հոն, ուր շրջապատս կը թելադրէ:

Ո՞րքան բուռն պայքարած էի մարդկա-
յին կազմին մէջ պահելու համար իմ դո-
յութիւնս: Եւ ամէն անգամ որ կը մտա-
ծէի թէ՛ միայնակ է որ կը տառապիմ, կը
զանէի որ միլիօններ տառապած էին
ինձ օգնելու համար: Տիեզերքը ամբող-
ջապէս ինձ հակառակ չէր եղած:

Օգի ամենակարող ովկէանոսը, իր
սուրացող հովերով, մինակ կեանքս չէր,
որ ասլրեցուցած էր, այլ միեւնոյն ատեն
ուռեցուցած էր առադաստս եւ զիս ապա-
հով բերած էր այս հանդարտ ծանծա-
ղուտքը, իսկ իր մէջ գտնւած թթւածինը
թոքերս անուցած էր ու արիւնս մաքրած:
Համայնութեան մէջ մարդկային կեանք
մը չկրնար առանձին ըլլալ: Ծառերը, ծա-
ղիկները ու ծովեզերքի անտառներուն
կենդանական ամբողջ ընտանիքը նոյն
բանը պահանջած էին ինչպէս ես: Այո՛,
աւազն իսկ, որի վրայ կանգնած էի եւ
ջուրերը, որ զիս կը շրջապատէին կեանքի

Ի՞նչ է

79-81185



այդ շունչով զեղուն էին :

Ջուրերն ալ միշտ թշնամի եղած չէին ինձ : Նոյն ուղիէանոսը , որ նաւակին շուրջը իր ահեղ կատաղութիւնը ցուցադրած էր , ահա խաղաղեր էր : Անձրեւները , որ մինչեւ մորթն թրջեր էին զիս , կ'անցնէին ծարաւս ու կը լողցնէին մարմինս եւ պապակած շրթունքներուս պէս թառամած ծաղիկներն ալ կեանք կ'առնէին զով ցողերուն տակ : Խեչափառները , ձուկերը , ջուրի կրիաներն ու ամբողջ կենդանիները , որ խութերուն վրայ կ'ապրէին նոյնքան պէտք ունէին անոր որքան զիւղացին , որ Ռուսաստանի տափաստաններու մէջ կ'ապրի ու հօտաղը , որ ուղիէանէն հազարաւոր մղոններ հեռու , անրնակ լեռներու կուշտին վրայ , կը զեզերի :

Եւ տակաւին աւելի սերտ կապեր կր կապեն զիս հողին , ծովին , օդին ու անոնց մէջ , անոնց վրայ ապրող կենդանիներուն ու բոյսերուն : Օդն ու ծովը իրար լրացնող անհրաժեշտութիւններ են եւ երկուքն ալ կը զգան արեւին համբոյրը : Առանց այդ լոյսին ու տաքութեան համբոյրին երկիրը չպիտի կրնար ապրեցնել իր բեղմնաւոր կեանքը , որովհետեւ հողը , ծովն ու օդը ամուսնացած են արեւի այրող բա-

ղունկներուն մէջ ու այդպէս կ'ապրին մարդկութիւնը , կենդանիներն ու բոյսերը : Իմ արիւնս , ինչպէս կենդանիներու արիւնն ու ծաղիկներու հոյզը , բոլորն ալ եկած են նոյն սկզբնական (primordial) մայրէն . նոյնիսկ այսօրի բիւրեղները , ծաղիկները , կենդանիներն ու մարդերը կազմաւորւած են մէկ բջիջէ եւ նոյն բաղադրական զգացումներն են , որ կը ցընցեն իրենց մատաղ հոգիները : Վերցուցէ՛ք լոյսը , օդը , ջուրը , հողը եւ դուք պիտի խլէք հոգիիս կենդանութիւնը , ինչպէս երկրածին բոլոր իրերու հոգիները :

Այո՛ , ես շատ բարեկամներ ունէի տիեզերքին մէջ : Անոնցմէ շատեր այնքան խորհրդաւոր ու լուռ էին , որ երբէք չպիտի զխտակցէի անոնց գոյութեան , եթէ ինչ խելացիներ ինձ չցուցնէին անոնք : Ուղիէանոսին վրայ իմ մենաւոր զիջերներուս մէջ յանկարծ կը տեսնէի լոյսեր , որոնք աստղազարդ երկնքի մութ ամայութիւններու խորը կը շառաւիղէին : Այն ատեն միայն հասկցայ թէ՛ երկրի ծոհաւոր մղոններ հեռու , աշխարհ մը յանկարծ իր հորիզոնը կը սահմանափակէր : Ճիշդ ինչպէս որ ես մաքառած էի տարրերուն դէմ , որոնք ամբողջութեան մէկ մասն էին ,

այնպէս ալ աշխարհ մը կար, որ մաքա-
ռած էր տիեզերքի ամենահեռաւոր սահ-
մաններուն դէմ եւ կորսնցուցած պայքա-
րը: Եւ տակաւին միլիօնաւոր ուրիշներ
կ'ապրէին. եւ մինչդեռ ես մէկին նւազու-
մը կը տեսնէի, կը գիտէի ազօտ ճերմա-
կութիւնը Ծիր կաթինի, որ աշխարհներ
կը ներկայացնէր իր կազմաւորութիւննե-
րով:

Երբ մէկ կողմէն իրենց հիւլէները կը
ցանցնէին միջոցին մէջ, անդին ուրիշներ
կ'ամփոփէին, կը սեղմէին իրենց տարբե-
րը, եւ իբր հսկայ մէկ պատկերը իմ պըզ-
տիկ նաւիս, մեր երկրագունդն ալ տիե-
զերքի անհուն ովկէանոսին վրայ կը դառ-
նար ամբողջին մէջ: Եւ եթէ այս աշխար-
հին երեսը ծածկող իրերու մտածումները
չեն կրնար հաղորդակցիլ ուղղակի միւս
աշխարհներու հետ, եւ, սակայն, այս բո-
լոր աշխարհները շփումի մէջ են իրարու
հետ քաշելով կամ ետ մղելով իրար, միլ-
իօնաւոր մղոններով հեռաւորութիւններէ
կամ խմբելով հասարակաց արեւի մը
շուրջը պաշտպանելու համար կարծես
երկինքի բանակներու արշաւանքներուն
դէմ, եւ կամ մերժելով արեգակնային
դրութեան հպատակիլ, կ'երթան դէպի ի-

րենց յատուկ կապակցութիւնները՝ երկ-
նային խոր ու անծանօթ ամալութիւննե-
րու մէջ, ուր մարդու ամենախիզախ երե-
ւակայութիւնն անդամ չէ հասած տակա-
ւին:

Այս նոր ուժերը, որ աշխարհները իրա-
րու բարեկամ կամ հակառակորդ կը դար-
ձընեն, նոյն գործնական ազդեցութիւնը
կ'ընեն այս երկիրի, ինչպէս նաեւ միւս
աշխարհներու վրա, իրենց կեդրոնէն մին-
չեւ մակերեսը: Արեւի ու լուսինի ձգողու-
թեան իբր պատասխան՝ աշխարհի արգան
դին մէջ եռացող լալան կը ժայթքի ու
ովկէանի խաղացքը կը բարձրանայ. իսկ
միւս լուս, դաշնակից ուժերը կ'օգնեն այս
ուժերուն, հողէն հայթայթելու համար
կենսահիւթը բոյսերու օրկանիզմին հա-
մար: Ձարգացած մարդեր շատ լաւ գիտեն
թէ՝ լուսինն ու արեւը խորապէս կ'ազդեն
այս երկրագունդի բուսական եւ կենդա-
նական կեանքին վրայ. նոյնիսկ մարմինի
անդամներու յատուկ պաշտօններուն վը-
րայ:

Մեր այս ծերացած երկիրը աստիճանա-
բար կը փոխէ իր կազմութիւնը, ինչպէս
մեր մարմինը. եւ որքան հաղուստը կը
փոխուի, նոյնքան անոր մակերեսն ու խո-

ըր զանուղ իրերը կը փոխւին :

Աշխարհի յեղափոխութիւնը աշխարհի դէմ . ջուրի յեղափոխութիւնը կրակի դէմ . ցամաքի յեղափոխութիւնը ծովի դէմ , եւ բոլորը փոխադարձաբար . տակաւին՝ ասոնց յեղափոխութիւնը բոյսերուն , կենդանիներուն եւ մարդկութեան դէմ : Այս է անծայր շղթան աշխարհի ընթացքին : Ո՞վ պիտի վերապրի :

Եւ , սակայն , շատ փոխադարձ օժանդակութիւն կայ այս պայքարին մէջ անգամ : Ամէն բան ստեղծութիւնն է : Այն վայրկեանին , երբ այդ նախնական բջիջները միասին կը համախմբւին , սէրն ու փոխադարձ օժանդակութիւնը ամէն կողմէ կմղեն կեանքի պայքարը : Ինքնապաշտպանութիւնը կը մղէ մարդերն ու իրերը ջնջել կռիւները , եւ , յետոյ , իրենց կիներուն ու սերունդին հանդէպ ծնած հոգածութիւնը կը բողբոջէ «ընկեր»ութեան ծիւղերը :

Որքան մարդուն ուժերը կ'աճին , նոյնքան «ընկեր»ութեան շրջանակը աստիճանաբար կ'ընդարձակի : Մարդկութեան «ընկեր»ութիւնը կանգ չ'առնէր բնաւ : Առաջին մարդը կը պաշտպանէր կենդանիներ ու բոյսեր ուրիշներու դէմ , իր շա-

հերուն համար , սակայն հետզհետէ անոնց ուժերը հարատակեցան երկրագունդի օրէնքներուն ու այլեւս բոլոր բոյսերն ու կենդանիները իրր անունդ չէին ծառայեր մարդէակին : Ան կը սլահէր անոնցմէ շատեր՝ անոնց գոյներովը , ճայներովը կամ համակրանքովը հրճելու համար եւ այսպէս սէրի շղթան աշխարհի աւելի մեծ երեւոյթները սկսաւ ընդգրկել : Որքան այս շղթան կ'երկարէր , կ'ընդարձակէր իր շրջանակը , նոյնքան կենդանիներն ու բոյսերը — մարդի սիրականները — աւելի կը գեղեցկանային ու կը ճոխանային :

Այսպէս ես կանգնած էի Մինտանօի լըռիկ ծովեզերքը , կը դիտէի իրիկնամուտի սակին , որ կը ջնարակէր հեռաւոր , ցուրտ գոյներու մէջ . եւ երբ մութ ստերները կ'իջնէին խիտ մօրուտներու վրայ , ճերմակ ծովափը , կանաչ ծանծաղուտը , խութերու ետին տարածուող լայնածաւալ , մութ-կապոյտ ովկէանը կը թաթխէին անթափանց գոյնի մը մէջ ու կը զարմանայի թէ՛ օր մը անոր տեղ թախիծըն ու մռայլը պիտի տիրեն ամբողջ աշխարհին , ու կը մտածէի միւս աշխարհներու , ծնունդներու ու մահերու վրայ :

Բայց մարդկային իմացականութիւնը

բնա՛ւ չկրնար թափանցել անոնց : Մենք
գիտենք միայն թէ՛ տիեզերքը բլրաւոր
ձեւափոխութիւններ ունեցած է, որոնց
մէջ մարդկային միտքն ու հոգին անհրա-
ժեշտ մասը եղած են, բնական ընթացքով
մէկը միւսին յաջորդելով :

Բայց ի՞նչ էր առաջին աշխարհի ըն-
թացքը, եւ երբէ՞ն ստացաւ իր հողեղէն
վիճակը :

Հաւատքը մէկ պատասխան ունի այս
հարցումներուն . իսկ Գիտութիւնը ուրիշ
մը, բայց երկու պատասխաններն ալ նոյն
տեղը կը յանդին . «Չենք գիտեր» : Հա-
ւատքը կ'աւելցնէ նաեւ . «Մենք բնաւ չը
պիտի գիտնանք» : Գիտութիւնը, սակայն,
կ'պոռայ . «Մենք պիտի գիտնանք, եւ
պէ՛տք է գիտնանք ամէն բան» :

Բայց ահա մտերիմ Գունը կ'առնէ զիս
իր թեւերուն մէջ ու կը խլէ միտքէս այս
հարցումները : Լուսինը կը բարձրանայ
ու արծաթուն նախատօնակ մը կը պատ-
կերէ ծանծաղուտին ու ովկէանին վրա :
Մենաւոր նաւաստին կը մրափէ իր նաւա-
կին խորը, փաթթած առագաստով, ու
մօրուտին գողը երկարող ծոցիկին խիտ
սաղարթները կը ծածկեն զայն . սակայն
ան մինակ չէ դարձեալ, տիեզերքը անոր

մէջն է ու ինք տիեզերքին մէջ . ո՛չ իր
մարմինը, ո՛չ տիեզերքը հանգիստ են ու
խաղաղ : Իր մէջ միշտ տեղի կունենայ
բջիջներու փոփոխութիւն մը ու խոր-
հուրդներու սնվերջ պայքար մը . եթէ
նոյնիսկ ան չհետաքրքրւի անոնցմով,
նոյն անվախճան կռիւը առանց անոր ալ
պիտի մղւի տիեզերքին մէջ : Անոր մէջ
ու առանց անոր աշխարհի յեղափոխու-
թիւնները առաջ կ'ընթանան իրենց ըն-
թացքով : Ու գիշերային սոււրղ միջատնե-
րու խուլ ձայնը կ'երգէ յաւիտենական
մեղամաղձոտ յանկերզը . «Հանգիստ չը-
կայ» :

II

ՄԿԶԲՆԱԿԱՆ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մարդկային առաջին յեղափոխութիւնը մարդկային էակի մը ծնունդն էր: Ե՞րբ եւ ո՞ւր տեղի ունեցաւ ատիկա:

Ձեզմէ շատեր կարդացած են Ադամ-Եւայի ծնունդի մասին գրւած մովսիսական պատմութիւնը, եւ շատեր կրնան հաւատալ ամէն մէկ գրւած բառի: Եթէ այդպէս է, մի՛ թոյլատրէք ինձ որ ձեր մտային հանգիստը խռովեմ: Աւելի բաներ մի՛ կարդաք եթէ կլախնաք որ ուրիշներու, որոնք չեն հաւատար մովսիսական պատ-

մութեան ամէն մէկ բառին, մտածումը թէ ի՞նչ կխորհին մարդկային առաջին էակի ծագումի մասին, կրնայ ձեզ վնասել:

Թերեւս ձեր մէջ գտնւին ուրիշներ ալ, որոնք չեն հաւատար թէ՛ մովսիսական պատմութիւնը բառ առ բառ ճշմարիտ է, եւ որոնք հակամէտ են մտածելու թէ՛ այլաբանութիւն մըն է ան, եւ պէտք է ժամանակակից լեզուի թարգմանելի անոր ճշմարիտ միտքը ըմբռնելու համար: Ես այդպէս մտածողներու հետ վէճ չունիմ, բայց իմ վէճս անոնց հետ է, որ կը հաւատան թէ՛ Մովսէսի գրածները բառ առ բառ ճշմարիտ են: Եթէ անոնք չեն ուզեր հակառակ կարծիք լսել, լաւ պիտի ըլլար որ ճիշդ այստեղ կանգ առնէին:

Որքան ալ որ այդքար չունենամ անոնց հետ, որ կը հաւատան Մովսէսի ըսածներուն կամ, որ իրենց երեւակայութեան համաձայն կը թարգմանեն եւ, սակայն, ունիմ իմ կարծիքս մարդկային առաջին էակի ծնունդի մասին: Թերեւս գտնւին Աստուածաշունչի հաւատացեալ շատ մը ամերիկացիներ, բայց պէտք է ամէն կողմէն լսել եթէ նոյնիսկ չհաւանին այդ միւս կողմերուն:

Անոնց է որ կ'ուզեմ խօսիլ, որ չեն հա-

ւատար Մովսէսի պատմութեան :

Կ'ըսելի թէ՛ Աստուածաշունչի հին գրողները ներշնչւած են եղեր գերադոյն, աներեւոյթ հակէ մը : Աստուածաշունչի ժամանակակից թարգմանները կը խորհին թէ ասիկա ըսելու տարբեր կերպ մըն է, թէ Աստուածաշունչի հին գրողները ուսումնասիրած էին բնութիւնը եւ թէ այդ ուսումնասիրութիւնը ներշնչած էր իրենց գրել անոր վրայ :

Ուրեմն, ժամանակ առաջ անգամ մը կարդացած ըլլալով մէկտեղ Աստուածաշունչը, որովհետեւ ան պատմական արժեքաւոր իրողութիւններ կը պարունակէ, ես կը սիրեմ կարդալ բնութեան գիրքն ալ, որ Աստուածաշունչի հին գրողները պարտաւոր էին ուսումնասիրած ըլլալ Աստուածաշունչը գրելէ առաջ : Անշուշտ ես չեմ յայտարարեր թէ ներշնչւած եմ ոեւէ բանէ, այլ բնական մղումէ տարւած եմ երբ կը գրեմ ինչ որ կը տեսնեմ աշխարհի վրա : Պարզապէս կ'ուզեմ թարգմանել այն լեզուն, որով բնութիւնն ինձ կը խօսի, իսկ իմ կարծիքս սոսկ իմ գիտողութիւններու վրայ չէ որ հաստատուած է, այլ պայծառատես մարդերու այն շատ մը ուսումնասիրութիւններուն վրայ, որոնք

գտնւած են և տակաւին կը գտնուին բնութեան շատ մօտիկ եւ որոնք բնութիւնը ներքնապէս թէ արտաքնապէս շատ լաւ կը ճանչնան :

Ո՛չ ես, ո՛չ ինձ պէս մտածող ոեւէ անհատ կարող եղած է գտնել բնութեան գիրքին մէջ աշխարհի բան մը, որ Աստուածաշունչի հին գրողները կը յայտարարեն թէ՛ տեսած են անոր մէջ : Միւս կողմէ բնութեան գիրքին մէջ տեսած ենք շատ մը բաներ, որոնք Աստուածաշունչի գրողները չեն տեսած. ու այս բաներէն շատերը կը հաստատեն թէ՛ Աստուածաշունչ գրողները սխալած են շատ մը բաներու մասին, որոնք իբր թէ սովորած էին գերադոյնէ հակի մը ներշնչումով :

Վայրկեան մը :

Մովսէսի պատմութիւնով աշխարհը գրեթէ 5,000 տարիի հնութիւն մըն է, եւ կը յայտարարելի թէ այս աշխարհի ժայռերը, բոյսերն ու կենդանիները, աստղերուն, արեւին ու տիեզերքին մէջ գըտնըւած միւս բոլոր բաներուն հետ, վեց օրի մէջ ստեղծուած են, թէ այդ բոլորը այն ատենէն մինչեւ հիմա նոյնն են ու նոյնը պիտի մնան : Բայց երբ մարդեր, որոնք կ'ուսումնասիրեն ժայռերու ու եր-

կիրի ներքին մասերու կազմութիւնը, ըսկըսան երկրագունտի խաւը պեղել, գտան բոյսերու ու կենդանիներու մնացորդներ, որոնք տակաւին շատ երկար ժամանակի չէին պատկաներ: Անոնք աւելի խորունկ փորեցին ու զարմանալին յայտնեցաւ. գտան բոյսի ու կենդանիի մնացորդներ, որոնք թաղած էին աւազի, կաւի, ժայռի եւայլնի մէջ: Անոնք պարզեցին նաև որ երկիրը հանքային շատ մը տարբեր տեսակ խաւեր կը պարունակէ եւ այս իւրաքանչիւր խաւը որոշ ժամանակի մէջ մակերես եղած ու իր բուսական ու կենդանական կեանքն ունեցած է. թէ այդ խաւերը, որոնք կը գտնուին ներկայ մակերես խաւին տակ, չեն պարունակեր ժամանակակից ասպրոզ բոյսերու եւ կենդանիներու ունէ մնացորդ: Երկրի այս տարբեր խաւերը սեղմած, տակը վրան դարձած, ճեղքւած, պատուած, կրակով հալած, ջուրով ողողւած, սառի վիթխարի լեռներու տակ ողորկւած եւ շատեր ալ բիւրեղացած են: Եւ երբ երկիրը ուսումնասիրողները սկսան հաշել թէ՛ ո՞րքան ժամանակ պէտք էր որ երկիրի տարբեր խաւերը այս ներկայ կեղեւը արտադրէին, հաշուեցին, վերհաշուեցին, բազդատեցին

անոնք առաջացնող պատճառներուն հետ, քննեցին ներքին ու մակերեսային խաւերը մեր աչքերուն խի առջեւ ու վերջապէս գտան թէ՛ մինակ՛ այն խաւը, որի վրայ կ'ապրինք այսօր, մօտաւորապէս մէկ միլիօն տարիի պէտք ունէր կազմաւորելու համար: Եւ ատիկա տակաւին ամենաբարակ խաւն է, որ երկրաբանները գտած են: Քանի՞ միլիօն տարիներ պէտք եղած են միւս խաւերու կազմաւորութեան համար, եւ ի՞նչ երեւոյթ ունէր երկիրը անոնց գոյացութենէն առաջ:

Ասոնք շահագրգիռ հարցումներ են, որոնց դիտութիւնը քիչ թէ շատ ճշգրտօրէն պատասխանած է, բայց անոնք այս ուսումնասիրութեան սահմանէն դուրս են: Ես պիտի ամփոփւիմ այն հարցերուն մէջ մինակ, որոնք կապ ունին մարդկային էութեան եւ այն ժամանակաշրջաններուն հետ, որոնց մէջ ասպրեցանք ու կ'ապրինք Այսպէս, ես չպիտի տարբալուծեմ ունէ արեւելեական ու երկրային յեղաշրջում, որ տեղի ունեցած է մարդու գոյութենէն առաջ:

Մովսէսի պատմութիւնը կը յայտարարէ թէ՛ մարդկային ամենաառաջին գոյըը, որ իրմէ վերջ ասպրոզ միլիօնաւորնե-

րու նախաճնողն եղած է, դերադոյն էակի մը կողմէ իր իսկ պատկերին վրայ ստեղծուած է. եւ թէ այդ պատկերը ճիշդ կը պատկերացնէ այսօրի ապրող ճերմակ ժողովուրդը: Բայց երկրաբանները միլիօն տարի առաջ բոյսերու ու կենդանիներու մնացորդներուն մէջ դտած են նաեւ մարդկային մնացորդներ. եւ այս վերջինները բոլորովին տարբեր են այսօրի մեր ճանչցած մարդերէն: Անոնց կմախքը մերինէն բոլորովին տարբեր ձեւ ունի. անոնց թեւերն ու սրունքները մերիններուն պէս համեմատական ու պատշաճ չեն: Աւելի խորունկ հետազոտութիւններու մէջ զբտնըւած են այս սկզբնական մարդերու կըմախքները երկիրի տարբեր խաւերուն մէջ եւ տեսնուած է որ ներկայ տիպի մարդերը եւ իրենց ցեղային տարբերութիւնները տարբեր ձեւէ մը առաջ եկած են միլիօն մը տարիի ընթացքին մէջ, եւ թէ այն ձեւն ալ աւելի հին ու աւելի ստորին ձեւէ մը առաջացած է: Այս գիծը կ'երկարի մինչև կենդանական թագաւորութիւն ու երբ կը հասնինք ամենահին նախահայրերու, որոնք առաջին ձեւի մարդին ծնողն եղած են ու քանի մը միլիօն տարիներ առաջ ապրած, անոնք կը նմանին մարդակերպ

կապիկներու, որոնք կը գտնենք մեր կենդանաբանական նյարտէզներուն մէջ: Պէտք էր ամբողջական վիճակագրութիւն մը պատրաստել համաձայնեցնելու համար այս իրողութիւններուն Մովսէսի պատմութիւնը, եթէ նոյնիսկ այլաբանութիւն մը ըլլայ ան:

Բայց ի՞նչ հարկ տիրծել համաձայնեցնելու համար անոնք. այսօր նոյնիսկ Աստուածաշունչի ամենաերկիւղած հաւատացեալներն անդամ մէկդի նետած են արդէն Մովսիսական այն հաւատքը թէ երկիրը տիեզերքի կեդրոնն է, թէ ան անշարժ է եւ արեւն է որ անոր շուրջը կը դառնայ: Ամենահասարակ ամէն դպրոց պտոր հակառակը կը սովորեցնէ, ըսելով որ արեւը արեգակնային դրութեան կեդրոնն է. թէ երկիրն ու այս դրութեան պատկանող միւս բոլոր մոլորակները արեւին շուրջը կը դառնան, եւ թէ ամբողջ այս դրութիւնը, արեւն ալ հետը միասին, կը շարժի շատ հեռաւոր աստղի մը ուղիւթիւնով երկինքներու ամենամեծ հաստատութիւններուն մէկին մէջ: Աստուածաշունչի ամէն դիտակից հաւատացող կ'ընդունի այս տեսութիւնը, առանց ամենապզտիկ խղճահարութեան: Կարելի՞

է ըսել թէ՛ աս ինչ պատճառով պէտք է
թողուլ Աբամ-Եւայի ստեղծագործու-
թեան Մովսիսական թէօրին, քանի որ
գիտութեան փաստերը ապացուցած են
են թէ Աստուածաշունչի պատմութիւնը
Ա.Ռ.Ս.Ս.Պ.Ե.Լ մըն է:

Եւ ասոնք միայն չեն այս սխալները,
որոնց մասին պարզաբանութիւններ կ'ըլ-
լան աշխարհի առջեւ: Այս պատկերա-
ցումները, սակայն, կը բաւեն ցուցնելու
համար թէ մարդկութեան առաջընթացու-
թիւնը մեծապէս կաշկանդուած է, իբր թէ,
ներչնչուած մարդարէներու դադափարնե-
րով:

Ոչ մէկը կրնայ ըսել թէ՛ առաջին մարդ-
էակի յեղաշրջումը ո՞ւր եւ ե՞րբ տեղի ու-
նեցաւ, որովհետեւ քայլ մը միայն կայ
կենդանական ու մարդկային ձեւին մէջ:
Բայց մենք գիտենք թէ՛ բան մը պատա-
հած ըլլալու է, որովհետեւ բնական ու-
ժերու իրարու վրայ եկող խաղերը փո-
խած են երկիրի խաւերը, որոշ երկիրնե-
րու կլիմայական պայմանները, բոյսերը,
որոնք մակերեսին որոշ մէկ տարածու-
թեան վրայ կ'աճէին, եւ սկզբնական կեն-
դանիններու բնութիւնը, ուրկէ առաջա-
ցած է մարդը հիմնապէս ձեւափոխուած:

Եւ պատահեցաւ որ նախնական կապիկ-
մարդին շատ մը զաւակներուն մէջէն մէկը
ծնաւ լաւ ուղեղով, աւելի ձեւաւոր ձեռ-
քերով ու ոտքերով եւ տիրող պայմաննե-
րու տակ այս բարձր տիպը աւելի յարմար
եղաւ գոյութեան պայքարը մղելու քան
միւսները: Եւ, երբ շրջանակը աւելի բա-
րեփոխեցաւ, այս ընտիր տիպը կրցաւ
ինքզինքը աւելի լաւ սերիլ գիտնալ քան
միւսները. այսպէս բազմապատկեցաւ ու
ապրեցաւ մինչդեռ միւսները ետ մնացին
առաջընթացութեան ճամբային մէջ կամ բո-
լորովին տարագրեցան անկէ:

Այդ մարդանման տիպի սերունդները
իրենց նախահայրերուն պէս շարունակե-
ցին ապրիլ ծառերու մէջ, թէեւ իրենց
յօրինուածքը կը յարմարէր հողի կեանքին
ալ: Վարժեցան շիտակ կանգնիլ, քայլել
ոտքերով միայն մինչեւ որ սրունքները
ձեւակերպեցան ու սերունդէ սերունդ ի-
րենց բազուկները կարճցան. ասոնք աս-
տիճանաբար սկսան նմանիլ մեր տիպե-
րուն: Իրենց կմախքներու եւ մարմիննե-
րու կազմուածքին պէս իրենց ուղեղն ալ
փոխեցաւ, ու այսպէս աճեցաւ դադա-
փարներ կազմելու, յիշատակներ յիշելու,
զգացումներ արտայայտելու կարողու-

թիւնը. վարժեցան մարդ էակներու պէս մտածել ու մարդի լեզուներ խօսիլ:

Քանի մը հազար տարիներ այս կեանքը ապրելէ վերջ անոնք կորսնցուցին այն վախը, որ կը զգային բնութեան քանի մը տարբերուն հանդէպ. ինչպէս կրակէն ու ջուրէն: Փոխանակ վախնալու անոնցմէ, սկսան գործածել անոնք, ինչ որ ուրիշ յեղաշրջում մը ստեղծեց կեանքի սովորութիւններուն մէջ: Կրակի գործածութիւնը հարկադրեց անոնք փոխանակ ծառի՝ ապրել հողի վրայ ու որջերու մէջ, որովհետեւ միւս կենդանիները կրակէն կը վախնային ու չէին համարձակեր անոր մօտենալ: Մարդկային էակները այն ատեն սովորեցան եփել, անկերպարան դէնքերը, գործիքները, ամանները ձեւաւորել: Կեանքը սկսաւ դիւրանալ, իրենց անդամները ճոխացան եւ որքան անդամները կը շատնային նոյն համեմատութիւնով ալ կ'աճէին ուժն ու իմացականութիւնը, այնպէս որ անոնք տարածեցան երկրագունտի մակերեսին դրեթէ խոշոր մէկ բաժինին վրայ:

Երբ որ ցրեցան աշխարհի մեծագոյն մասին վրայ, ահա ուրիշ դէպքեր պատահեցան: Ուրիշ աշխարհ մը, հաւանաբար

երկրորդ լուսին մը, որ երկիրի շուրջը կը զառնար, զարնեցաւ մեր երկրագունտին եւ փոխեց իր առանցքին ուղղութիւնը: Այսպէս կարճ ժամանակի մէջ երկիրը արդէն իր աշխարհագրական ու կլիմայական պայմանները արմատապէս փոխած էր: Սառի վիթխարի զանգւածներ ծածկեցին երկրամասեր, որոնք տաք կլիմայի տակ ապրած էին երկար ատեն, բոյսեր ու կենդանիներ, այս նոր կլիմայի ազդեցութեան անընտել, չքացան կամ ձեւափոխուեցան. նոյն բանը տեղի ունեցաւ մարդերու մեծամասնութեան համար. բայց անոնցմէ շատեր որջերու մէջ ապաստանեցան: Երկրագունտի մակերեսին միւս մասերը ջրհեղեղեցան ու ջուրի, հրաբուլբուլի ժայթքումներէն մահացան. հազարաւոր միլիոններով հողի տարածութիւններ հիմնայատակ եղան զարհուրելի երկրաշարժներէ:

Ժամանակ մը վերջ երկրագունտը անդամ մըն ալ ստացաւ իր խաղաղ երեւոյթը. այնքան հեռու է այդ ժամանակը, որի մասին մարդկային էութիւնը չկրնար պատմել: Բայց բնութեան ուժերը անըզպալարար շարունակեցին իրենց գործը. կամաց կամաց լեռնաշարքերու մէջ դաշ-

տաղետիններ երեւան եկան. լեռներ բաժնւրեցան ու ցցւեցան դաշտերու մէջ. մըրդոններով երկար ժայռեր աստիճանաբար մաշեցան ստորերկրեայ ակերէ. հանքային խաւեր ցնցւեցան պղտիկ երկրաշարժներէ, որոնք կը յուզէին երկիրի ներքին մասը՝ առանց փոխելու մակերեսը: Ու պարագայբար, երբ այս տեսակ պղտիկ փոփոխութիւններ տեղի կ'ունենային որոշ կէտի մը վրայ, յանկարծական դէպք մը ահա կը զգացնէ մարդ էակին որ իր բնական բեմին երեւութական խաղաղութիւնը պատրանք մըն է եւ թէ՛ իր գլուխին վրայ փայլող բիւրաւոր աստղերուն մէջ, ինչպէս նաեւ ճիշդ իր ոտքերուն տակ, տիեզերական ուժեր միշտ կը գործեն:

Պատմական ժամանակներու մէջ շատ մը ահազուեցիկ երեւոյթներ պարզւած են եւ շատեր ալ պիտի պարզուին ասպագային: Ես ասոնցմէ միայն քանի մը դարձուրելիները պիտի յիշեմ: Գրիստոսի 79 թւականին Վէսուվի ոտքերուն տակ Հէրքիւլանում եւ Պոմպէ քաղաքները հրաբխային ժայթքումներու տակ թաղւեցան եւ հազարաւոր մարդկային արարածներ մահացան: 1755ին, հինգ վայրկեանի մէջ ամ

բողջ Լիզպօն քաղաքը աւերւեցաւ եւ 60,000 ժողովուրդ սպանւեցաւ: 1883ին, Սուն տա Սթրէյթս պղտիկ կղզիին մէջ, Քրօքսթօմ հրաբուխի ժայթքումով 40,000 ժողովուրդ սպանւեցաւ: Եւ հրաբուխին մօտ գտնուող շատ մը պղտիկ կղզիներ եւ հազարաւոր մղոն ծովեզերքներ լավաներու տակ թաղւեցան, այլքի մակընթացութիւնն առաջացաւ վեց անգամ եւ աւերումի ուրիշ պատկերներ ներկայացան: Այս հրաբուխի հրախառն ժայթքումները տարածւեցան մթնոլորտին մէջ եւ ահազին խառնաշիտթութիւն պատճառեցին: 1901ին Մարթինիքի կղզիին մէջ, Փէլի լեռին ժայթքումը, մէկ վայրկեանէ պակաս ժամանակի մը մէջ տաք կազերով 50,000 ժողովուրդ խեղդամահ ըրաւ:

Այս դէպքերն ու անասնութենէ (animadom) առաջ եկած մարդի ծնունդն ու կազմաւորութիւնը կը պատկերացնեն աշխարհի յեղափոխութիւններու մէկ տեսակը. յեղաշրջութիւնը բնութեան տարրերուն: Ի՛նչ կերպով ալ անոնք եղած ըլլան, աստիճանաբար թէ յեղակարծ, մարդկային կեանքի սովորութիւնները, Ֆիզիքական պայմաններն ու դադափարները միշտ ու խորապէս ազդւած են ա-

նոնցմէ : Եւ այս դէպքերը տեղի կ'ունենան երկրագունտի մը մէջ, որ տակաւին ամբողջապէս դուրս է մարդկային ընկերութեան հսկողութենէն : Թէ այս երկրագունտը վերջապէս չափով մը պիտի կրնա՞յ մարդի հսկողութեան տակ իյնալ . ատրկա վարկած մըն է միայն :

Բայց այս յեղաշրջումներէն դուրս կան ուրիշներ, որոնք մարդկային գործունէութեան կը պարտինք, թէեւ անոնք բնական յեղաշրջումներու որոշ հանգամանք ունենան : Մարդը կը պատկանի բնութեան եւ իր գործունէութիւնով իր կեանքին ու բընաւորութեան պէս կը փոխէ իր շրջանակի որոշ մէկ մասն ալ : Ուրեմն մենք կրնանք իր յեղափոխութիւնները կոչել մարդկային, զանազանելու համար երկրային ու տիեզերական յեղաշրջումներէն :

Մարդկային յեղափոխութիւնները կը զանազանւին ընկերական կազմակերպութեան համաձայն : Այսպէս, ամենանախնական տիպի մարդերը, մարդկային թերի մարմիններով եւ առանց կրակի ու գործիքի, չունէին որոշ կազմակերպութիւն, բայց եթէ իրենց կենդանի նախահայրերուն մեղկ խումբերը . բայց մարդկային զարգացած մարմինով, կրակով,

կոշտ գործիքներով, զէնքերով, ամաններով եւ իրր տուն ծառայող որջով նախապատմական մարդը չէ թէ միայն վայրի կենդանիներու, եղանակի ու կլիմայի խստութիւններու դէմ գոյութեան կռիւր մղելու համար, այլ միեւնոյն ատեն շրջապատուած ըլլալով իր նմաններէն, որոնք կը սկսէին մրցիլ, այս տեսակ պայմաններու մէջ, կը սրէր իր միտքն ալ : Շուտով իր անդամներն ալ բազմացան ինչպէս եղած էր աշխարհի մեծ յեղափոխութիւններէն առաջ :

Սկզբնական կազմակերպութիւնները խմբակցան արեւակցութեան շուրջ : Բոլոր անոնք, որ սերած էին միեւնոյն մայրէն, կը պատկանէին միեւնոյն խումբին ու կը բնակէին միասին : Այրերն ու կիները կ'ապրէին հաւասարներ, գործն ու արդիւնքը իրենց մէջ բաժնելով հաւասարապէս :

Նոր կարգադրութիւններ առաջ եկան մարդերու կեանքին մէջ, երբ անոնք սովորեցան ընտանեցնել կենդանիներ ու գործածել անոնց կաթը, միսը, կաշին, ոսկորներն ու եղջիւրները : Ընտանեկան խումբերը այն ատեն աւելի արագօրէն աճեցան ու իրենց անդամները զարգացան

մարմիննով ու միտքով, բայց միևնույն ատեն արձանները պատճառ դարձան մարդկային մեծագոյն յեղափոխութիւններէն մէկին, որ երբէք խաղաղութիւնով չվերջացաւ:

Ահա թէ ինչպէս պատահեցաւ: Ընտանի կենդանիներու հօտերը աւելի բազմացան եւ աւելի անհրաժեշտութիւն դարձաւ թարմ խոտ գտնել անոնք արածելու համար: Ժողովուրդը պարտաւորուեցաւ թողուլ հին բնակարանն ու տեղը, այսպէսով սովորեցաւ կենդանիի մորթով վրաններ շինել ու թափառիլ: Ասիկա պատճառ եղաւ որ անոնք լքեն իրենց հին սովորութիւնները: Յետոյ էրիկ մարդի աշխատանքը աւելցաւ ու կիները սկսան միօրինակ ու հանգիստ մնալ եւ ընտանեկան գործեր ընել: Այս տեսակ քանի մը սերունդներէ յետոյ, տղամարդեր, խումբերու մէջ, աստիճանաբար բարձր դիրք մը բռնեցին եւ անոնցմէ, օրինակի համար մէկը, տարէցը, խելացին կամ զօրաւորը վերջապէս եղաւ անոնց առաջնորդն ու ղեկավարը: Կիները պարտադրեցան կրաւորական դիրք մը ունենալ եւ հետզհետէ խումբին հարստութիւնը սկսաւ երթալ այդ խումբին պատկանող զօրաւորադոյն

ընտանիքին եւ անկէ ալ ընտանիքի պետին:

Մինչեւ այստեղ կիները շատ լաւ կը յարգւէին, սերունդները կիներու անունովը կը յորջորջէին եւ մեռած ամուսինի մը հարստութիւնը ժառանգ կը մնար մօր կողմի ազգականներուն եւ ոչ թէ տղամարդի զաւակներուն. բայց երբ մարդ մը, որ տէրն էր ամբողջ խումբի մը հարստութեան, ուզեց որ իր զաւակները ուղղակի ժառանգորդներն ըլլան անոր, ահա մօր կողմէ սերունդներու ժառանգելու սովորութիւնը լքեցաւ:

Կիներու աւանդական հաւասարութեան դէմ այրերու այս յեղափոխութիւնը պատճառ եղաւ յաջորդական բոլոր յեղափոխութիւններուն. իսկ անոր շարժիչը, ինչպէս բոլոր միւսներուն, եղաւ այն փախաքը, որով կ'ուզէր մէկը լիազօր տէրն ըլլալ բոլոր հարստութիւններուն, որոնք արտադրւած էին ու գործածւած խումբերու բոլոր անդամներու կողմէն:

Այդ ժամանակէն՝ մարդկային բոլոր յեղափոխութիւնները նոյն տեսակի կըրնութիւններ եղան, ինչ որ կարելի է սապէս բացատրել. «Ձեռարկեստական յեղափոխութիւն մը կայ, ծնած գործիքնե-

րու կատարելագործութենէն, որոնք կը փոխեն արտադրութեան մեթոտները: Ասիկա զանազանութիւններ կը ստեղծէ կիներու եւ ալրերու տնտեսական ու ընկերային յարաբերութիւններուն մէջ: Այս ընկերային ու տնտեսական փոխաձ յարաբերութիւնները կը ծնին դադափարի յեղափոխութիւն: Երբ այս դադափարի յեղափոխութիւնը հասնի իր հասունութեան, ընկերային յեղափոխութիւն մը կը ստեղծուի, որ կը վերջանայ նախկին ղեկավարող խումբի կամ տնտեսատէր դասակարգի տապալումով ու անոր տեղ ուրիշի մը կանգնումով»:

Կիներու դէմ ալրերու յեղափոխութեան կ'ընկերանար կամ անոր անմիջապէս կը հետեւէր դրացի խումբերու կռիւները, աւելի արջառ կամ աւելի արօտաւալոր ունենալու համար: Յաղթողները կ'ըլլային գերի, ու պարտւող խումբերու կիները կ'աւելնային պարտողի կիներուն վերայ:

Պատմական քննութիւններով, տակաւին ոեւէ ազգի դոյացութենէն առաջ, ահա ուրիշ յեղաշրջութիւն մը ծագեցաւ: Այս յեղաշրջումը առաջ եկաւ մետաղներու — օրինակի համար, երկաթ, պղինձ,

անագ — երեւան զալէն ու անոնց հալումէն ու ձեւաւորումէն: Հազիւ թէ երկաթը ձեւաւորուեցաւ, ահա քարէ մուրճը տեղի տւաւ երկաթ մուրճին. փայտէ արօրին տեղ գործածուեցաւ երկաթէ արօրը. երկաթագործութեան մէջ պարտիզպանութիւնը զարգացաւ ու վաչկատուն ցեղերը եղան մշակներ: Պղինձ ու երկաթ զէնքեր ցեղերու ձեռքը առաւելութիւններ տւին, նազ զարգացած ցեղերու դէմ մըղւած կռիւներուն մէջ յաղթող հանդիսանալու, եւ յաղթող ցեղերու գերիները բազմացնելու համար:

Ասիկա «Բաղաքակրթութեան Արշալոյս»ն է, որի մասին ամբողջապէս փառապանծ կը խօսին մեր դարձեցան պատմութիւնները: Նւիրագործուեցաւ այն սիստէմը, որով կիները ինկան էրիկ մարդի ձեռքին տակ երկրորդական, կըրաւորական դիրքի մը մէջ, եւ, զէնքի ուժով, ազատ մարդեր դարձան գերիներ: Արիական, Սեմական եւ Թուրանական բոլոր ցեղերը, որոնք իրենց արձանագրութիւններով կը ծանօթանան մեզի գրեթէ 10,000 տարիներ առաջ (Բ. Ա.), մեզ կը ներկայացնեն փոխանցում մը նահապետականութենէ քա-

ղաքակրթութիւն, եւ մայրատոհմութենէ (matriarchy) հայրատոհմութիւն (patriarchy) :

Բոլոր այս ցեղերուն մէջ կը նշմարենք մայրատոհմական (matriarchal) եւ հայրատոհմական (patriarchal) խումբերու աստիճանական բնաջնջում մը, ընտանիքներու մէջ հողի շրջանային բաժանում մը, — առաջ եկած սեփականատիրութեան փափաքէն, ամուսնական սովորութիւններու փոփոխութիւններէն, եւ հասարակաց կազմակերպութիւններու հանդէպ աննկատ արենակցական օրէնքներէն : Այս փոփոխութիւնները տեղի ունեցան մինչեւ այն ատեն որ հարստութեան խտրողութիւններն աւելցան : Հարստութիւնը իբր հեղինակութիւն սկըսաւ ներկայանալ եւ պաշտպանել իր սեփականութիւնը աղքատութեան դէմ : Այն ատեն պետեր, կղերականներ, որոնք նըպաստաւորւած ընտանիքներու անդամներէն կ'ընտրէին, ուխտեցին պաշտպանել իրենց շահերը եւ զինեցին կուռղներ նոյն հասարակաց կազմակերպութեան դէմ դարձածելու համար : Ահա անմիջական արդիւնքը նոր պայմաններուն : Այսպէս, վերջապէս, քաղաքա-

կան իրաւունքներ ստեղծւեցան անձնական հարստութիւններու համեմատ ու ներկայ դասակարգերը հաստատուեցան իրենց առանձնաշնորհւած ու զրկւած դասակարգերով :

Դասակարգային այս բաժանումը մարդկութեան մէջ սեփականատիրութեան դէպքէն, արական սեռին հպատակեցուց . իսկ ուրիշ ցեղերու անդամներու գերութիւն պարտադրեց յաղթողներուն առջեւ : Այսպէս քաղաքակրթութիւնը արական թէ իգական ստրուկներ աւելցուց նոյն ցեղերու անդամներէն : Անկէ վերջ փոխանակ թեթեւալու տնտեսական ճնշումները, դոյութեան պայքարը աւելի խստացաւ . պարսպ տեղը կ'ինէր 10,000 տարիներ կուսեցան էրիկ մարդի բռնակալութեան դէմ, ազատագրելու համար . պարսպ տեղը ճնշւած մարդեր պայքարեցան տնտեսական ջլատիչ լուծին դէմ, որ իրենց վիզին կը դրէր տնտեսապէս տիրող դասակարգին կողմէ . պարսպ տեղը աւանդական մայրական սէրն ու եղբայրութիւնը կոչ ըրին մարդկային սիրտերուն : Դասակարգային ու սեռային պայ-

քարները եւ ապրելու համար խստութիւններու դէմ մղւած ընդհանուր կռիւնները, որ երկու սեռերն ալ կը ճնշէին, եղան մարդկային կեանքի մշտակայ ընկերը:

Պատմութեան ո՛ր մէկ էջն ալ որ բանաք «Բաղաքակրթութեան Արշալոյս»էն մինչեւ այսօր, պիտի գտնէք կիներու հըպատակութիւնը էրիկ մարդերու առջեւ, ժողովուրդներու ստրկութիւնը տիրող դասակարգերու առջեւ ու նիւթական անհրաժեշտութիւններու փճացումը երկաթ անիւններու տակ: Եւ, տակաւին, պիտի գտնէք տիրող դասակարգերու կռիւը իրարու դէմ, հարստութեան դիզումի ու նիւթական շահերու համար, ուր միշտ հարկադրւած են ճնշող դասակարգերը կուիլ իրենց (տիրողներու) շահերուն համար:

Բայց տիրող դասակարգերը չեն կրնար երկար ատեն անտապալ մնալ: Շուտով երկիրը կը փախի իրենց ոտքերուն տակէն ու անոնք կը կոխկռտուին նոր յեղափոխութեան մը ոտքերուն տակ:

Մարդկային յեղափոխութիւնները չեն առաջանար մարդերու կանխամտածւած փափաքներուն կամ ուրիշ բնական յեղափոխութիւններու համաձայն, այլ ուղղա-

կի արդիւնքն են մարդկային անհատական ու ընկերային գործօններուն. սակայն անոնք այնքան դանդաղ կ'աճին որ վերջնական դէպքը չէ կարելի վերագրել ոեւէ որոշ անհատներու կամ դանդաճներու գիտակից կամքին: Մէկ կէտի մէջ անոնք կը տարբերին բնական միւս յեղափոխութիւններէն: Մարդկային իրաւունքը, որոշ պարագաներու տակ, կրնայ յեղաշրջել դէպքը, որ բնական ընթացքով պիտի առաջանար երբ մարդկային ընկերութեան մէջ կուտակող պզտիկ խոչընդոտին հաւանականութիւնը պիտի աւելնար մինչեւ որ մարդեր գիտակից դառնային ընկերական կազմաւորութեան օրէնքներուն:

Բայց մինչեւ որոշ ժամանակներ մարդեր ոեւէ բան չէին գիտեր բնական ու ընկերային կազմակերպութեան մասին: Ամէն տիրող դասակարգ կը կարծէր թէ՛ ինք պիտի ղեկավարէր յաւիտենապէս. ու փոխադարձաբար անոնք, որ ղեկավարւած էին, կը խորհէին որ պիտի ղեկավարէին յաւիտենապէս: Տիրողները, փոխանակ անխուսափելիին պատրաստուելու, պարզապէս աշխատեցան յեղափոխութեան ազդանշանները խղզել, որոնք

արդիւնքներն էին իրենց տնտեսական, բանակալական գործերուն. իսկ այս վերջինները պատճառները իրենց «տէր» դառնալուն :

Նւ այսպէս, մինչեւ ներկայ ժամանակները, մարդի ձեւակերպումը, դարդացումը մինակ արիւնի արահետ մը եղած է. ու այսօր աշխարհը կը ներկւի միլիոնաւոր տառապողներու ստնահարւած արիւնով, երթալու համար դէպի առաջ աւելի բարձր կազմակերպութեան մը ձևին :

III

ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆՆ

ՈՒ ԻՐ ՊՐՕԼԷՏԱՐԻԱՏԸ

Տառը հազար տարիներէ աւելի անցած են այն ատեններէն, երբ Սեմական արձանագրութիւնները զրուցան Բարելոնական քարերուն վրայ: Բարելոն շատոնց արդէն գաղբեր է ուժ մը ըլլալէ. իր հրակայ շինւածքները փրփրկած կը մնան Նփրատի ամերուն վրայ եւ իր քանի մը ցիրուցան փլատակ հաստատութիւնները գրեթէ աւերւած են: Ստորեւտանցիները, որ բարելոնացիներէն վերջ տիրեցին այս քաղաքին ու ամբողջ Արեւմտեան Ասիա-

յի, անցան անոնց պէս, իբր պատմական ուժ մը: Իրենց արձանագրութիւնները, որ դրեթէ 50,000 տարիներու շրջան մը կը թողարկեն, արդէն սոսկ առասպելներ եղած են:

Պարսիկները յաղթակալեցին Ասորական երկիրները, տիրեցին Փոքր Ասիայի եւ վերջապէս տապալեցան մակեդոնացի Մեծն Աղեքսանդրէն: Անոր մահէն վերջ իր կայսրութիւնը բաժանուեցաւ իր զօրապետներուն մէջ. բայց անոնց թագաւորութիւններն ալ նոյնպէս անյայտացան: Ափրիկէի մէջ Եգիպտական հարստութիւնները, մինչեւ 6,000 տարի հնութիւնով, արդէն խեղդուած են անապատի աւազներուն տակ. մինակ սփինքսներ ու բուրգեր կը մնան Նեղոսի ափերուն վրայ, իբր լուռ վիկաներ Եգիպտական հարստութիւններու ծագումին ու անկումին:

Աշխարհի ծանօթ ազգութիւններուն մէջէն Հռովմն էր, որ հիմա ամենէն աւելի կը ղեկավարէր Հերքիւլէսի Բելլիարներէն (Ճիպրալթարի ժայռ) մինչև Եփրատ եւ Դանուբէն մինչև Ափրիկեան անապատները: Գրեթէ ամէն ցեղ ու ազգ կը խոնարհէր Օզոստոս կայսրի մականին առջև:

Հիւսիսի մէջ Գերմանական ցեղերը տակաւին չէին ընկճուած. Սքանտինաւիան եւ Ռուսիան տակաւին կոյս չըջաններ էին. Բրիտանիան պաշարուած էր բայց չէր ընկճուած, Այրիկեան եւ Ասիական քանի մը պետեր ու թագաւորներ տակաւին ինքնիշխան էին: Ասիայի, Եւրոպայի, Ափրիկէի ու ճանչցուած աշխարհներու մէջ Հռովմը միակ աշխարհակալ ուժն էր: Հեռաւոր Արեւելքի մէջ ճիշտ այն ատեն Չինական կայսրութեան Հանի հարստութիւնը կը տիրէր, ու դէպի ետ, պատմական 50,000 տարիներ, կը դիտէր: Իսկ Արեւմուտքի մէջ ոչ մէկը կը մտածէր թէ՛ Չինաստան մը դոյուլթիւն ունէր: Հեռու, Ադլանտեանի միւս կողմը, երկու բուկուային շրջափոփերու մէջ, կը տարածէր Ամերիկան, ուր տիրողներ կը վարէին նախնական բնակիչները, եւ որ մեծապէս ազգուած էին աշխարհային ըսկզբնական (primordial) դէպքերէն, բայց չունէին Սեմական, Արիական կամ Թուրանական աստուածներ, որոնց հետեւողները կը յայտարարէին թէ՛ անոնք զերբնական զօրութիւններ ունին: Երբ այս հին կայսրութիւնները ինկան, անոնց աստուածներն ու վարդապետներն ալ ա-

նոնց հետեւեցան վարիչներուն հետ միասին. բայց ժողովուրդին մեծ զանդւածը, դործաւոր դասակարգը, նոր օրէնքներ որդեգրեց ու վերապրեցուց ասուածներ, տիրույններ ու կղերներ:

Պոստոս կայսրի օրով Հռովմը, ինչպէս պատմարանները կը սիրէին կոչել «Ռսկեղար»ը կ'ապրէր: Այսպէս կը կոչէին, որովհետեւ ծանօթ աշխարհի ամէն կողմերէն հարստութիւն կը կուտակէր հոն. հասարակաց կեանքը բարձր էր. բանաստեղծութիւնն ու արւեստադիտութիւնը կատարելագործւած էին, եւ նըմանօրինակ փայլուն արւեստներ կը զընահատէին, ինչ որ կը պարզեն պաշտօնական ժամանակագրութիւններ: Բայց այդ մակարոյժներու միակ մտածումն էր մեծածախս ապարանքի մը մէկ անկիւնը գրաւել, կամ բանաստեղծական սին փայլ մը ունենալ մինչդեռ անդին վատասերումի որդը Հռովմէական ժողովուրդին սիրտը կը կրծէր:

Հռովմի «Ռսկեղար»ը եկաւ տապալել Հռովմէական հասարակապետութիւնը, — Նւաճում Հռովմէական ժողովուրդներու հին իրաւունքներու եւ կայսերական զօրութիւններուն գերիշխանութեան: Օտար

ժողովուրդներու հարստութիւնը կը յափըշտակէր հռովմէացի բիրտ գիւղացիէն, արիւննումութեան գոհացումին համար: Զօրապետներու ու ազնւականներու դրամարկները կը լեցւէին ոսկիներով ու գոհարներով, մինչդեռ անդին կուող աշխատող ժողովուրդի սովորները կը ջախջախէին օտար երկիրի այրերուն մէջ: Այս պատերազմիկներու, Հռովմէական ընկերութեան թեթեւամիտ բելիարներուն, իրենց հերոսական գործերուն իրր փոխարինութիւն կը տրէր մասնակցելու իրաւունք իրենց առած աւարներուն, եւ կը վճարէր իրենց անսկզբունք պատմադիրներուն, որպէսզի իրենց մասին գովասանքներ գրեն, որոնց արժանի չեն:

Ո՛չ մէկը ներբողել մտածեց դիւցազնութիւնն ու մարդկութիւնը ստորադաս մարտիկներուն, որոնք այդ քաղաքի առասպելական հիմնարկութենէն ի վեր 750 տարիներ անոր պատնէջը եղան. միայն երբեմն կը յիշատակէին անոնք արհամարհանքով ու նախատինքով, երբ անոնք կ'ըմբոստանային ազնւականներուն դէմ, երբ այս վերջինները կը բռնադատէին իրենց իրաւունքները: Այս

պաշտօնական արձանագրութիւնները կար
դացողները պիտի կարծեն թէ՛ Հռովմէա-
կան աշխատող դասակարգերը ոճրա-
գործներ են: Իրողութիւնը այն է, սա-
կայն, որ ոճրագործները անոնք էին, որ
իրենց քարոզներով ու գրութիւններով
կ'որոտային աշխատող դասակարգերուն
դէմ, ու ոճրագործներէ աւելի ստոր
մարդեր կը վարձէին, որպէսզի պատմու-
թիւն գրէին ոճրառութիւն հայեցակէտէն:

Երբ Հռովմ քաղաքը շինւեցաւ, հռով-
մէացիները տակաւին արեւնակցական
խումբի սիստէմով կ'ապրէին. թէեւ է-
րիկ մարդեր կ'իներու վրայ կը գերիշխե-
ին, սակայն տակաւին քաղաքական ի-
րաւունքներու մէջ հաւասարութիւն կար
անդամներուն միջև: Աստիճանաբար սե-
փականատիրութիւնը եկաւ խորութիւն
դնել երկու հաւասար եղբայրներու մէջ.
այսպէս խեղճերը ստիպւեցան իրենց ի-
րաւունքները պաշտպանել աղնւականնե-
րու տիրապէտող, յափշտակող նպատակ-
ներուն դէմ, որոնք թէեւ դանդաղօրէն,
բայց անսահմի կերպով կը ձգտէին հա-
րըստութիւնները իրենց իրաւասութեան
ենթարկել:

Եւ ահա նորէն հռովմէական դործա-

ւոր դասակարգը բռնի ուժով ուզեց տի-
րանալ իր իրաւունքներուն: Վերջին մեծ
բարենստողութիւնները տեղի ունեցան
կրաչչի օրով 133-121 (Ք. Ա.) եւ Գա-
թալինի օրով 63ին (Ք. Ա.): Այս ա-
ռաջնորդները ուզեցին վերաբաժնել բո-
նի ուժով այն հողերը, որոնք ազարակա-
պաններէ յափշտակած էին բարձր դա-
սակարգին կողմէ: Բայց արդէն շրջան-
ներուն մէջ աշխատաւոր դասակարգերու
մեծամասնութիւնը սեփականագրկած էր
եւ շատեր նկարագրապէս այնքան ինկած
էին որ յաճախ կը կուէին այն բարեկար-
գութիւններուն դէմ, որոնք միայն ի-
րենց շահերուն համար կը պահանջէին:
Անոնք նոյնիսկ կը դաւաճանէին այնպիսի
առաջնորդներ, որոնք կ'աշխատէին ըն-
կերային բարենորոգութեան անիւր դէ-
պի ետ, զրկւած դասակարգի շահին նը-
պաստաւոր դարձնել: Կրաչչի եւ Գաթա-
լին արիւթոկրատ ոճրագործներէ սպան-
ւեցան: Հռովմէական ժողովրդական շար-
ժումը պարտութիւնով վերջացաւ, ինչ-
պէս եղաւ Սմերիկեան ժողովրդական
շարժումը երկու հազար տարի վերջը:
Տարբերութիւնն այն է որ՝ մինչդեռ Հը-
ռովմէական այդ շարժումը իր շարքե-

պաշտօնական արձանագրութիւնները կար
դացողները պիտի կարծեն թէ՛ Հռովմէա-
կան աշխատող դասակարգերը ոճրա-
գործներ են: Իրողութիւնը այն է, սա-
կայն, որ ոճրագործները անոնք էին, որ
իրենց քարոզներով ու գրութիւններով
կ'որոտային աշխատող դասակարգերուն
դէմ, ու ոճրագործներէ աւելի ստոր
մարդեր կը վարձէին, որպէսզի պատմու-
թիւն գրէին ոճրառիթ հայեցակէտէն:

Երբ Հռովմ քաղաքը շինեցաւ, հռով-
մէացիները տակաւին արենակցական
խումբի սիստէմով կ'ապրէին. թէեւ է-
րիկ մարդեր կ'իներու վրայ կը գերիշխե-
ին, սակայն տակաւին քաղաքական ի-
րաւունքներու մէջ հաւասարութիւն կար
անդամներուն միջև: Աստիճանաբար սե-
փականատիրութիւնը եկաւ խտրութիւն
դնել երկու հաւասար եղբայրներու մէջ.
այսպէս խեղճերը ստիպեցան իրենց ի-
րաւունքները պաշտպանել ազնւականնե-
րու տիրապետող, յափշտակող նպատակ-
ներուն դէմ, որոնք թէեւ դանդաղօրէն,
բայց ասպնջով կերպով կը ձգտէին հա-
րըստութիւնները իրենց իրաւասութեան
ենթարկել:

Եւ ահա նորէն հռովմէական դորձա-

ւոր դասակարգը բռնի ուժով ուզեց տի-
րանալ իր իրաւունքներուն: Վերջին մեծ
բարենորոգչութիւնները տեղի ունեցան
Կրաչչի օրով 133-121 (Ք. Ա.) եւ Քա-
թալիկի օրով 63ին (Ք. Ա.): Այս ա-
ռաջնորդները ուզեցին վերաբաժնել բո-
նի ուժով այն հողերը, որոնք ագարակա-
պաններէ յափշտակած էին բարձր դա-
սակարգին կողմէ: Բայց արդէն շրջան-
ներուն մէջ աշխատաւոր դասակարգերու
մեծամասնութիւնը սեփականագրկած էր
եւ շատեր նկարագրապէս այնքան ինկած
էին որ յաճախ կը կուէին այն բարեկար-
գութիւններուն դէմ, որոնք միայն ի-
րենց շահերուն համար կը պահանջէին:
Անոնք նոյնիսկ կը դաւաճանէին այնպիսի
առաջնորդներ, որոնք կ'աշխատէին ըն-
կերային բարենորոգութեան անիւր դէ-
պի ետ, զրկած դասակարգի շահին նը-
պատաւոր դարձնել: Կրաչչի եւ Քաթա-
լիկ արիւթոկրատ ոճրագործներէ սպան-
ւեցան: Հռովմէական ժողովրդական շար-
ժումը պարտութիւնով վերջացաւ, ինչ-
պէս եղաւ Ամերիկեան ժողովրդական
շարժումը երկու հազար տարի վերջը:
Տարբերութիւնն այն է որ՝ մինչդեռ Հը-
ռովմէական այդ շարժումը իր շարքե-

րու կողմէն դաւաճանեցաւ, Ամերիկեան
ժողովրդական շարժումը իր առաջնորդ-
ներէն լըւեցաւ: Հռովմէացի ժողովրդա-
կան առաջնորդները իրենց սկզբունքնե-
րու պաշտպանութեան համար հերոսօրէն
սպաննեցան. մինչդեռ ամերիկացի ա-
ռաջնորդները իրենց սկզբունքները
ծախեցին քաղաքական աւարներու
փոխարէն: Երկու շարժումներն ալ
ճակատադրւած էին պարտելու, եթէ
նոյնիսկ չդաւաճանէին, որովհետեւ ա-
նոնք կը գործէին ընկերային բարենորո-
շութիւններու սկզբունքին հակառակ:
Անոնք միայն քաւեցին մարդկային ըս-
կզբնական «մեղք»երը, որոնք ծնած էին
էրիկ մարդերու կիներու դէմ ունեցած
յեղափոխութենէն ու զանոնք կալանաւո-
րելէն: Կուրութիւն ու անփորձութիւն
պիտի ըլլար մտածել թէ՛ մարդեր կըը-
նային ազատիլ այս սկզբնական «մեղք»ե-
րէն, պարզապէս կողոպուտը բաժնելով,
որի համար այս «մեղք»երը ծնած էին,
առանց աշխատելու վերաբաժնել սեփա-
կան հողերը, մասնաւոր սեփականութիւ-
նը բաժնելու նպատակով, եւ ասիկա չէր
կրնար ըլլալ առանց օժանդակութեանը
այն դասակարգերուն, որոնք ամենէն ա-

ւելի տանջւած էին սեփական ստացւածքի
համար: Բայց այս հասկացողութիւնը
չունէին այն դասակարգերը, որոնց կը
պատկանէին Ամերիկեան եւ Հռովմէական
ժողովրդականները (populist):

Դիւրին էր ընկերային հարստութեան
ու ուժին հսկել, երբ տակաւին մարդեր
պղտիկ խումբերով կ'ապրէին. բայց ան-
զամ մը որ այս քայլը առնուցաւ՝ ընկե-
րութիւնը ինքզինքը դրաւ անծանօթ օ-
րէնքներու լուծին տակ: Եւ աս օրէնքնե-
րը վճռեցին թէ՛ հազարաւոր տարիներու
սառսպագին պայքարները պէտք էր անց-
նէին մինչեւ որ ծնէր այն դասակարգը,
որ պիտի ունենար ուժն ու հասկացողու-
թիւնը բառնալու համար անէծքը և մարդ-
կութիւնը ազատագրելու համար անոր ճի-
րաններէն: Այս դասակարգը ներկայ դը-
րամատիրական ցեղերու ձեռքէն սեփա-
կանագրիւած դասակարգն է, ամէն դրա-
շումներու մէջ, կին ու էրիկ մարդ, ո-
րոնց գոյութեան պահպանումին միակ
միջոցն է իրենց մարմինի աշխատող ու-
ժը, եւ որոնց կը պատկանի ո՛չ հողը եւ
ո՛չ արտադրութիւնը, եւ որոնք կ'ապրին
միայն շնորհով կամ իրենց ուժը գործա-
ծելով աէրերուն համար:

Օգոստոսի օրով Հռովմէական կայսրութեան մէջ միլիօնաւոր սեփականազուրկներ կային, բայց անոնց եւ ներկայ սեփականազուրկներուն մէջ աչքառու տարբերութիւններ կան: Հռովմէական քաղաքացիներէն, այո՛, մաս մը կար, որ փճացած էր զինուորական ծառայութեան մէջ. կային մարդէ՛ր, որոնք օտար ազութիւններու կը պատկանէին եւ սովամահաւթեան ու ծառայութեան լուծին տակն էին, բայց չէին բռնադատուել ըստ ըրուկներ ըլլալու, որովհետեւ իրենց տէրերուն համար նպաստաւոր էր թոյլ տալ որ անոնք երկարէին իրենց կեանքը կարելի եղածին չափ:

Հռովմէացի սեփականազուրկներ ինքըզինքնին աւելի վեր կը դասէին քան ուրիշ սեփականազուրկներ, որովհետեւ անոնք տակաւին քաղաքական գոնէ աննշան իրաւունքներ ունէին. մինչդեռ գերիներ ուրիշ ցեղերու մուրացկան աղատ-մարդերը (freemen) ոեւէ ձայն չունէին Հռովմէական կայսրութեան մէջ: Իտալական թերակղզիին մէջ միշտ աճելով գերիներութիւը, աշխատաւորութիւնը Հռովմէական քաղաքացիներու այրին տեսակ մը ստորնութեան, ամօթի հոմանիշ դարձաւ: Այն

ատեն զրկւած հռովմէացին աւելի նախընտրեց ապրիլ ծախելով իր քէն քաղաքադէտներու, կամ ընդունիլ ազնւականներու շնորհը, անոնց գործերը կատարելով: Սեփականազուրկներու այս դատակարգը միշտ հարուստներու կողմնակից էր եւ կը կուէր զրկւածներու յեղափոխութեան դէմ, երբ առիթը կը ներկայանար, մինչեւ որ, վերջապէս, հասրտութեան դանձարանները բացւէին իր առջև:

Ուրիշ ազգերու աղքատ քաղաքացիները բնա՛ւ չէին սիրեր հռովմէացի ազնւականները, որոնք սահմանակից հրոսակներէն աւելի կը ճնշէին ու կը կեղեքէին իրենք: Անոնք կ'ատէին հռովմէացի զինուորներու պաշտօնատարները եւ ընդհակառակը շատ կուրախանային երբ առիթ մը գտնէին անոնց վնասելու, առանց վտանգելու իրենց կեանքը: Սակայն այս դատակարգը շատ վտանգաւոր չէր Հռովմէական կայսրութեան, որովհետեւ որսչ նպատակներ ու ձգտումներ չունէր:

Ազնւականութեան ու սեփականատիրութեան տեսակէտէն Հռովմէական կայսրութեան համար ամենէն վտանգաւորը ստրուկներու դատակարգն էր: Անոնք Մ. Նահանգներու նէկրօ ստրուկներուն պէս

կիներ ու էրիկ մարդեր չէին, այլ շատերը հռովմէացի ժողովուրդի հաւատարակիցներ էին, ամէն կերպով յարգւած: Շատ ստրուկներ այնքան լաւ դարգացած էին որքան հռովմէացի ամենէն բարձր ազնււականները. եւ անոնց մեծամասնութիւնը զիտակից մարդեր էին, որոնք նշանի մը վրայ կրնային ամենակատաղի կերպով պայքարիլ: Այն արհամարհանքը, որ հրովմէացիներու կողմէն դէպի այս մարդերը կը նետւէին, կը գրգռէր այս ըստըրուկներու բնաստրութիւնները: Փախուստներ, ծովահնէիներու դէմ կռիւնէր, անձնասպանութիւններ անոնց օրական զբաղումները կը կազմէին: Ձինւած ազդ մը պէտք էր այս տարրը զսպելու համար:

Բայց ներքին վտանգը չէր միայն որ կը խռովէր Հռովմէական կայսրութիւնը: Կային տակաւին ազնւականներու կռիւնները իրարու դէմ, որ հեազհետէ կ'աճէին. նոյնպէս զինւորական ցեղերը, որ Հռովմէական նահանգներու սահմաններուն վըրայ կը բնակէին, միշտ կ'արշաւէին ու կը ստիպէին հռովմէական լէգէոնները միշտ լարւած մնալ: Տակաւին, նոր պարտւած պետեր ալ անձիգ կերպով չէր որ կը համակերպէին, նոյնպէս անոնց ընտա-

նիքները, հետեւորդները կամ հակառակորդ պետերը, որոնք Հռովմէական տիրապետութեան կեանքը տաժանելի կը զարձնէին:

Գերիներու մեծամասնութիւնը ուրախ պիտի ըլլար եթէ կարենար ետ, իր ժողովուրդին դառնալ, բայց կային հեռատես մարդեր ու կիներ ալ, որոնք զիտէին թէ՛ Հռովմը այդ ժամանակաշրջանի աշխարհատէր ուժն էր եւ թէ՛ պէտք էր զայն տասպալել ազատութիւն ձեռք բերելու համար, եւ սակայն ասիկա ահուկ լիօրէն զժւար էր: Հռովմէական աշխարհին մէջ միակ տարրը, որ այս ազատութեան հրամայական անհրաժեշտութիւնը կը զգար, այդ գերի սեփականազուրկն էր:

Ուրիշ ազդութիւններու հպատակ պետեր, որոնց թոյլատրւած էր Հռովմէական տիրապետութեան մէջ երկրորդական դեր խաղալ, կը փափաքէին որ Հրովմէական տիրապետութիւնը տասպալէի, այն նպատակով որ իրենք անցնին անոր տեղը եւ ժողովուրդը զեկալարեն իրենց հաշիւին: Այս պետերը կրցան իրենց հետեւորդներէն բաւական թիւով մարդեր «հայրենասիրական» յեղափոխու-

թեան մղել Հռովմի դէմ. բայց անոնք ալ (պետերը) ամենապղտիկ օգուտ մը չունեցան պրօլէտարիատը հաստատելու գործին մէջ, իբր աշխարհի ուժը: Անոնք անգամ մը որ հասկցան սեփականազուրկներու ծրագիրները, անմիջապէս անցան հըռովմէացի տիրողներու կողմը, իբր հակառակորդ պրօլէտարիատին:

Օտար պետերու այս արարքը պատճառ դարձաւ որ իրենց մուրացկան ժողովուրդին աչքերը բացուին: Հետզհետէ բոլոր ազգերու հեռատեսները հասկցան թէ՛ որքան որ իրենց շահը կը պահանջէր տապալումը Հռովմէական տիրապետութեան նոյնքան ալ անհրաժեշտ էր անկումը իրենց մատնիչ պետերու ղեկավարութեան:

Բայց ահազին դժւարութիւններ ծագեցան անմիջապէս, որովհետեւ միջազգային հասկացողութիւն մը պէտք էր ամբողջ սեփականազուրկներուն մէջ: Գրեկ կարդալ քիչեր ղիտէին եւ այսպէս յեղափոխականներու մէջ եղած հաղորդակցութիւններու ամենէն վստահելի միջոցը բերանէ բերան լսած խօսքերն էին: Այս ձեւով միջազգային յարարութիւն մը ձանձրալի ու աննպատակալարմար էր, որովհետեւ գաղտնի յարարերութիւններ

բու համար միջոցներ պէտք էր գտնել. իսկ ատիկա միայն լատին լեզուով կրնար ըլլալ. հետեւաբար պէտք էր տարածել լեզուն, կարենալ տարածելու համար սեփականազուրկութեան ծրագիրներն ու հըռովմէական կեանքի պայմաններն ու մէթոտները: Բայց Հռովմէական կայսրութիւնը տարածեց իր ուժը եւ դնաց կանգնումի ու տապալումի ճամբայէն աւելի արագ քան միջազգային սեփականազուրկ յեղափոխութեան գաղափարը: Իսկ բարբարոս ցեղերու մշտական արշաւանքները, ինչպէս նաեւ հըռովմէացի ու օտար ազնւականներու յարակալ կռիւները իբրարու դէմ, մեծապէս ձփանդակեցին պրօլէտարիական շարժումի միացումի գործին:

Զինւած պրօլէտարիատին առջեւ ստիպումն ու յարուցած դժուարութիւնները այնքան յուսահատեցուցիչ էին որ անոնց մէջ տիրող ղեկավարողի ողին այլևս չէր կրնար հանդուրժել եւ շատ անգամ կատաղի յեղափոխութիւն կ'առաջացնէր: Եւ արդիւնքը այն կ'ըլլար որ նոյնիսկ առանց միացած ուժերու, հըռովմէական դրութիւնները մէկ անգամէն տապալելու յանդուգն յոյսը կ'ունենային:

Թեան մղել Հոովմի դէմ. բայց անոնք ալ (պետերը) ամենապղտիկ օգուտ մը չունեցան պրօլէտարիատը հաստատելու գործին մէջ, իբր աշխարհի ուժը: Անոնք անգամ մը որ հասկցան սեփականագուրկներու ծրագիրները, անմիջապէս անցան հըռովմէացի տիրողներու կողմը, իբր հակառակորդ պրօլէտարիատին:

Օտար պետերու այս արարքը պատճառ դարձաւ որ իրենց մուրացկան ժողովուրդին աչքերը բացւին: Հետզհետէ բոլոր ազգերու հեռատեսները հասկցան թէ՛ որքան որ իրենց շահը կը պահանջէր տապալումը Հոովմէական տիրապետութեան նոյնքան ալ անհրաժեշտ էր անկումը իրենց մատնիչ պետերու ղեկավարութեան:

Բայց ահագին դժարութիւններ ծագեցան անմիջապէս, որովհետեւ միջազգային հասկացողութիւն մը պէտք էր ամբողջ սեփականագուրկներուն մէջ: Գրեկարգալ քիչեր գիտէին եւ այսպէս յեղափոխականներու մէջ եղած հաղորդակցութիւններու ամենէն վստահելի միջոցը բերանէ բերան լսած խօսքերն էին: Այս ձեւով միջազգային յարաբերութիւն մը ձանձրալի ու աննպատակաշարժար էր, որովհետեւ գաղտնի յարաբերութիւններ

րու համար միջոցներ պէտք էր գտնել. իսկ ատիկա միայն լատին լեզուով կրնար ըլլալ. հետեւեալ պէտք էր տարածել լեզուն, կարենալ տարածելու համար սեփականագրկութեան ծրագիրներն ու հըռովմէական կեանքի պայմաններն ու մէթոտները: Բայց Հոովմէական կայսրութիւնը տարածեց իր ուժը եւ դնաց կանգնումի ու տապալումի ճամբայէն աւելի արագ քան միջազգային սեփականագուրկ յեղափոխութեան գաղափարը: Իսկ բարբարոս ցեղերու մշտական արշաւանքները, ինչպէս նաեւ հոովմէացի ու օտար ազնւականներու յարակայ կռիւները իրարու դէմ, մեծապէս ձեռնդակեցին պրօլէտարական շարժումի միացումի գործին:

Զինւած պրօլէտարիատին առջեւ ստիպումն ու յարուցած դժուարութիւնները այնքան յուսահատեցուցին էին որ անոնց մէջ տիրող ղեկավարողի ոգին այլեւս չէր կրնար հանդուրժել եւ շատ անգամ կատաղի յեղափոխութիւն կ'առաջացնէր: Եւ արդիւնքը այն կ'ըլլար որ նոյնիսկ առանց միացած ուժերու, հոովմէական դոմիթիւնները մէկ անգամէն տապալելու յանդուգն յոյսը կ'ունենային:

Քրիստոսէ առաջ 149ին, Սպանիայի մէջ հռովմէական ստրուկները, Վիրիաթիւսի ղեկավարութեան տակ, կատաղի ըմբոստութիւն մը հանեցին ճնշող լուծը թօթափելու համար ու յաղթեցին հռովմէական լէգէոններուն շատ մը կէտերու վրայ. սակայն հռովմէական ուժին համար շատ դիւրին էր յեղափոխութիւնը կղզիացնել ու ջլատել: Բաղձացած ազատութեան փոխարէն հազարաւոր գերիներ փոռեցան կռիւի դաշտին վրայ եւ հազարաւորներ ալ խոշտանդեցան: Նոյն ճակատագիրը վիճակեցաւ այն գերիներուն, որոնք, էննիւսի ձեռքին տակ, Սիկիլիայի մէջ ըմբոստացան 140-ին (Ք. Ա.): Կը պատմւի թէ՛ 20,000 հոգի սպանեցան Հռովմէական բռնակալութեան ձեռքով: Այս ջարդերուն իբր վրէժխնդիր, Սպարթաքուս 74-ին (Ք. Ա.) դուրսն անցաւ, Հարաւային Իտալիայի մէջ, փախստական գերիներու բանակի մը: Ամբողջ չորս տարի ան կռիւ մղեց հռովմէական լէգէոններուն դէմ եւ տասը պատերազմներու մէջ ջախջախեց անոնք, մինչեւ որ վերջապէս Հիւսիսային Իտալիայի մէջ իր ուժերն սպառեցան: Այս հերոսական պայքարն ալ իր նախորդներուն պէս վերջացաւ: Գե-

րիներու այս ըմբոստութիւններու արդիւնքը եղաւ անոնց մէջ եղած կազմակերպութիւններու կապը, որոնք թէև անգրթօրէն սպաննեցան ու տապալեցան, երբ յայտնեցան: Մինչեւ անգամ ազատ գործաւորներու կազմակերպութիւնները ապօրինի յայտարարեցան, որոնք վաւերացած էին արդէն Հռովմէական պետութեանէն:

Սպարթաքուսի նւաճումէն վերջ գերիները հասկցան թէ պարապ բան է այս մեթոտով կռիւ Հռովմի դէմ, ուստի բոլոր կազմակերպութիւնները որդեգրեցին ծայրայեղ գաղտնապահութեան սխառտմը: Կարգախօսներ, նշաններ, ցուցմունքներ որդեգրեցին ու յանցագործութիւնները պատժեցին անմիջական մահով: Այս կազմակերպութիւններու զլխաւոր նպատակը եղաւ ամենէն աւելի ուժ տալ միջազգային սեփականազուրկներու մէջ դադափարը տարածելու: Այս գաղափարը ողբերոց ստրուկ-ըմբոստներու ղեկավարները, եւ անոնց արիւնը ներկայանալու մը եղաւ ամէն անոնց, որոնք պրոծած էին Հռովմէական մոլեգնութեանէն:

Բայց խկապէս այս վիճակը շատ աւելի յուսահատական եղաւ քան երբէք: Ո՛չ

քաղաքական իրաւունք, ո՛չ զէնք կրելու արտօնութիւն, ո՛չ հասարակաց դումարումներու հնարաւորութիւն, ո՛չ կուռ կազմակերպութիւն, միայն ցանցիւր ու դաղանի խումբեր, առանց պէտք եղած կապակցութիւններու: Աս էր այն պատկերը, որի տակ հռովմէացի պրօլէտարիատը պարտաւորւած էր աշխատիլ իր իտէալին ու ազատ աշխարհին համար:

Որոշ էր թէ այս իտէալը կարճ ժամանակի մէջ չէր կրնար իրականանալ, թէ երկար ու համբերատար պատրաստութիւն պէտք էր տարածելու համար միջազգային նոյն ըմբռնողութիւնը եւ թէ պէտք էր ապրելու հնարաւորութիւն — եթէ ոչ աւելին — պատրաստելու համար կոխի: Ստրուկներէն շատեր, որոնք նախապաշարւած հակումներ ու ճակատագրապաշտ հակումներ ունէին, կը տարակուսէին այս ձեռնարկի իրականացումի մասին, առանց աստուածներու օգնութեան:

Բայց ճանչցւած աստուածներէն ո՞ր մէկըն էր, որ պիտի ուզէր ստրուկ դասակարգին, հռովմէացի սեփականազուրկին կողմը կանգնիլ: Այո՛, շատ մը աստուածութիւններ կային, Հռովմէական տիրապետութեան հպատակ բոլոր ազգութիւն-

ները տարբեր տարբեր աստուածներ ունէին, իսկ հռովմէացի տիրողներն ալ, իրենց կարգին, շատ ճարպիկ էին դիտնալու համար թէ՛ այդ պաշտած աստուածներու ու աստածուհիներու, հայրապետներու ու մայրապետներու ազդեցութիւնը շատ մեծ է, ու ահա շքեղ խորաններ կանգնեցին ու յարգւեցան անոնց հաւատացողներուն կողմէն. այսպէս ստեղծեցին աշխարհային կրօն մը, յուսալով որ անով կրնան տակաւին ասպնդուիլ:

Շատ պարզ է որ այս աստուածութիւններն ալ ոեւէ շահ չունեցան պրօլէտարիատի նպատակներուն մէջ: Հին աստուածներն ու աստածուհիները, այդ ազդերու դաւաճան քահանաներուն ու պետերուն պէս, միշտ Հռովմէական տիրակալութեան կողմը բռնեցին: Եթէ ոեւէ աստուածի մը կողմէ օժանդակութիւն մը դար, այն մէկը անձանօթ էր պրօլէտար դանդաւածին եւ անոր պիտի դառնային առանց ցեղի խտրութեան ու պիտի կուէին հրռովմէական զօրութիւններու ու աստուածներու դէմ, որ իրենք լքւած ու ծայրայեղ կարօտութեան մատնած էին:

Գտնուեցան շատ դերիներ ալ, որոնք ուէ պատուածի չհաւատացին. բայց արքայա-

կանները վերջապէս միջոց մը ունէին կը-
րօնքի անունով պահելու տառապող տը-
գէտներ: Ասիկա հռովմէացի տէրերու
մէկ ճարպիկութիւնն էր, որով անոնց աչ-
քերուն առջեւ կը քօղարկէին ճշմարտու-
թիւնը: Երկրպագութեան կհրաւիրէին
այդ խեղճերը անոնց յեղափոխական գոր-
ծը քանդելու համար: Սեփականազուրկ-
ներու ամենակարող մէկ աստեածը պէտք
էր, որ կուէր միւս աստեածներուն դէմ,
ու եթէ ասիկա պատահէր, այն ատեն հը-
ռովմէացի զինւորներն յաւանոր կողմը
պիտի անցնէին ու պիտի երկրպագէին
նոր աստեածին եւ այս պարագային էր որ
Հռովմը պիտի հարւածէր:

Քաղաքական նպատակներով խորաններ
կանգնելով միւս աստեածներուն, հռով-
մէացի տէրեր իրենց աստեածները կը
բարձրացնէին հռովմէացի զինւորներու
աչքին եւ այսպէս կը խորունկցնէին ան-
գունդը նոր կարգերու ու հռովմէական
լէգէոններու հակումներու մէջ: Միւս
կողմէն անկարելի էր միջազգային կայս-
րութիւն մը հաստատել առանց օտար
գործաւոր դասակարգը մօտիկ յարարե-
րութեան մէջ գնելու հռովմէացի զինւոր-
ներուն հետ: Եթէ նոր կրօն մը կրնար ա-
նոնք միացնել, հոգ չէ թէ այդ կրօնը ա-

նոնք աւելի ստորնացնէր կամ բարձրացը-
նէր. ուրեմն պէտք էր անջրպետ մը բա-
նալ սեփականազուրկներու եւ զինւորնե-
րու մէջտեղ: ...

Հին առասպելի մը համաձայն, աստեած-
ները երկիրի վրայ իջան ու գործօն բա-
ժին մը վերցուցին մարդկային գործե-
րուն մէջ: Եթէ մինակ սեփականազուրկ-
ներու պաշտպան աստեած մը գտնէր ա-
նոնց մէջ, հռովմէացի զինւորներէն շա-
տերու սուրերը կրնային դառնալ հռով-
մէացի տէրերուն դէմ ու այն ատեն սե-
փականազուրկները բարեկամներ պիտի
ուսնային թշնամի բանակին մէջ:

Այս տեսակ դադափարներ քիչ թէ շատ
ներշնչւած էին Օգոստոսեան ժամանակա-
շրջանի սեփականազուրկներու մէջ: Եւ,
սակայն, մինչդեռ հազարաւոր կորովի
ու լուսամիտ անհատականութիւններ ըս-
տեղծած էին ընկերային յեղափոխութիւ-
նը իրենց մահին գինով, անդին միլիօններ
ալ յուսալքեր էին մտածելով որ այդ
աստեածները կրնային փշրել իրենց շրջ-
թաները եւ յաղթահարել տէրերը, եթէ
ուզէին: Այսպէս, յեղափոխութեան խա-
րոյկները կը հրահրէին դադափարէն՝ ըս-
պատելով այն շունչին, որ պիտի բոր-
բոքէր անոնք ապրող բոցերով:

IV

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՊՐՕԼԷՏԱՐԻԱՏՆ ՈՒ

ԻՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Օգոստոս կայսեր գահակալութենէն քիչ առաջ, հռովմէացիներէն նւաճւած երկիրներուն մէջ կը գտնէր Պաղէստին կամ Հրէաստանը: Հսկաներու երկիրն էր ան. ազդ մը, որ հազար տարի հին էր քան հռովմէացիները: Մինչդեռ դրեթէ 750 տարի վերջ հռովմէացիներ նահապետականութենէն հեթանոս նստակեաց կեանքի մը կը փոխանցէին, հսկաները արդէն վաղուց հռովմէացիներու նւաճումին ատեն այս փոխանցումը կատարելապէս ունեցեր էին: Յեղական աւանդութիւնները աւելի ամրացեր էին հսկաներուն մօտ քան հռովմէացիներուն:

Երբ որ Հռովմը շինեցաւ, հռովմէացիները մինակ ներքին ազդութիւններով շրջապատւած էին, որոնք շատ դիւրութիւնով նւաճեցին ու զատեցին: Բայց հրէաները, իրենց սկզբնաւորութեան մէջ իսկ շրջապատւած ըլլալով շատ մը զօրաւոր ազդութիւններէ, ստիպւած էին կազմակերպել այս շրջապատին մէջ, եւ շատ անգամ պարտաւորւած էին կուրի այս ազդութիւններուն դէմ:

Ամէն նախացեղային ազդութիւններու պէս հրէաներն ալ իրենց տասներկու ցեղերով սերեցան պարզ նախահայրէ մը: Իրողութիւն է թէ այս նախահայրը մարդ մըն էր, Աբրահամը: Ապացուցւած է թէ հրէական ցեղերու ճիւղերը կը հասնէին մինչեւ այն ժամանակին, ուր Աբրահամի նախահայրերը անցուցած էին արդէն մայրի հաւասարութենէն հայրի տիրապետութեան փոխանցումի շրջանը:

Հրէական աւանդութիւնը կրսէ թէ Օգոստոսէն 1900 տարի առաջ Աբրահամ դադրած էր Քաղդէայէն: Եւ աս աւանդութիւնը, հռովմէական տիրապետութեան ժամանակ, այնքան թարմ էր տակաւին որ ամէն հրէայ ծանօթ էր իր տոհմային ճիւղաւորումին (family tree) եւ

չատ ուրախ՝ ցեղային հին ռամկավարու-
թեան համար: Եթէ Պաղեստինի աշխար-
հադրական դիրքն ու պատմական շրջա-
պատը հրէաները ուրիշ ազգութիւններու
ձեռքին մէջ խաղաղնդակ մը դարձուցին,
այդ միեւնոյն ատեն պատճառ դարձաւ որ
անոնց արդիւրի հարստութեան ընդարձակ
միջոցներ ընձեռել, մանաւանդ Հռովմէա-
կան ճնշիչ կառավարութեան տակ: Հրէա-
կան դանդաճը, տակաւին ինքզինքը եզ-
բայրի պէս հաւասար կը դղար, որովհե-
տեւ իրենց խնայողական պայմանները ա-
ւելի նման էին իրարու քան հռովմէացի-
ներունը, եւ անոնք ուրիշ ոեւէ ազգու-
թեան սովորութիւնները չէին օրինակեր
երբէք:

Հրէաներու նախահայրական աւանդու-
թիւնները շաղկապւած էին միակ աստեա-
ծի մը պաշտամունքին հետ: Այս էր որ
կը զանազանէր զանոնք միւս բոլոր ազգու-
թիւններէն: Հին աւանդութիւնը կրտէ թէ՛
Աբրահամ Քաղկէդայէն փախաւ կոստալա-
տութեան ձեռքէն: Իրմէն 3500 տարի վեր-
ջի մաքրակրօններուն (puritan) պէս ան
ալ տեղափոխւեցաւ ընկերային կազմաւո-
րութեան աւելի մէկ խոնարհ մէկ մակար-
դակին վրայ, հեռու ըլլալու համար եր-

կըրպազութեան ճնշող տիրապետներէն,
որոնք միշտ կ'աճին բացարձակ կոստալա-
տութեան եւ դասակարգային տիրող պե-
տութեան հետ: Եւ հրէաները պաշտեցին
այս աւանդական աստեածը ցեղային յատ-
կանչական յամառութիւնով:

Անոնք երկրպագեցին անոր իրենց զե-
րութեան ատեն Եզիպտոսի մէջ, Հռովմէ-
ական արչաւանքէն զրեթէ 1400 տարի ա-
ռաջ: Անոնք պաշտպանեցին զայն եւ ի-
րենց ցեղային սովորութիւնները ցեղային
ռազմապետներու (war-chiefs) հրովար-
տակներու գէմ, որոնք փորձեցին թագա-
ւորական ձեւեր առնել. երբ ասաներկու
ցեղեր այլեւս վերջապէս երկրազորական
կեանքի մը մէջ հասած էին: Եւ, երբ Դա-
ւիթէն վերջ տիրողներու ժառանգական
յաջորդութիւնը սկսաւ, ժառանգական
կղերներու օժանդակութիւնով, ժողո-
վուրդը կրկին ու կրկին համախմբւեցաւ
օգնելու անոնց, որ կ'ուզէին փրկել կազ-
մակերպութեան հին ձեւը եւ ռամկավա-
րական պաշտամունքը իրենց աստեածին:
Այս հին վերակազմողները կամ մարգա-
րէնները իրենց ցեղային աստեածի անու-
նով ճօճեցին գաւազանը կղերներու եւ
թագաւորներու գլուխին, եւ իրենց ազ-

դեցուծիւնը այնքան առաջ դնաց, որ ասու-
րեցուց հին սովորութիւններն ու աւան-
դութիւնները: Ուրիշ ազգութիւններու
արչաւանքներն ալ նոյնպէս հրէաներուն
մէջ կասեցուցին քաղաքական դասակար-
գային (class-state) կազմաւորութեան
զարգացումը:

Երբ սուրիացիներու եւ ասորեստանցի-
ներու դէմ շատ մը պայքարումներէ վերջ՝
հրէաները (Ք. Ա.) 586-ին Նաբուզոդո-
նոսորի կողմէ նւաճեցան եւ իբր դերի
Բաբելոն տարեցան, իրենց ցեղային կազ-
մակերպութիւնն ու աստուածապաշտու-
թիւնն ալ հոն տարին իրենց հետ, մինչեւ
որ ասորեստանցիները յաղթեցան պար-
սիկներէն եւ անոնք վերադարձեցան ի-
րենց տեղը ու (Ք. Ա.) 520-ին վերջինե-
ցին իրենց տաճարը: Վերջին հրէան իսկ
Բաբելոնական դերութենէն վերադարձաւ
453-ին (Ք. Ա.):

Բայց շուտով հին, ներքին դժւարու-
թիւնները սկսան կրկին: Դրամատիրական
եւ կղերականութեան աշխատակրատ մէկ
դասակարգը ուղեց տիրանալ ցեղային եզ-
րայրութեան: Ք. Ա. 140-ին արխատակրա-
տութիւնն ու կղերականութիւնը միա-
ցան, Սիւմօն Մաքսպուսը ժառանգական

իշխան եւ քահանայապետ ընելու համար,
եւ այսպէսով իրենց դաշնակցութիւնը
կնքեցին ցեղակից հասարակ անդամնե-
րուն դէմ: Այսպէս, ցեղային աստուածը ե-
ղաւ արխատակրատ աստուած մը, ճիշտ
միւս ազգութիւններու աստուածներուն
պէս, որոնց մէջ հարուստի ու աղքատի
խտրութիւնները դասակարգային պայ-
քարներ առաջացուցին:

Բայց հրէայ ժողովուրդը այնքան ալ
զիւրին չլքեր իր հին աւանդութիւնները:
Հակառակ դասակարգային շերտաւորու-
մի աճումին հռովմէական նւաճումի ա-
տենները տակաւին անոնք աւելի ազատու-
թիւն ունէին հաւաքումի ու խօսքի քան
Հռովմի մէջ, որովհետեւ հռովմէացի տի-
րապետողներ քիչ անդամ կը միջամտէին
իրենց նւաճած ժողովուրդներու ներքին
դործերուն, կը բաւէր որ տրւած հրաման-
ներուն եւ հարկերու վճարումին կատա-
րելապէս դոհացում տրւէր. ու հրէաները
այս սահմանադժւած ազատութիւնը սր-
հեցին մինչեւ Երուսաղէմի կործանումն
ու ազգութեան ամբողջական նւաճումը:

Հրէաները այնքան կամակատարօրէն ալ
չ'ընդունեցին իրենց ցեղային աստուածի
փոխանցումի դադալարը արխատակրա-

տութեան մէջ: Եւ երբ Մաքապիներու արքայական կռիւները տեղի տւին Հռովմէական արշաւանքին, հրէայ ժողովուրդը այս դէպքերը նկատեց իրր պատիժ իրենց ցեղային աւանդութիւններու դայրոյթէն բղխած:

Պատմական այս դէպքը որոշ օրէնքներ ծնաւ եւ որոնք չէին կրնար անոնց միտքին մէջ տեղ բռնել, որովհետեւ անոնք իրենց հասկացողութեան մէջ սահմանադժւած էին իրենց անցեալ պատմութեան ու շրջանակին պատճառով: Ժողովուրդներու համար բնական է իրենց կեանքին մէջ միշտ դէպի ետ նայիլ քան առաջ, և սպասել նոր մարգարէի մը գալուստին, որ հաշւեցնիչը պիտի ըլլար արիստոկրատ ղեկավարներու ու քահանաներու եւ միեւնոյն ատեն պիտի թօթափէին Հռովմէական գերիշխանութեան լուծը: Անոնք անդրադարձան իրենց հին մարգարէներու դրածներուն եւ դտան թէ՛ անոնց մէջ ուրիշ մարգարէի մը գալուստը նախագուշակած էր: Իսկ Հռովմէական տիրապետութեան եւ իրենց երկրացի հարուստներու էշխող դիրքը աւելի դառնացուց իրենք ու պատճառ դարձաւ որ նոր մարգարէին մօտաւոր գալուստի գաղափարը ա-

ւելի ամրապնդւի:

Այսպէս, հրէաներու ազգային յեղափոխութեան ճամբան հարթեցաւ. բայց յաջողելու համար, ազգային այս յեղափոխութիւնը պէտք էր պատնէշէր Պաղեստինի ամբողջներու ետին: Հռովմէական կայսրութիւնը պիտի յարձակէր իրենց վրայ եւ ասիկա շատ մը հրէաներ պայծառօրէն կը տեսնէին, բայց հաւատքը այս դժուարութիւնը այնքան մեծ էր ցուցադրեր: Միթէ իրենց աստուածը լուսեղէն սիւնով մը չէ՞ր առաջնորդած իրենք, երբ բոլորովին կորսւած էին, եւ չէ՞ որ իրենք միշտ հաւատարիմ մնացեր էին անոր: Անոր համար, եթէ ուզէր, շատ դիւրին էր չքացնել Հռովմը: Ու այսպէս անոնք չմտաբերեցին միջազգային իրաւազուրկներու գաշնակցութիւն մը կազմել. եւ յեղափոխութիւնը եղաւ զուտ հրէական դործ մը:

Անոնք անդիտացան թէ՛ Հռովմէական կայսրութեան մէջ միլիօնաւոր իրաւազուրկներ անձկագին կը սպասէին այդ տեսակ աստուածի մը գալուստին: Այդ իրաւազուրկներուն մէջ կային նաեւ շատ հրէաներ, որոնք իրր գերիներ տարւած էին Հռովմ եւ որոնք իրենց պէս տանջող-

ներու հետ կը ծառայէին եւ կամ հռովմէ-
ացի ժողովուրդը կը զբօսցնէին իբր սու-
սերամարտիկներ: Պաղեստինի հրէանե-
րուն մեծամասնութիւնը, իրենց սահմա-
նազօւած հորիզոնով, հեռու էին ըմբռո-
նելէ թէ՛ իրենց այդ ազգային յեղափո-
խութիւնը ընկերային բարեկարգումի
գործին մէջ միայն քայլ մը կրնար ըլլալ
դէպի ետ եւ թէ ճնշող չարիքներէն ազա-
տելու համար միջազգային իրաւա-
զուրկներու նպատակները պէտք էր հե-
տապնդէին:

Բայց եթէ նոյնիսկ անոնք չմտածեցին
այդ բանը, «գալոց» մարդարէն ալ իրա-
ւազուրկ յեղափոխականներու օգուին չը-
բաւ բան մը գոյծաւորական իր. սուտնքին
համար: Հին մարդարէներու մշտասաց
բառերը իր բերանէն լուեցան աշխարհի
յեղափոխութեան մասին: Ու եթէ հրէա-
ները չկրցան ըմբռնել այս բառերուն ի-
մաստը, Պաղեստինէն դուրս միլիօններ
դանւեցան, որ սրտարաց ընդունեցին հը-
րէայ մարդարէին առաքելութիւնը:

Յեղափոխական նախազուշակումնե-
րով յղի այս մթնոլորտին մէջ էր որ Յի-
սուս, Նազարէթցի Յովսէփի որդին, Դա-
ւիթի մէկ ուզղակի շառաւիղը, ծնաւ: Տը-

ղան մեծցաւ իր ժողովուրդի աւանդու-
թիւններուն մէջ: Ան արթուն էր եւ մաս-
նաւորապէս հետաքրքիր իր ժողովուրդի
պատմութիւնը ուսումնասիրելու: Իր ըն-
տանեկան պարագաներու բերումով մօ-
տիկ յարարերու թիւն ունեցաւ այնպիսի
այրերու ու կիներու հետ, որոնք քահա-
նայութեան դազանիքները գիտէին, լը-
սեց ու տեսաւ շատ բաներ, որոնք իր աչ-
քերը բացին այն մեթոսներու մասին, ո-
րոնցմով քահանաները կը կուրացնէին
ժողովուրդը: Սովրեցաւ շատ մը ձեռնա-
ծութիւններ, որոնց մէջ տգէտ ժողովուր-
դը դերուժ մը կը տեսնէր, եւ իր խորա-
պէս կրօնական միտքը համոզւեցաւ թէ՛
ճշմարիտ աստուած մը պէտք է, աւելի
մեծ քան հրէաներու աստուածը:

Երբ աւելի մեծցաւ, ծանօթացաւ Պա-
ղեստինի մէջ դանւող յեղափոխական
դադանի կազմակերպութիւններուն: Համ-
աշխարհային յեղափոխութեան դադա-
փարը հետզհետէ, բարեկամէ բարեկամ
ներմուծւեցաւ հրէաներուն մէջ, որ յա-
րարերութեան մէջ էին Իտալիայի պրօ-
լէտարիատներուն հետ: Յիսուս, հիւսնի
մը որդին եւ ինքն ալ հիւսն մը, այս դա-
դափարներով տողորած, իր ամբողջ

սիրտը իր դասակարգին հետն էր, եւ տեն դոտ հողին շուտով սեւեռեցաւ եռանդաբեր բանւորական միջազգային եղբայրութեան մը դադարիւրին, որ պիտի ստեղծէր աշխարհի վրայ լաւ պայմաններ ու լաւ կեանք առանց խտրութեան բոլոր դասակարգերուն ու ազգութիւններուն:

Իմացական մարդի մը համար յայտնի էր թէ՛ հրէական առաջադրւած յեղափոխութիւնը դէպի ետ քայլ մը պիտի ըլլար եւ թէ՛ ան չէր կրնար կատարեալ բան մը ընել, նոյնիսկ հրէայ ժողովուրդին համար, այնքան ատեն որ մայր չարիքը, կեանքի աղբիւրներուն անհատական սեփականատիրութիւնը, կը մնար: Հրէաներու յիշողութեան մէջ տակաւին կ'ազդէր յաճախ կրկնւած հողերու վերաբաշխումը, այսինքն՝ երկիրը բաժնել ցեղային ընտանիքներու մէջ: Այսպէս՝ հողի և հարստութեան համայնացումի դադարը հրէական յեղափոխութեան մէկ բնական պահանջն էր, եւ միւս ազգերու մեծամասնութիւնը տակաւին քիչ թէ շատ տրամադիր էր հաւասարութեան այս հանցողութեան: Միջազգային պրոլետարը դժւարութիւն չունէր ինքզինքին համար ալ նոյն պահանջն ընելու:

Ըսւած է յաճախ թէ՛ այս հին յեղափոխականներու քովին իզմը կը պատկանէր միայն սպառողութեան, ոչ թէ արտադրութեան. բայց բոլոր պարագաները կը փաստեն իրենց ծրագիրները, որ կը պարունակեն հասարակաց սեփականացում հողերու եւ բաշխում ձեռարկեստական ու երկրագործական արտադրութիւններու: Միւս կողմէ, ամէն ճարտարարեւստներու մէջ՝ հարցէն դուրս էր համագործակցութիւն (co-operation) արտադրութեան մէջ, մեծ նժարի մը վրայ: Մանաւանդ որ երկրագործական որոշ պարագաներու մէջ գործածական մեքենայ մը ամէն երկրագործական գործի յարմար չէ, նոյնիսկ ներկայ ժամանակներու մէջ, ներկայ մեքենաներով: Հոս մէկական կայսրութեան մէջ մինակ ստրուկ աշխատաւորութիւն մը կար, հետեւաբար անկախ ազարակատէրերու հանդէպ հին յեղափոխականներու պահանջը մինակ անհատական արտադրութիւն եւ հասարակաց սպառողութիւն կրնար ըլլալ: Նոյնիսկ ժամանակակից ընկերվարականը կը հաւատայ թէ՛ պղտիկ ազարակատէրը իր անհատական արտադրութիւնով պէտք է առանձին թողլի, մինչեւ որ ան բնականօրէն կազ-

մէ ընկերակցական ագարակ, ուր դոր-
ծածական պիտի ըլլայ մեծ մեքենայու-
թիւնը:

Որքան ատեն որ հողի համայնական սե-
փականութիւնը անկարելի էր, որովհետեւ
տիրող դասակարգը կը հակէր, հին քո-
միւնիստներուն համար սովորութիւն ե-
ղաւ ծախել իրենց հողերը—եթէ ունէին—
ու դառնալ հասարակաց դանձի հասոյ-
թին: Բոլոր պրօլէտարիասներու խնայո-
ղական պայմաններու վկայութիւնով՝
նախնական ցեղային քօմիւնիզմը հաս-
տատեցաւ ինքնարեւարար: Անոնք պար-
զապէս փորձեցին դործնականացնել ինչ
որ կը սովորեցնէին, նոյնիսկ արխատուրատ
դասակարգի տիրապետութեան տակ,
բայց անոնց վերջնական նպատակն էր
հսկողութիւն արտադրութեան եւ սպա-
ռողութեան վրայ: Այս մասին ամենա-
պըզտիկ տարակոյս մը անգամ չկայ, ո-
րովհետեւ միջազգային պրօլէտարու-
թեան եւ դասակարգային տիրապետու-
թեան ջնջումի գաղափարները հարկաւո-
րաբար կ'ենթադրեն «արտադրութիւնը
համայնական սեփականութիւն» իմաստը:

Յիսուսի եւ իր ընկերներուն պրօպա-
կանտի մեթոտը շատ զգուշաւոր էր. ան-

տարակոյս գաղտնի մեթոտներով առաջ-
նորդեցան երկար տարիներ, որովհետեւ
Յիսուս երեսուն տարեկան էր, երբ հը-
րասպարակային պրօպականտի սկսաւ,
բայց վերջապէս զգացեցաւ որ յեղափո-
խականներ հրատարակային պրօպական-
տի պէտքն ունէին, եթէ կ'ուզէին օգնել
իրենց համերկրացիներուն: Շատ պարզ
էր որ անոնք նոր մարգարէի գալուստին
ակնկալութիւններովը լեցած էին, դոր-
ծածելու համար իրենց խանդն ու քաջու-
թիւնը պրօլէտարական յեղափոխութեան
մը համար, եւ զուտ հրէական յեղափո-
խութեան մը յետաշրջական գաղափարէն
դուրս նետելու համար անոնք: Եւ վեր-
ջապէս անխուսափելի էր որ անոնք հին
մարգարէներու թաքուն խաղերն ու կրօ-
նական ձեւերը դործածէին, մէկ կողմէն
իրականացնելու այդ մարգարէներուն
խօսքերը եւ միւս կողմէն Հռովմէական
տիրապետութեան աչքը կապելու համար:
Այդ էր միակ ճամբան, որով կրնային ի-
րենց կազմակերպութիւնն ու ճշմարիտ
պրօպականտը կանխահասօրէն երեւան
դալէ արգելել:

Ուեէ խաբկանք չէր սպասեր Յիսուսի
այս դերը խաղալէն: Իր կրօնական համո-

զուամենքը կը ստիպէին սովորեցնել համաշխարհային աստուածի մը եւ կրօնի մը գաղափարը, իսկ միջազգային պրօլէտարը միակ դասակարգէն էր Հոռովմէական կայսրութեան մէջ, որ կրնար իրատեսել տընտեսական եւ քաղաքական նպատակները, որոնցմէ այս տեսակ համաշխարհային կրօն մը պիտի ստեղծէր: Թերեւս ան իսկ նկատի ունէր տեսակ մը հիմնաւորում եւ մարտիրոսի մը մահը աւելի բարձրը կ'ընդունէր քան կեղեքող դասակարգերու տապալումն ու մարդկային եզրայրօթեան յաղթանակը: Բայց իր իսկ բառերը, եթէ անոնց միտքը ճշգրտօրէն գրեած է, էր զուցնեն թէ՛ ինք պիտուից էր իր պրօլէտարական առաքելութեան և անոր հաւատարիմ, թէև աստուածաշնչական հարցերով զբաղող առաջին գըրչադէտները հոգը ունեցան դասաւորելու իր արմատական խօսքերն ու անոնք զուգակշռեցին վիպութիւններով, որոնք հակառակ իմաստ ունէին: Դժւար է ստուգել Քրիստոնէական յեղափոխութեան սկզբնաւորութեան ճշմարիտ պատմութիւնը, որովհետեւ «հրաշք» կոչեած կարգ մը բաները, որոնք, կ'ըսուի թէ՛ Յիսուս ըրած է, ամէն մարդարէի լրացու-

ցիչ պայմաններն էին. իսկ ձեռնածուծեան մասին իր ունեցած ծանօթութիւններն ու նոյնքան եւ աւելի իր ընտանեկան պարագաները, տիրող պայմաններուն մէջ զինքը նախանձելի քարոզիչ մը ըրին:

Պաղեստինի մէջ պրօլէտարական ծրագրերնէր առաջ տանելու համար եղած պատրաստութիւնները այնքան դաղտնի էին որ ո'չ հոռովմէական եւ ո'չ ալ հրէական պաշտօնէութիւններ կրցան քօղամերկել կազմակերպութիւններու ներքին նպատակը: Բայց շատ որոշ է որ ամբողջական կազմակերպութիւն մը զոյուծիւն ունէր տասներկու ցեղերէ կազմակերպեած, եւ թէ շարժումը սկսելէ առաջ Յիսուսի եւ իր ընկերներու հրապարակի վրայ երեւումը լաւ պտարաստեած էր, որովհետեւ անոնք երկար ատեն սպասեած մարդարէն կ'ակնկալէին: Յովհաննէս Մըկըրտիչի առաքումը թերեւս ընդհանուր ծրագրի մը մէկ մասը եղած ըլլայ, միայն թէ Ստուածաշունչի խմբագրերէրը չեն կրցած գտնել:

Յիսուս ընտրեած գլուխն էր պրօպականտի մարմինին, որ կը բաղկանար 12 կազմակերպիչներէ. ամէն մէկ հրէական

ցեղի համար հատ մը: Կազմակերպու-
թեան միւս մասը կը մնար գաղտնի, բայց
ընդհանուր պէտք ծանօթ էր, որ պէտք էր
վկայէր անոնց կարգախօսող եւ նշանով:
Կազմակերպիչները իրենց շրջումները
ոտքով կամ ձիով կ'ընէին եւ իրենց ու-
տեսան ու բնակարանը կը հոգացէր ընդ-
հանուր ընկերներու կողմէ: Այս կանխագ-
գուշացումները, սակայն, արգելքներ
չէին վատ դաւաճաններու դէմ, որոնք
«ընկեր» գլխաւորին տակ կողակին, բայց
Յիսուս հանդարտեցուց իր ընկերները
ըսելով, որ շուտով պիտի ճանչցւին
«կեղծ մարդարէները» իրենց դործերէն,
եւ թէ այդ տեսակ մարդեր պիտի ոչնչա-
նան առանց կարենալ վնասելու կազմա-
կերպութեան բարոյականին: Վերջապէս
կազմակերպութիւնը իր դործը առաջ կը
տանէր ճիշդ այնպէս, ինչպէս գերման
սօցիալիստները՝ հակասօցիալիստական օ-
րէնքներու շրջանին, միայն թէ հրէայ քա-
րողիչները այն առաւելութիւնն ունէին
որ կը խօսէին լեզու մը, որ չէր հասկնար
հոովմէական պաշտօնէութիւնը:

Աստուածաշունչի ըսածին համաձայն՝
տասներկու ցեղերու կազմակերպիչները
կը կոչէին Յիսուսի աշակերտները, որ

կ'ենթադրուի թէ կը հաւաքէր անոնք երբ
առիթ մը ներկայանար ու իրենց արժա-
նիքին համաձայն, իր հետատեսութիւնով
այսինչ կամ այնիչ դործին կյատկացնէր:
Բաւական է մինակ շէշտել թէ՛ Յիսուս
կրօնական գաղտնիքներու դիտութիւնով
իր ընտանեկան յարաբերութիւններով
կրնար շատ մարդեր գտնել Ահարոնի սե-
րունդէն, որ իրեն հետեւին, եթէ մինակ
նոր կրօնի մը սարգ հարցը ըլլար: Իր
այսպէս կոչւած «աշակերտ»ները դործա-
ւոր դասակարգին պատկանող մարդեր է-
ին, առանց ունէ կրօնական քարոզու-
թեան, իւրաքանչիւր ցեղի համար հատ
մը:

Բայց ընդհանուր գիծերուն մէջ աւե-
տարանական վկայութիւններուն անկա-
րելի է հաւատ ընծայել, որովհետեւ այս
արձանագրութիւնները տեղի ունեցեր են
Յիսուսի եւ իր ծանօթներու մահերէն 300
տարի վերջ եւ տիրող դասակարգի ան-
գամներու ձեռքով, եւ թէ՛ անոնք մինչեւ
այդ դարերը բերանէ բերան եկած են:
Պատմագէտը պէտք է զգոյշ ըլլայ տար-
ւելէ ճարտասանական ու երեւակայական
Փրազներէ, որպէսզի իբր անաչառ դիտող
կարենայ անցնիլ աւետարանական թարգ-

մաններու ըսածներէն դէպի Գրիստոնէական շարժումի ծագումը:

Մենք կհիմնուինք պատմական իրողութիւններու վրայ: Ահա հռովմէական կայսրութիւնը եւ իր կազմակերպութիւնըն ու օրէնքները, ահա պրօլէտարը եւ իր դաւանած նպատակները: Այս է արտադրութեան եղանակը, այս է մարդկութեան քօնթրօլը բնութեան վրայ եւ այս է գիտակցութիւնը աշխարհի եւ ինքզինքնու մասին: Այստեղ հրէայ ժողովուրդը պատմական լաւածանօթ տարրերու մէջ կը մտնէր եւ ասիկա անխուսափելին էր. այս երեւոյթները ամէն մարդ կրնայ տեսնել: Հաւատքին չէ որ պէտք է կառչած մնալ ինչպէս կը պահանջեն Աստուծաշունչի պաշտօնական թարգմանները:

Պաղեստինի պրօլէտարական շարժումը պաշտօնէութիւններու չարախինդ աչքերէն հեռու սկսաւ ծաւալիլ: Արտադրութեան իշխող ազդեցութեան տակ գիւղական շրջանակները յեղափոխութեան առաջին կարգերը կը գրաւէին. կը մնար մինակ որ այս խօսքերը շարժում ստեղծէին քաղաքներու մէջ: «Աշխատաւոր ժողովուրդը երկիրի աղն է, եթէ այս ազը այլասերի, մարդկութիւնը ուրկէ՞ պիտի

ստանայ իր ուժը» . աս էր պրօլէտարական քարոզչութեան առանցքը: «Աշխատաւոր ժողովուրդը աշխարհի լոյսն է, պէտք է թողուլ որ իր լոյսը փայլի ժողովուրդին առջեւ» . ու այսպէս ահա պրօլէտարական իտէալներն ու նպատակները ծանօթացեցան: Բանւոր ժողովուրդին յաղթանակը ապահով էր: Խորհարհը պիտի ժառանգէ երկիրը եւ «ո՛չ իսկ հիւլէ մը կամ գիր մը պիտի անցնի մինչեւ որ ամէն բան կատարեալ ըլլայ»: «Կանխահաս բուռն յեղափոխութիւնները անօդուտ են և վայրագ դիմադրութիւնը չարիք է մինչեւ որ մեծամասնութիւնը պատրաստ ըլլայ անոր: Մարդերը չեն որ պատասխանատու են, այլ պայմանները, ուստի գործաւորները պէտք է առեն տիրոջները, որովհետեւ անոնք իրենց շրջապատին բերումովը դաստիարակած են եւ չեն հասկնար թէ՛ գործաւորն ալ իրենց պէս մարդ է: Պրօլէտարը չի փափաքիր ջնջել կրօնը, այլ անոր իրական կեանք տալ կ'ուզէ: Փարիսեցիներու կրօնը կեղծ է, որովհետեւ ան մարդկային ընկերութեան մէջ չի կրնար գործնակաւնանալ: Մարդեր պէտք է ապրին նոյն պայմաններուն տակ, ուր կարելի է Ոս-

կի Դարը իրականացնել: Մէկը չկրնար
երկու տէրի ծառայել: Աւելի դիւրին
ուզտ մը կրնայ մտնել ասեղի ծակէն քան
հարուստը արքայութեան մէջ: Մէկը, որ
ուրիշները զրկելով հարստութիւն կրի-
զէ, իբր եղբայր չկրնար ճանչնալ անոնք:
Ծիծաղելի է նիւթական պէտքերու հա-
մար վատնել կեանքը առանց անդենակա-
նին վրայ մտածելու: Բանաւոր մարդը
պէտք է իր աւելի ուշադրութիւն դարձը-
նէր գոյութեան հարցին քան օգին թըռ-
չուններն ու դաշտին շուշանները: Մար-
դեր չեն կրնար աստուածի հետ հաղորդակ-
ցիլ այնքան ատեն որ հակառակ կ'երթան
իր օրէնքներուն: Աստուած չկրնար ըլլայ
ատելութեան աստուած մը այլ սէրի. եւ
մինակ իր բնական օրէնքներուն հետեւե-
լով է որ կարելի է հասնիլ դերագոյն
կեանքին, որ անոնք աստուածի հետ մէկ
պիտի ընէ: Ուստի աշխատաւոր դասա-
կարդը պէտք է նախ իր ծառայութենէն
դուրս գայ ու իր գործին տիրանայ: Ա-
սիկա մեծ զոհողութիւն եւ ուժ կը պա-
հանջէ. բայց մինակ պրօլէտարական յե-
ղափոխութեան այս նեղ ճամբայէն քա-
լելով է որ մարդ կրնայ երկինք հասնիլ:
Այսօրը կայսրին կուտայ ինչ որ կայսրինն

է, բայց մի թուլնաք ձեր շարժումին մէջ:
Տարածեցէք պրօլէտարական յեղափո-
խութեան դադափարը, ուր որ երթաք:
Եւ այս դադափարները պիտի յաղթանա-
կեն ապահով ու խնդադութիւնն ու ա-
զատութիւնը պիտի տիրեն երկիրին:»

Այս առաքելութիւնը կայծակի պէս
փայլատակեց ու ժողովուրդը խոնկեցաւ
լսելու Յիսուսն ու իր ընկերները: Անոնք
զրկաբաց ընդունեցան խոնարհ դասա-
կարդէն, ուր որ խօսեցան: Երեք տարիի
մէջ, առաջին հրապարակային քարոզէն
վերջ, Պաղեստինը յեղափոխական կազ-
մակերպութիւններով լեցեցաւ:

Քահանաներն ու ընտրուածները զարհու-
րած էին. անոնք կը փորձէին մեղմել ու
դադրեցնել շարժումը ամէն հնարքներով.
Ճուղակ ճուղակի ետեւ կը լարէին Յիսու-
սի համար. բայց Յիսուս կը ծաղրէր ա-
նոնց նենգ դաւերն ու կը պապանձեցնէր
անոնք, ուր որ վիճարանութեան բռնէին
իրեն հետ: Զինքը ամբաստանեցին թէ՛
Մասլաթը բեկանած էր. իսկ ան պա-
տասխանեց թէ՛ միշտ ուղիղ է աշխատիլ
ճշմարիտ կեանքի առաջադրութեան հա-
մար: Զինքը ամբաստանեցին իբր սեռա-
մին յարաբերութիւններ արտօնող եւ ան

անոնց պատասխանեց թէ՛ իրաւունք չունին զինքը այդ տեսակ բանով մը ամբաստանելու, քանի որ իրենք կը ցանկան իրենց զբացիներու աղջիկներուն ու կիներու և կ'ամուսնալուծւին պզտիկ պատըր-լակներով. զինքը ամբաստանեցին իբր հայհոյիչ, բայց ան իրենց երկրպագութեան փարիսեցիական ձեւերը ցուցուց ու երբ այս բոլոր նենգամտութիւններ չյաջողեցան, զայն հռովմէական կառավարութեան ներկայացուցին իբր խռովարար:

Յիսուսի համար զիւրին էր հերքել այս ամբաստանութիւնն ալ, որի համար ապացոյց պիտի ըլլար պզտիկ փախստական արարք մը: Եւ երբ Յիսուս մնաց իր գեղջուկ բարեկամներուն մէջ՝ փոխանակ Երուսաղէմ երթալու, ուր իր թշնամիները զօրաւոր էին ու բարեկամները տկար, կրնար, սակայն, հրէայ քահանաներու հալածանքէն փախիլ, հեռանալ: Հռովմէացիներ տակաւին չէին գիտակցած պրօլէտարական շարժումի կարեւորութեան, թէեւ ան արդէն հռովմէական լէգէոններու շարքին մէջ արմատ ձգած էր:

Բայց Յիսուս, իրերու անխուսափելի գնացքով, զոհը եղաւ իր աղէտաւոր հո-

սանքին: Երուսաղէմի մէջ արեւելեան տօներու միջոցին ունեցած արդիւնաւոր պրօպականստը առիթ տուաւ որ ան չի կըրցաւ զիմանալ փորձութեան եւ այնպիսի յանդգնութիւն մը ըրաւ, որ կարեւոր չէր ընել: Ան որոշապէս ինքզինքը տարաւ նեաեց իր թշնամիներու ձեռքին մէջ: Այն ամբաստանութիւնը, թէ ան կը յարձակէր հրէական կրօնքին վրայ, իր վճիռը կընքեց անոնց աչքին առջեւ, որոնք պայծառ հասկացողութիւնը չունէին իր նպատակներու եւ ոչ ալ գիտակցութիւնն անոնց: Հռովմէական կառավարութեան չկամութեան պատճառով հրէայ քահանաներու կուսակիցները յաջողեցան զինքը խաչել, երբ տակաւին իր սարսափահար ընկերները չէին գիտեր կացութեան ծանրակընուութիւնը:

Ասոր հետ մէկտեղ շատ ապացոյցներ կան այն հաւանականութեան թէ՛ ան մեռած չէր երբ խաչէն վար առնեցաւ եւ թէ՛ իր ընկերները զինքը փոխադրեցին դերեզմանէն, ուր ժամանակաւորապէս դրած էր, եւ խնամեցին ու վերակենդանացուցին իրենց դադանի մէկ ժամադրաւայրին մէջ. վերջապէս իր բարեկամներէն քանի մը հատը զինքը ողջ տե-

սած ըլլալ յայտարարեցին իր խաչելու-
թենէն երեք օր վերջը :

Այն հաւատքը թէ՛ Յիսուս յարութիւն
առած էր իր պատգամին ազդեցութիւնը
աւելցուց եւ շարժումը աւելի շահեցաւ
քան կորսնցուց իր հաստատուած մահով :
Իր սկզբունքներուն հանդէպ ցուցուցած
իր հերոսական հաւատարմութեան պատ-
մութիւնը ամէն պրօլետարի սիրտը յու-
զեց , որ արդէն այրած էր Վիրիտիւսի ,
Էննիւսի եւ Սիւարթաքուսի յիշատակնե-
րով : Իր օրինակով գրգռւած հետեւորդ-
ները իրենց կեանքին ու ապահովութեան
քնաւ հող չ'ըրին . ինչ որ ամէն մարդ մը-
ղեց դէպի գերագոյն գոհողութիւն : Հա-
լածանքները իր շարժումը աւելի ծաւա-
լեցին , այնպէս որ Յիսուսի մահէն երե-
սուն տարի վերջ Հռովմէական կայսրու-
թեան ամէն նահանգներուն մէջ տարած-
ւած էր ու հռովմէական ընկերութեան
սիրտը կը կրճէր : Ներոն այնքան ձան-
ձըրացաւ , որ Հռովմը այրեց յուսարով
խուժանը գրգռել քրիստոնեաներուն դէմ
հազարներով այրեց կրկէսներու մէջ .
անոնք այրեց իբր աշտանակներ , լուսա-
ւորելու համար իր սեղանները : Եւ իր յա-
ջորդները յաճախ հալածեցին քրիստոն-

եաները , կարծելով հռովմէական ժողո-
վուրդներու ուշադրութիւնը վրիպեցնել
կայսրութեան նեխածութենէն :

Բայց այս ինկածութիւնը բուն իսկ հողն
էր , ուրկէ պրօլետարը ծնաւ իր գոյու-
թիւնն ու յեղափոխութեան ճշդումը : Յի-
սուսի մահէն մինչեւ 400 տարի Հռովմէ-
ական կայսրութիւնը շարունակաբար քա-
ղաքական պատերազմներով , արշաւանք-
ներով ու տնտեսական ու քաղաքական
կռիւներով զբաղեցաւ : Քրիստոնեայ պը-
րօլետարէն զատ ուրիշ ոչ մէկ դասա-
կարգի մէջ կար ո՛չ միութիւն , ո՛չ որոշ
նպատակ եւ ո՛չ խանդավառութիւն :

Անշուշտ դարերու բարեշրջումն ալ իր
ազդեցութիւնն ըրաւ պրօլետարին
Վրայ : Եթէ անոնք իրենց նպատակներուն
եւ շարժումին մէջ կ'առաջնորդէին տըն-
տեսական եւ քաղաքական երեւոյթներով
քան կրօնական , իրենց շարժումին ու ա-
նոր տէմօքրատ ու քոմիւնիստական ոգիին
դասակարգային հանգամանքը ամէն կողմ
կրնար ապրիլ անվնաս : Բայց իրենց ա-
ռաքելութեան մէջ կրօնական գերակըշ-
ուութիւնը , որ կոշ կ'ընէր բոլոր դասա-
կարգերուն եւ շատ տեղ անստուգութեան
մէջ կը թողուր , տկարացուց պրօլետա-

րական կազմակերպութիւնը այն վայր-
կեանէն, երբ միւս դասակարգերու ան-
դամները, դրաւած սլրօլէտտարական
գաղափարներու վեհութենէն, մեծ թիւով
միացան անոր: Ասիկա աստիճանական
փոխանցում մը եղաւ նախորդ դործասը
դասակարգի կազմակերպութենէն զէպի
կրօնական ազանդը. — ամբողջ դասա-
կարգերու ներկայացուցիչներով կազմա-
կերպել քահանայութիւն մը սլրօլէտտա-
րական քարոզիչներու փոխարէն: Որոշ է
թէ այս փոխանցումը տեղի ունեցաւ եւ
ժամանակի առաջացումը թաղեց շարժու-
մին սկզբնական նկարագրի յիշատակնե-
րը եւ այսպէս դասակարգային շերտաւո-
րումները պաղութիւն ու քայքայում ա-
ռաջ բերին քրիստոնեաներու շարքերուն
մէջ ալ: Հասարակական գործերը հա-
րուստ անդամներու զգայուն ջիղերուն
զպան եւ նախնական ռամկավարութիւնը
(democracy) աստիճանաբար կը սահմա-
նադժէէր, որով անկեղծ սլրօլէտարներու
միջամտութիւնը կը սահմանափակէր. եւ
ասոնք (սլրօլէտարները) կը մնային մի-
այն իրր վտանգ մը ու իրենց կազմակեր-
պութիւնը կը տկարանար եւ վստահու-
թիւնը կը կորուէր զէպի ղեկավարները:

Չորրորդ տարիի սկիզբը հռովմէական
կայսրութիւնը իր կատարեալ անկումի ե-
ղերքին հասած էր: Ստրուկ աշխատաւո-
րութիւնը այնքան անտանելի դարձած էր
որ ղերեկալները ուրախ էին անոնցմէ ա-
զատ ըլլալուն համար. միւս կողմէ ա-
զատ մարդերու աշխատանքը տակաւին
չէր յարգւեր ու նոր եղանակի արտադը-
րութեան միջոցները տակաւին դոյութիւն-
չունէին: Կայսրութիւնը քաղաքականա-
պէս քայքայած էր աւատական ցեղե-
րու, Ֆրանքներու, գերմաններու, կօթա-
ցիներու եւ ուրիշ բարբարոս ցեղերու
արշաւանքներէն: Այս շրջանին մէջ հա-
մոզւած շարժում մը, միջազգային սլրօ-
լէտարին կողմէն, ալէտալի պիտի ըլլար
Հռովմէական գերիշխանութեան համար:
Առանց քրիստոնեայ առաջնորդներու
կայսրութիւնը չէր կշնար գիմանալ:

Կոստանդին կայսրը հասկցաւ ասիկա իր
գահակալութենէն վեց տարի վերջ, 312-
ին: Մեծ ճարտարութիւնով յաջողեցաւ
պառակտում ձգել քրիստոնեաներու մէջ
իր կողմը շահելու համար հարուստ եւ
ազգեցիկ կղերականները եւ այսպէսով
կարենալ իշխելու ամբողջ կազմակեր-
պութեան: Յանկարծ խաչածեւ լոյս մը

տեսաւ: Այդ տեսակ խարկանքներ մեծ
դեր կատարած են հրէական պատմու-
թեան, ինչպէս քրիստոնէական սկզբնա-
կան շրջանին մէջ: Տարօրինակ ոչինչ կար,
երբ Կոստանդին յանկարծ ինքզինքը «ծա-
ռայ տեսոն» յայտարարեց, անոր, որ
երկար ատեն հալածեր էր. չէ՞ որ Սողոմոն
ալ նոյն կերպով Պօղոս եղաւ:

Բայց նոր Սողոսը Յուդա մը եղաւ եւ
քրիստոնէայ Յուդաներ, որ օգնեցին ի-
րեն, վարձատրեցան իրենց վատութեան
համար, փոխանակ պատժելու: Քրիստո-
նէական կազմակերպութեան ու առաքե-
լութեան ամբողջ նպատակն ու նշանակու-
թիւնը եղծանւեցաւ, յեղափոխական շար-
ժումը վերածւեցաւ հարստութեան ու շա-
հագործութեան միջոցի: Պրօլետար յե-
ղափոխականը տեսաւ որ հարիւրաւոր
տարիներու իր թափած ճիգերուն փոխա-
րէն ինք կը կողոպտէր. իր կազմակեր-
պութիւնը փոխանակ յաղթանակելու բա-
ժան բաժան եղաւ, ճիշդ այն ատեն, երբ
իր թշնամին ամենէն տկարն էր ու ինք
կրնար աշխարհի պատմութիւնը յեղաշըր-
ջել:

Եթէ մէկը կար, որ բանաւոր պատճառ-
ներ ունէր իր գերեզմանը դառնալու, այդ

Յիսուան էր: Այն դասակարգը, որ խաչեց
զայն, հիմա իբր իր բարեկամները, դա-
մեց իր պրօլետար եղբայրները, շահա-
գործելով խաչը: Իր խաչը, որ Գողգոթա-
յի վրայ դարերով իր յեղափոխական նը-
պատակներուն իբր խորհրդանիշ ծառա-
յեց, որի համար ան իր կեանքը տուաւ,
այլեւս եղաւ խորհրդանիշը համակեր-
պութեան ու անջիղ հլութեան, («այն վի-
ճակին, որ Աստուած սահմանած էր») պրօ-
լետարին: Քրիստոնէայ առաջին քարո-
զիչները, Հռովմէական կայսրութեան
պատմական պայմաններէն, ստիպեցան
խրատելի որդեգրելու խելացի թաքթիքը,
հաւատալով որ իրենց յաջողութեան հա-
մար պրօպականտի յարատեւ տարածում
պէտք էր: Տիրող դասակարգերու յետա-
շըրջական քրիստոնէութիւնը, այս խելա-
ցի թաքթիքին տեղ, որդեգրեց վատ ու
ստորուկ սկզբունք մը: Այս սկզբունքն էր՝
մտաւոր ճնշում բանւոր դասակարգերու
վրայ, արդիւնելու համար ըմբոստացու-
մը տիրող դասակարգի բռնութեան դէմ:

Քրիստոնէայ պրօլետարը վերադար-
ձուց նախկին հեթանոսութեան բոլոր այն
տարրերը, որ վայրենութեան կ'առաջնոր-
դէր աւելի բարձր մարդկութիւն մը: Ա-

ոանց այս նախնական «առաքինութիւն»-ներուն պրօլէտարը չէր կրնար ըմբռնել իր խօտալները, չէր կրնար վերջացնել «մարդ մարդի դէմ»ի պատերազմը: Տիրող դասակարգի քրիստոնէութիւնը փոխանակ ջնջելու պատճառը, որ մարդը ստիպեց կուրի իր սիրտին, հողիին դէմ, երկարեց անտեսական անհաւասարութեան կեանքը եւ վաւերացուց նահապետական նախնական մեղքերը:

Յիսուս հրէական ատելութեան աստուածը փոխարինեց սէրի աստուածով ու խաղաղութեան իշխանով մը: Քրիստոնեայ եկեղեցին կաղապարեց զայն խորհրդաւոր հրէշութեան մը մէջ: Սէրի աստուած մը, որ ատելութեան աստուած մըն էր ու խաղաղութեան իշխան մը, որ սուր մը կը բերէ: Եւ անոնք ասլրեցուցին իրենց ըստեղծած այս հրէշութիւնը ու անմիջապէս սկսան իրարու կոկորդ սեղմել, երբ փրճացուցին իրենց պրօլէտար ընկերներն ու ջնջեցին Յիսուսի կեանքին դործը: Բայց ժամանակակից պրօլէտարը կյիշէ Գողգոթայի խաչը:

V

Հարուստ քրիստոնէաներու կողմէ քրիստոնէական շարժումին դէմ եղած դաւաճանութիւնը չփրկեց Հռովմէական կա-

ռավարութիւնը. թէեւ քայքայեց պրօլէտարական կազմակերպութիւնը, բայց չի կրցաւ ջնջել պրօլէտարութիւնն ստեղծող պայմանները: Այսպէս Հռովմէական կայսրութիւնը բաժան բաժան եղաւ:

Եկեղեցին ու կառավարութեան մէջ դործանութեան մէջ եղող սուտուրը սրբազան լուսապսակով մը շրջանակաժէր: Հռովմէացի ժողովուրդին այնպէս հաւատացուցեր էին թէ՛ իր հողին պիտի բարձրանար ու մարմինը բարւոքէր. սակայն իրողութիւնն այն էր որ այդ խեղճ ժողովուրդը աւելի քան երբէք ծանրաբեռնեցաւ ամենածանր լուծերով: Իր հողին մխրճեցաւ տգիտութեան մէջ ու մարմինը քայքայեցաւ. սաստկացան այն բոլոր չարիքները, որոնցմէ կը տառապէր Հռովմէական կայսրութիւնը:

Երբ Հռովմէական կայսրութիւնը մեռաւ, Հռովմէական եկեղեցին դարձաւ տնոր ժառանգորդը ու բնականաբար ժառանգեց բիրտ կայսրութեան բոլոր ախտերն ալ: Եկեղեցին չբարւոքեց ստրուկ դործաւորութեան տառապանքը. ընդհակառակը զայն նւիրադործեց, ինչպէս եղաւ պրօլէտարական յեղափոխութեան ջախջախումի պարագային: Ազատ աշխար-

տաւորութեան երեսին նետւած անվատահուլիւնը ծափահարեցաւ, ցեղային աւատապետներ ներշնչեցան կրօնական ֆանատիզմի ոգիով ու կրօնական պառակտումները աւելցան այնքան, որքան եկեղեցին ընդարձակեց իր սրբազան լուսապսակը:

Միակ բանը, որ պիտի կրնար կասեցընել գահալէժ ընթացքը Հռովմէական կայսրութեան պէս գանազան ազդութիւններէ կազմուած ընդարձակ պետութեան մը ան չափով մը աշխատաւորութեան գիտակցութիւնն էր, որ պիտի փրկէր զինքը ստրկութենէ: Եկեղեցին, սակայն, աւելի կասկածելի ներկայացուց աշխատաւորութիւնը: «Ո՛վ որ չաշխատիր, չպիտի ուտէ»: Աս էր պրօլէտարական առաքելութեան հաւատամքը. եկեղեցին ընդհակառակը վեր գասեց աղքատութիւնն ու ծուլութիւնը աշխատութենէն, ընտրելով իր խոչապատկերին համար մարդ մը, որ ո՛չ պիտի տքնէր, ո՛չ աշխատէր «ինչպէս զաշտի շուշանները»: Ստրուկներուն համար բաւական հող կար, բայց ասուածի գործին հանդէպ ցոյց տրւած մոլորանդութեան պատճառով ընտրուած մարդեր կ'ապրէին ու անոնց հողներու փրկու-

թեան հողը կը ստանձնէին:

Ստրուկները հողի չունէին, կը հաւատային առաջ. չատ մը դարեր այս հաւատքը ապրեցաւ եւ երբ անոնք վերջապէս կէս-հողի ունենալու իրաւունքը ըստացան, աշխատեցան լման հողի ունենալ եւ հողիի ազատութիւն պահանջել. մինչդեռ անդին ծառայութեան, աղքատութեան ու թշուառութեան մէջ մարմինը կը քայքայէր: Արիստոկրատ կղերականութիւնն ու իր պաշտօնակիցները այնպէս չարակերպեցին քրիստոնէական առաքելութեան ոգին, իբր թէ՛ իրենք սահմանուած էին հողատարելու, որ անոնց հողիները բնակին աղնւական կմախքներու մէջ ու կը յօժարէին միայն որ խեղճ եղբայրակիցներ և ստորադաս կղերներ սովամահութեան մէջէն հասնին հողիի յաւիտենական փրկութեան:

Եթէ ազատ աշխատաւորութիւնը փրկուէր իր անկումէն, աղքատ քաղաքացիներու քաղաքական ուժը կրնար ինքնիր մէջ ամփոփուիլ: Ազատ ու ինքզինքը յարգել աւող աշխատաւորութիւնը պիտի ցըցէր գործաւորի, մարդ արարածի իրաւունքը քաղաքական ու կղերական շահագործողներու դէմ: Բայց եկեղեցին կը

ներբողէր, կը դովէր ստրուկ հնազան-
դութիւնը դէպի արտօնւածները, իբր թէ
այսպէսով կարելի էր հաճելի ըլլալ աստ-
ւածին, ու կը վատասերեր մարդկութիւն
մը, որ արգարօրէն պէտք էր բողոքէր թէ՛
ո՛չ մէկ մարդ բաւական բարի էր, որ կա-
ռավարէր ուրիշներ քաղաքականապէս ու
հոգեպէս, առանց անոնց հաւանութեան:
Միեւնոյն ժամանակ ալ եկեղեցիի առաջ-
նորդ պետերը այդ միեւնոյն հնազանդու-
թիւնը չէին իրականացներ իրենց վրայ,
հանդէպ հռովմէական կառավարութեան.
ընդհակառակը ամէն ճիգ կ'ընեն այն
իրենց ուժին ենթարկելու: ~

Հոգեւորականութիւնը անվիճելիօրէն
ճշմարիտ իրաւունքն էր եկեղեցիին. բայց
իրականութեան մէջ կղերական քաղաքա-
դէտները աշխարհային՝ և ոչ թէ հոգեւ-
րական ուժին ետեւ կանգնած էին: Ա-
նոնք կը դիզէին այն բոլոր բաները, որ
ուտիճներն ու փոշիները կ'եղծանէին, և
փոխանակ պատրաստելու երկինքի թա-
ղաւորութեան, կը դործածէին իրենց
երկրային տիրապետութիւնը հաստատե-
լու:

Արդարացիօրէն կարելի է ըսել թէ՛ ո՛չ
քրիստոնէութեան պրօլէտար մտածողնե-

րը հասկցան ասիկա և ո՛չ ալ փորձեցին
հետապնդել շարժումը, ու, եթէ ըրին,
ինչպէ՞ս պրօլէտարը այնքան դիւրին թոյլ
ուաւ որ իր յեղափոխական կազմակեր-
պութիւնը փոխանցելի եկեղեցական կազ-
մակերպութեան:

Բայց յիշեցէք որ քրիստոնէական շար-
ժումին արիստոկրատ դասը կը տարած-
էր դարերու շրջանի մը վրայ և առաջ
կ'երթար աստիճանաբար սերունդէ սե-
րունդ, այնպէս որ դժար էր անոր դէմ
ըմբոստանալ մինչև որ ան ինքզինքը ան-
տանելի չդարձնէր: Իսկ կազմակերպու-
թիւններու մէջ իր տարրերուն կողմէ ե-
ղած ըմբոստութիւնները կը խղդէին
յաճախական հալածանքներով: Պրօլէտա-
րը իր սկզբնաւորութեան մէջ ինքզինքը
կը թաքցնէր, իր յեղափոխական նպա-
տակները աստուածաբանական ֆրաղներով
քողարկելով: Մինչդեռ այսպէս, մէկ
կողմէն, կը շարունակէր ատեն մը գոնէ
խարելու համար շարժումին թշնամինե-
րը, միւս կողմէն նորահաւատներու մէջ
աւելի անստուգութիւն մը կտրէր: Պրօ-
լէտարը այսպէս բեռնաւորած էր ծանր
լուծով մը, որ չէր կրնար թօթափել, ո-
րովհետեւ կը հաւատար իր շարժումին

աստուածարանական առաքելութիւնը եւ փոքրամասնութեան կը մնար խղճահար ծպտում մը, որ մեծամասնութեան համար կը նկատուէր իբր հոգեկան դոհունակութիւն: Հոովմէական աշխարհին մէջ ժողովրդային զանդեւաններու թշուառութեան յաւելումը կը գործածուէր քաջալերելու համար այն մեծ սպասումը, որ հոգեկան մխիթարութիւնը կը կազմէր, ուստիկա պահպանողական քրիստոնեաներու առիթ կուտար տակաւին կաշկանդել իրենց յեղափոխական եղբայրներու միտքերը:

Քօմիւնիստներու գործերն ալ իրենց կարգին կխանդարուէին, ու այսպէս պրօլէտարական յեղափոխութեան անկումը կը պատրաստուէր: Նախնական քրիստոնեաներու առաջին քօմիւնիզմը իրենց մէջ ամենէն զօրաւոր կասն էր ընկերակաշնութեան (camradship)․ բայց երբ կը բօնական տարրը սկսաւ տիրապետել պրօլէտարական յեղափոխութեան, կարգ մը կրօնական ուսուցիչներ ու եկեղեցիի պաշտօնեաներ դուրս եկան․ եւ այս մարդերուն վստահեցաւ հասարակական սեփականութեան ղեկավարութիւնը: Քանի ղեկավարութիւնն ու դաստիարակչու-

թիւնը ինկան կղերականութեան ձեռքերուն մէջ, որոշ ու նպատակաւոր կերպով, պրօլէտարը մղեցաւ զինքը ընկճող գործերու: Շարժումին աճելուն հետ մէկտեղ ցիրուցան խումբերու մէջ լաւագոյն ընկերակցութեան մը ու փոխադարձ մտահոգութեան մը փափաքը իրենց աստիճանական կազմակերպումը առաջնորդեց շրջանային սինօզներու: Երկրորդ դարի վախճանին ամբողջ Հոովմէական նահանգներու քրիստոնեաները, Յունաստանի եւ Փոքր Ասիայի մէջ միացան նահանգային եկեղեցիներու շուրջ եւ եպիսկոպոսներու սինօզը կազմեցին իբր գործադիր մարմին:

Շատ առաջ չէր որ այդ բարձր ֆէնքրլ-ֆէնքերը կը զգային թէ՛ իրենց սուրբ կուրծքին տակ աշխարհային ուժը կ'ուռէր: Անոնք սկսան գրաւել հասարակական սեփականութեան ղեկավարութիւնը․ այսպէս հասարակ խումբերը կորսնցուցին իրենց ինքնավարութիւնը եւ ինկան նահանգային սինօզի հրամանին տակ․ նոյն համեմատութիւնով ալ հասարակական հարստութիւնը դադրեցաւ ընդհանուրին արդար իրաւունքը նկատուելէ, որի հիմունքով ազգատն ու հարուստը հո-

ւասարօրէն կը բաժնէին :

Շատ պարզ է որ շատ մը խեղճ կղերականներ ու պրօլէտար անդամներ այնքան դիւրին կերպով չէին կրնար իրենց կազմակերպութեան այս չարափոխութեան հանդուրժել, բայց ի՞նչ կրնային ընել : Անոնք սինօզին վճռականութեան ենթակայ էին, եւ քանի որ մինակ կղերական անդամներ ընտրելի էին այդ տեսակ պաշտօններու, եւ այդ կղերականներն Ել կ'ըլլային միշտ հարուստ ու խելացի մարդերէ, որոնք ամէն կերպով կ'աշխատէին շարժումը իր սկզբնական նպատակէն շեղեցնել, ազքատ կղերականութիւնն ու աշխարհական անդամները ուժ չէին ներկայացնէր իրենց կազմակերպութեան մէջ : Ուրիշ բան չէր մնար անոնց ընել, բայց եթէ մըթմըթալ ու հպատակիլ—կամ լքել կազմակերպութիւնը. սակայն կազմակերպութենէն դուրս ալ կեանքը աւելի անստոյգ, աւելի ճնշած ու աւելի անտանելի էր :

Այսպէս հոովմէական իշխանութեան ու քրիստոնեայ պրօլէտարին մէջ տեղի ունեցած պայքարը աստիճանաբար փոխուցաւ պրօլէտարութեան եւ Հոովմէական եկեղեցիի պայքարի : Ճնշող պայմաններ

ընդ տակ այս պայքարը բնականաբար չըքացուց կրօնական պառակտումները, թէեւ նոյնիսկ այս պառակտումները չկրցան իրարու դէմ հանել տիրող դասակարգը կամ պրօլէտարը : Կրօնական բոլոր վէճերուն ու խնդիրներուն ետեւ թաքնած նպատակն էր քօնթրօլ ընել կազմակերպութիւնն ու իր ուժը :

Այս ժամանակներու գիւնտրական պրօլէտարը կը կազմէր գեղջուկ բնակչութիւնը, եւ այս բնակչութենէն էր որ կուգար ամենամեծ ընդդիմութիւնը կղերական, տիրող դասակարգի սոսնձութիւններուն հակառակ եղած ունէ բողոքի դէմ : Քաղաքներու բողմանալով մտաւորականները աւելի կարեւոր դեր մը ստանձնեցին այս պայքարին մէջ, այնպէս որ յաճախ կը թէնէր թէ՛ քաղաքները դործնականապէս քրիստոնեական արժատականութեան կեդրոններ են : Քաղաքները ծնող հողերն էին այն բանին, որ ներկայ սօցիալիզմը կը կոչէ վերյայտնութիւն (revisionism) : Այնքան ատեն որ արեւմուտքը ընդհանրապէս երկրագործական էր, մինչդեռ վաճառականութիւնը գլխաւորապէս կը տիրէր արեւելքին, այս պայքարները, պաշտօնական արձանագրութիւններէ հե-

տեւցնելով, կը թւին ըլլալ իբր արեւելքի կողմէ հետզհետէ պրօլէտարական նախնական վարդապետութեան մէջ միսթիսիզմ մտցնելու փորձեր:

Օրինակի համար, այն հարցը թէ՛ Յիսուս ասուած էր թէ ասուածանման յեղաշրջում մը, ամբողջ դարեր յուզեց զբրիստոնէական միտքը, թէեւ 325ին, Կոստանդինի դարձէն (conversion) 13 տարի վերջ, Նիկիայի ժողովին պատգամաւորները բացարձակապէս դաւանեցան Քրիստոսի եւ Աստուծի մեծութիւնը: Յիսուսը վեց տարի վերջ, 381-ին, Կ. Պօլիսի ժողովը իր բռունցքը գործածեց ձուլելու համար երրորդութիւն մը, Ս. Հոգիի վարդապետութիւնն ալ նոյնացնելով անոնց հետ: Երկու ժողովներն ալ զօրաւոր նաւաւորներ ըրին պրօլէտար տարրին վերայ, որովհետեւ ամէն մէկ միսթիզ յաւելլածով՝ կազմակերպութեան քօնթրօլը կը հեռանար պրօլէտարիատին շահերէն ու հիմնական առաքելութիւնը կը կորսընցնէր իր քաղաքական հանգամանքը: Այս պարագան աւելի առիթ կուտար որ վարդապետութիւնը (doctrine) անցնէր կրօնապետութեան. ու այսպէս եկեղեցիի ամէն մէկ իշխան դարձաւ միեւնոյն ա-

տեն ճարպիկ քաղաքադէտ մը, ինչպէս որ Արիստոտէլի եւ Մաքրավէլլիի պէս տեսնող մարդեր յայտարարեցին թէ՛ կրօնքը քաղաքական տիրապետութեան հոմանիշ դարձած է:

Իսկ քաղաքական տիրապետութիւնը միակ խարխիսն էր, որի վրայ եկեղեցին, իբր Հոովմի կառավարութեան ժառանգորդ, կրնար ինքզինքը պահել: Այսպէս եկեղեցին խաբեց պրօլէտարը իր հշտաբիտ նպատակներու տեսակէտէն, ինչպէս երբեմն պրօլէտարը խաբած էր Հոովմի կառավարութիւնը: Կրօնքը եղաւ դիմակ մը եկեղեցիի ճնշող նպատակներուն համար, ինչպէս երբեմն դիմակ մը եղած էր պրօլէտարի յեղափոխական նպատակներուն: Անյարմար կառք մը, որ չկրնար երկու կողմի վրայ շարժիլ:

«Ժողովուրդը յամառօրէն ատակ ըլլալով խաբելու, կ'ըսէր եպիսկոպոս Սինէսիոս, 410ին (Ք. Վ.), ինձ համար ես միշտ փիլիսոփայ պիտի մնամ իմ միտքով, իսկ քահանայ մը հասարակութեան համար»: Կարելի չէ աւելի պարզօրէն ըսել թէ քահանայ մը ըլլալ հասարակութեան մէջ իսկ փիլիսոփայ մը՝ իրեն համար կնշանակէ խաբեբայ մը ըլլալ: Նոյն

զաղափարը կյայտնէր Նազարեանցի կը-
րեկորի, որ Հերոնիմոսը գրեց. «Ինչ որ
ըսած, քարոզած է ու կը ճնշէ ժողո-
վուրդը, պարզ առասպել մըն է. ձեր ը-
սածներէն քիչերը կը հասկնան անոնք ու
շատերուն վրա կը հիանան: Մեր հայրերն
ու վարժապետները յաճախ չէին ըսեր
ինչ որ կը մտածէին, այլ կ'ըսէին այն բա-
ները միայն, որ իրենց ժամանակին պէտ-
քըն ու պայմանները կը թելադրէին»:
Որքան ատեն որ «ժողովուրդ»ը քրիստո-
նէական կազմակերպութեան հսկողու-
թեան ենթակայ էր, այսպիսի երկերեսանի
բարոյականութիւնը տեղ չունէր անոնց
մէջ, եւ սակայն անոնք կացութեան դը-
ժընդակութենէն որդեգրեցին կրօնական
կեղծիքը, ստրկութիւնը ջնջելու նպատա-
կով, բայց եկեղեցին որդեգրեց այդ կեղ-
ծիքը «ժողովուրդ»ին հոգիները փրկելու
անունով դողնալով, ու անոնց սեփակա-
նութիւններն ու իրենք ալ իրր ծառայ
պահելով:

Հռովմէական կայսրութեան վերջին
տարիներուն՝ ճնշումը այն աստիճան ան-
տանելի դարձած էր որ հռովմէացի քաղա-
քացիներ փախան բարբարոս ցեղերու ըով
ու աղաչեցին անոնց որ իրենք պաշտպա-
նեն հռովմէացի հարկահաւաքներու դէմ:

Եկեղեցին միակ միջոցն էր, որ կրնար աի-
րապետել այս վերջիններուն հաւատացեալ
դարձնելով անոնք, որ ամեն կողմերէ կաս
պատակէին Հռովմէական զաւամած կոյս
րութիւնը: Մէթոսը անփոփոխելի էր. մի
սիոնարութիւններով հետամտեցան հա-
ւատացեալ ընել պետերն ու անոնց ստո-
րադասները, կոչ ընելով անոնց դասակար
դային շահերուն ու կրցան յաջողիլ այդ
մարդերը քաղաքական դաշնակցութիւնով
մը հանելու իրենց իսկ ժողովուրդին դէմ:
Առաջնորդներու մկրտութեան ամէն մէկ
դէպք, իրենց հետեւորդներու մեծամաս-
նութեան համար քաղաքական ու տնտեսա-
կան ազատութեան նւաճում մը կնշանա-
կէր, իսկ մեծապոյն վարկ մը՝ տիրողնե-
րուն: Այնպէս եղաւ որ ցեղային ամուս-
նութիւններու ատեն, որ միակնութիւն էր
առաջին զիշերի իրաւունքը իշխողներուն
կտրատկանէր և եկեղեցիի շատ պետեր ի-
րենց սովորական զօրծն ըրած էին ատի-
կա:

Եկեղեցին աւելի վատ կերպով իր ար-
համարհանքը ցուցուց կին անհաստակա-
նութեան հանդէպ երբ վերջերը կղերակա
նութեան համար միակնութիւնն ալ ան-
կարելի եղաւ: Եթէ կայ բան մը, որ ամե-
նէն աւելի աղտոտած է եկեղեցին ու կոր-

սընցուցած անոր բարոյականը, կղերական-
նութեան համար ամուրիութեան որոշու-
մըն է: Բայց ասիկա անհրաժեշտ համար-
ւեցաւ, ո՛ր չորովհետեւ ամուսնութիւնը կղե-
րականութեան հոգեկան պարտաւորու-
ներուն արգելք կըլլար, այլ որովհետեւ կը-
ղերական հայրերը եկեղեցիին սեփական-
նութիւնները կգողնային կտակելու հա-
մար իրենց զաւակներուն: ԺՍ. դարին՝
այս սովորութիւնը այնքան հասարակ
դարձած էր որ Լէօ IX և Կրէկորի VII պա-
պերը գերագոյն ճիգեր ըրին հաստատե-
լու համար կղերականութեան ամուսնու-
թիւնը: Պէտք է զիտնալ, սակայն, որ այս
ատենները արբայի մը կամ եպիսկոպոսի
մը զիւրքը այնքան շահաւէտ ու ազդու էր
որ եպիսկոպոսներու և արքաներու մէջ
նոյնիսկ սովորական դարձեր էր պապու-
թիւնը ծախել բարձր գիններով: Կրէկորի
VII վերջապէս յայտարարեց քրիստոնէ-
կան եկեղեցիներու ամբողջ սեփականու-
թիւններուն բացարձակ քօնթրօլը: Բա-
րենորոգութեան ատեն աշխարհական
(secular) իշխանները կողոպտեցին եկե-
ղեցին իր սեփականութիւններէն: Բողո-
քական կղերականութիւնը պատճառ մը
չունէր այլևս շարունակելու ամուրիու-
թիւնը, ու այսպէս միակնութիւնը անգամ

մըն ալ սկսաւ գործածական ըլլալ անոնց
մէջ:

Վանքերու և կուսանոցներու մէջ ամու-
րիութիւնը ուղղակի անարգանք մը եղաւ
հասարակական կեանքին. որովհետեւ մե-
նաստաններու լուռ պատերը կվկայեն այն
պիսի պատկերներ, որոնք բնաւ չեն կըր-
նար ներդաշնակիլ իրենց բնակներու դէմ-
քին վրա դժւած սրբաշան արտայայտու-
թիւններուն:

Միակնութեան օրէնքին վրա աւելցնե-
լով ամուրիութեան օրէնքը, եկեղեցին նա
խատինք մը նետեց ամուսնութեան դէմ
ու կղերականներու ու աշխարհականներու
կեանքին մէջ ամենամեծ անառակութիւն-
ներն առաջացուց: Անառակութեան գլուխ
գործոցներ տւած է Սլէքսանդր VI պա-
պը, որ իր հարազատ աղջիկին՝ Լիւքրէ-
թիա Պօրճիայի հետ ապրած է ամենա-
տափոտ պահեր: Այսպիսի արարքներ հազ-
ւադէպ չեն Միջին Դարի մէջ, և ուղղակի
արդիւնքներն են այն բանաբարութիւննե-
րուն, որոնք կղրէին տնտեսական կեան-
քի և մարդկային բնութեան վրա: Լաւ է
որ յիշին այս իրողութիւնները, քանի որ
ժամանակակից եկեղեցիները կաղաղակեն
թէ՛ Սօցիալիզմը միակնութեան վճռական
խափանումը կպահանջէ:

Ճիշտ այն մէթոտները, որոնցով տէր եղաւ իր միաբանութեան հողերուն, նոյն մէթոտները դործածւեցան Հոովմէական հողերու յափշտակութեան համար: Ազարակապանները պէտք էր իրենց հողերը փոխանցէին ուրիշ աւելի ազդու մարդերու անունին, իբր փոխարինութիւն այն պաշտպանութեան, որի պէտք ունէին ուրիշ աւելի ճարպիկ մարդերու գէմ: Իրենց կեանքի ժամանակամիջոցին: Այս սովորութիւնը հետզհետէ առաջ բերաւ աւատական սարուկներ: 475-ին Սէլվիանոս եպիսկոպոսը այս գործառնութիւնը յայտարարեց իբր աւազակութիւն, բայց VIII դարին այս սովորութիւնը արդէն տիրականօրէն հաստատուած էր եկեղեցիին ու գիւղացիին մէջ: Ճիշտ ինչպէս որ զերման պատերազմիկներու պետերը յաղթելէ վերջ Հոովմէական կառավարութեան, իրենց հետեորդներու հողերը զողջան, այնպէս ալ եկեղեցին զողջաւ իր տկար անպաշտպան անդամներուն հողերն աւհարստութիւնը:

Եկեղեցական հանդանակութիւնները նախապէս կամաւոր էին, ու ահա անոնք դարձան պարտաւորիչ տառանորդներ ու կհաւաքէին անխնայօրէն: Թուրի երկրորդ ժողովը, 567-ին, որոշեց նոյնիսկ

սարուկներու տասը բաժինէն մէկը եկեղեցիին արդար իրաւունքը համարել: Եկեղեցիի սեփականութիւնը սկզբնապէս կը համարէր խեղճերու ժառանգութիւն. Ե. դարը սակայն փոփոխեց այդ հասկացողութիւնները, սապէս թէ՛ եկեղեցին իր զանձին մեծագոյն մասը պէտք էր ծախսէր իր պէտքերուն, իսկ մնացած մէկ քաւորը միայն աղքատին համար: Ու վերջ նական ձևը եղաւ իբր գթութիւն, շնորհ, սպուրի կամ գործածուած լաթի ձևով: Նոյնիսկ շատ մը պարագաներու տակ ասիկա ալ ուրացւած է ու աղքատը ձգւած է դուրս, ցուրտ աշխարհի մէջ, բոլորովին զրկւած, իր հետ ունենալով միայն երկինք երթալու շնորհալի մխիթարութիւնը:

Քարլըմաներ կայսրը փորձեց եկեղեցական ստացւածքները չորս մասի բաժնել. այսպէս՝ մէկ բաժին եպիսկոպոսին, մէկ՝ քահանաներուն, մէկ՝ եկեղեցական ընդհանուր ծախսերուն, մէկ՝ աղքատին: Բայց իր մահէն վերջ այդ ալ վերջացաւ կարգ մը խարդախ վաւերաթուղթերու միջոցով, որոնք կուգային հաստատել թէ՛ եկեղեցական հարստութիւնը սկիզբէն կը պատկանէր կղերականին և թէ «աղքատ» բառով կհասկցւէին քահանաները, որոնք

աղքատութեան ուխտ ըրած են: Այս ձրգտումի վերջնական եզրակացութիւնն ունախապէս յիշած ամուրիութեան պարագան—իրը զրկւածի—միացած իրարու, տրամաբանօրէն յաղթանակը կուտային կղերականին: Եկեղեցիին մէջ մեծ ձուկը կլլեց պղտիկ ձուկը:

Նոյն ընչաքաղց աղբակներն էին, բ' մասունքներու, պատկերներու ու սուրբերու պաշտանքի ներմուծութեան ետին պահած էին: Նախնական քրիստոնեաներուն մէջ այս բաները վճռականապէս արգիււած էին. բայց ուէ կերպով կարելի էր արգիւել անոնց մուտքը, որովհետեւ եկեղեցին հասկցաւ թէ անոնք շատ թանկ կարժեն: Հոգիի առուտուրը վերջապէս այնքան հեռուները տարաւ կղերականը, որ դրամի փոխարէն յաւիտենական փրկկութիւն կշնորհէր, ու իր գործակալները կղրկէր ամբողջ քրիստոնէական աշխարհը ամէն մէկ մեղքի փոխարէն այնքան սուղ թողութեան մուրհակներով (absolution slips): Պապական օրհնութիւնները դրամական մեծկակ շահերով առուծախի վրայ էին ու շատ բարձր կգնահատուէին, միշտ եկեղեցի մեքենային ի նպաստ, այնպէս որ Պօնիֆուս Ը-րդ պապը, 1,300-ին հաստատեց «Սուրբ Տարիներ» կոչւած տօնե-

րը, որ կնշանակէին պարբերական ուխտադնացութիւն դէպի Հռովմ, ուր ուխտաւորներ ուղղակի ու մեծաքանակ կընդունէին օրհնութիւնները պապին ձեռքէն, փոխարէնը մեծկակ դումարներ ձգելով եկեղեցական գանձին վրայ, Հռովմի տաճարին մէջ: Պետրոսի մառանին դէզը եկամուտի ուրիշ շահաբեր աղբիւր մը եղաւ կղերական շահատէրերուն համար: Կարելի է ըմբռնել թէ պապերը ո'րքան կ'ախորժէին երբ խոշոր գումարներ կը ստանային առանց ուէ ծախսի, միայն չունչի փոխարէն. և մենք համաձայն ենք Յուլիոս II-ի հետ, որ այս տեսակ շահաւէտ առիթի մը ժպտաղին կըսէր իր մէկ կարտինալին. «Լա'ւ, եղբայր, Յիսուսի Քրիստոսի այդ առակը շատ սուղ կվճարուի չէ»:

Հասկնալի է նաև որ իտալացիները դրամապէս կնպաստաւորուէին պապութիւնը մշտապէս Իտալիայի մէջ պահելով: Ահա' մեծագոյն պատճառը, որի համար իտալացիները թունդօրէն կընդդիմանային պապին Հռովմէն Ալիքնեօն փոխադրուելուն և նոյնիսկ կսպառնային սպաննել այն կարտինալները, որոնք կըւէարկէին Քրանսացի պապի մը համար: Եւ թէև Եւրոպայի բնակչութիւնը չէր որ այնքան զղւած էր պապերէն քան այդ եկեղեցա-

կան կառավարութիւնը ինքն իսկ, և, սակայն, տակաւին խտալացիներու հակառակութիւնը պատիրն դէմ չզնաց. այնքան հետու որ եկեղեցին վնասէր: Զուտ նութական այս շահն էր, որ խտալացիները զբրկեց բարենորոգմաներէ:

Երբ ԺԱ. դարին թուրքերը գրաւեցին արևելեան Միջերկրականի գլխաւոր նաւահանգիստները և տիրացան առևտուրի ցամաքային ճամբաներուն, — Արևելեան Հնդկաստանի —, եկեղեցին ու իր ընտրւածները անմիջապէս խղճահարութիւնն ունեցան մտածելու թէ՛ «իրենց» փրկիչին գերեզմանը անհաւատներու ձեռքն անցած է: Յայտնի է թէ՛ անոնք բնաւ չ'առարկեցին այս անհաւատներու մասին, այնքան պտեն որ թուրքեր եւ սարասիներ արևնց գրամները կրեցին կղերականութեան արկղին: Տասներորդ դարին «սուրբ» կոչւած գերման կայսրութիւնը, Վէրտըն քրիստոնէական քաղաքին մէջ մեծ քանակութիւնով դրամ վաստկեցաւ, պահապաններ պատրաստելով Սպանիայի մէջ մաւրիտացիներու հարէմներուն համար. սակայն երբ այս առուտուրը ըսկըսաւ նւազիլ և դէպի Արևելքի ոսկի աղբիւրները բացւած ջրանցքները թուրքերուն կողմէ գրաւեցան, այն պտեն միայն

չնորհունակ ախոյեանները ոտք ելան իրենց ուժով այս տեսակ ամբարիշտ արարքներու դէմ կուելու և առաջ անցան գրաւելու համար սուրբ գերեզմանը: Անոնք չստացան դայն ամբողջապէս բայց յաջողեցան գերել անհաւատներու հարէմները և կին անհաւատները ծախել իրր գերիներ, որքան որ ինկան իրենց «սուրբ» ճիրաններուն մէջ: Եկեղեցին իր «սուրբ» օրհնութիւնները յորդեց այս «սուրբ» դործին վրա: 1454ի Յուն վար Տին Նիքոլա V պապի շրջաբերականը կայստարարէր թէ՛ քրիստոնէական սուրբ դործ մը կայ. «Բոլոր սարոսիները, հեթանոսները եւ Քրիստոսի միւս թշնամիները յաւիտենական գերութեան ենթարկել»:

Ժամանակակից բարի քրիստոնէաները — անզգոյշ խոստովանութիւն — մեծ եռանդով հետեւեցան այս պանծալի օրինակին: Նիւ Ինկլընտի քաջ փիւրըթանները, ինչպէս նաև հարաւային Մ. Նահանգները բնաւ առիթ մը չփախցուցին յայտնելու համար թէ՛ ո՞րքան տենդօրէն համալու համար թէ՛ ո՞րքան տենդօրէն հետ: Մինչև ձայն էին Նիքոլա V պապին հետ: Մինչև այսօր անգամ պիտի դտնւին բարձրօրէն յարգւած քրիստոնէաներ Հարաւի մէջ, որ տակաւին պիտի հառաչեն «հին բարի գերութեան օրեր» ու վերադարձը:

Արևելեան Հնդկաստանի ու Ամերիկայի ծովազնաց ճամբաները գտնելէ վերջ, «սուրբ գերեզման»ը շուտով լքեցաւ անհաւատներու ձեռքերուն մէջ, ու մոլեռանդ յաղթողները իրենց երեսները դարձուցին դէպի Արևմուտք, ուր անպաշտպան վայրենիներ կսպասէին հաւատացեալներ դառնալու և իրենց ոսկիները ընծայարեցելու:

Տիրող դասակարգերու մէջ հարստութեան աճում մը եղաւ, բայց նոյն համեմատութեամբ աճեցաւ նաև եկեղեցիի անպէտուութեան համար տրամադրելի զանգւածներ պահելու սովորութիւնը: Որքան որ աշխարհական իշխաններ ու ախոյեաններ կգովաբանէին եկեղեցիին վրա իրենց տարած ցանկալի յաղթութիւններուն համար, անոնք, սակայն, միևկողմէ չէին ուզեր այնքան առաջ երթալ իրենց հակառակութեան մէջ, որ ջնջէին պապութիւնն ալ, որովհետև ուրիշ ուժեր կգտնէին, որոնք եկեղեցին ու պահպանողական ազնւականութիւնը առաջ կքշէին: Ու մինչդեռ եկեղեցին աւելի քան ունէ միջնադարեան կազմակերպութիւն կարգելէր գիտական ամէն առաջընթացութիւն, որ իր վարդապետութիւններու խարէտ-

թիւնները կբացատրէր, ան, (առաջընթացութիւնը), սակայն, ստիպւած կզգար աւելի ու աւելի պաշարելի այդ վարդապետական ուժէն, որ թշուառութեան ճիրանով կսեղմէր ու կճնչէր, քարոզելով աշխարհային բաներու ոչնչութիւնը: Բայց հակառակ այդ ընդդիմութիւններուն, Եւրոպայի զարգացած միտքը խորտակեց վարդապետականութեան պատնէյները:

Այն ուժերը, որոնք այս փոփոխութիւնը առաջացուցին, առաջին՝ աշխարհական իշխաններն էին, որոնք սրտազին կփափաքէին կողոպտել եկեղեցին իր հարստութենէն. երկրորդ՝ ստրուկները, որոնք կճնչէին մեծազոյն մտաւորականութեան մը և տնտեսական ազատութեան համար. յետոյ՝ քափիթալիստ դասակարգը, որ կպահանջէր աւելի հող ու աւելի մտաւորական գործաւոր դասակարգ. տակաւին՝ ճարտարարեստական պրօլէտարը, որի առաջին նշանները սկսան երևիլ ժԳ դարին մէջ, և որ ժՁ դարին յարատև մուտք մը եղաւ ընկերութեան համար:

Եկեղեցիին դէմ եղած այս բոլոր յեղափոխութիւններուն մէջ միշտ գործաւոր դասակարգն էր, որ մեծազոյն եռանդը կցուցադրէր դաստիարակութեան ու գիտակցութեան հանդէպ, և միշտ ան էր,

իր պատրաստ էր յեղափոխութիւնը տանելու մինչև իր վերջնական վախճանը: Ասոր փոխարէն, եկեղեցին ու իր առասպելաբաններն էին, որ զիտակցութեան հանդէպ ցոյց տրւած այս եռանդը կյայտարարէին իբր սատանայական ներշնչում:

Եկեղեցիին դէմ դժգոհութիւնը ընդարձակածաւալ էր, իսկ առաջին ընդհանուր յարձակումը չունէր դասակարգային ունեւորութեան հանդէպ ընդհանուր պահանջ մը կար, որ աշխարհական իշխաններու բերանին մէջ կլթադցնէր եկեղեցական սեփականութիւններու տիրացումի ծրագիրներն ու իրենց դժգոհութիւնը նախնական քրիստոնէութեան ուսմակաւարութեան դէմ: Գործաւոր դասակարգի բերանին մէջ աստիկա կնշանակէր հին պրօլէտարական յեղափոխութեան ժամանումը:

Եկեղեցիին դէմ մղւած այս պայքարներուն մէջ դասակարգային կուտակումին բնական հետեանքը այն եղաւ որ՝ տիրող դասակարգերը եկեղեցիին դէմ մղւած պայքարը լքեցին, երբ յաջողեցան անոր սեփականութիւնները կողոպտել. և երբ գործաւոր դասակարգերը, տակաւին չբաւականացած, չէին ուզեր գործը կիսատ

ձգել: Առաջինները գտան իրենց նախկին ազնւական դաշնակիցները, դառնալու համար գործաւորական դասակարգին դէմ, սպանելով յեղափոխական առաջնորդներն ու անոնց հետևորդները ու քրջելով տնտեսական ուրիշ ստրկութեան մը: Ոչ աւելի շուտ քան փոխանցումը ազատ գիւղացիութենէ վարձուր գործաւորութիւն, ստրուկները յաջողեցան ձեռք բերել իրենց ազատութիւնը աւատական լուծերէն: Ուր որ գիւղացիները ազատ էին, ինչպէս Գերմանիայի հիւսիս-արևմտեան մասին մէջ, իրենց դէպի Լուտերականութիւն ունեցած հակումին արդիւնքը եղաւ անոնց համար փոխանցում մը դէպի աւատական ստրկութիւնը:

Այսպէս եղաւ, ամէն երկիրի մէջ, դէպքերու ընթացքը, որ ստեղծեց ընկերային շարժում մը աւատական եկեղեցիին դէմ: Ճակատագիրն էր, որ Լօլարտները* ձգեց Ուօթ Թայլըրի և Ճան Պօլիի ձեռքին տակ: Ուայքլիֆ, թէև անգլիական գիւղացիութեան մտաւորական մէկ առաջնորդը, իր

* 14-րդ. դարի հերետիկոսները, որ իրենց պետին, W. Lollardի անունով կը կոչւէին, և որ 1322-ին այրւեցաւ Քօլօնի մէջ: Ծան. Թրգմ.

ընդդիմութիւնը չտարաւ մինչև այն կէտը, որ կարենար վտանգաւոր ըլլալ անդլիական տիրող դասակարգերուն: Լուտէր և բարենորոգումը կարժանանան նոյն արհամարհանքին: Երբ կրկնամկըրտականներն ու հիւսեանները խոր խոցւեցան, հաւաքւած դասակարգային շարժումի մը մէջ ու բոլոր տիրող դասակարգերուն դէմ ձախտած, հազարներով խոշտանդւեցան, այրւեցան, խեղդւեցան ու ողջ ողջ թաղւեցան: Այս ջարդերն ու անմեղ կիներու այրւիլը, իբր կախարդներու, եկեղեցիի արիւնագիր պատմութեան ամենասե երկու էջերը կկազմեն:

Միջին դարի յեղափոխութիւններն ալ քրիստոնէական նախնական շարժումին պէս արիւնի ծովերուն մէջ խեղդւեցան. սա տարբերութիւնով որ այս նախատինքները Միջին դարի մէջ կազմակերպող մարդերը տարբեր ազգի մը կամ դաւանանքի մը պատկանող մարդեր չէին, այլ քրիստոնեաներ քրիստոնեաներու դէմ: Եւ այս պատիւին մէջ բողոքական քրիստոնեաներ դուրս եկան նոյնքան վայրագ դէպի գործաւոր դասակարգերը իրենց ունեցած ատելութեան ու հալածանքներուն մէջ, որքան կաթոլիկ քրիստոնեաները: «Մէրի կրօնք»-ը ինքզինքը անուժ յուցա-

ղբրեց տնտեսական հակառակութեան դէմ:

Երևակայեցէ՛ք—եթէ կրնաք—այդ կըրաւորական ճիւղին հրէշութեան խորութիւնը. կաթոլիկ թէ բողոքական, որ կկանդնի դէպի երկինք սեւեռուն աչքերով, մինչդեռ իր ճիւղային մազիլները ճիւրանած են ձեր երկրաւոր իրաւունքները, որ հողեկան և բարոյական խրատատուի ձևեր կկապէ, մինչդեռ իր հողին նենդ է ու բարոյականը այլասերած, որ ինքզինքը կյայտարարէ իբր բացարձակ իմաստուն և մարդկային մտածումներու գիտակ ու հաղորդակից. մինչդեռ արդահատելիօրէն տգէտ է բնական, տիեզերական ու ընկերական բնաշրջումներու մասին, որ իր երևակայութեան մէջ գերբնական իմաստութիւն ու ներշնչում կկեղծէ. մինչդեռ իր ուժը միմակ Փրկիքական ու տգիտութեան վանողական ուժին մէջ կը մնայ, և որ այդ բոլորը կընէ սուտի քողին տակ, որ իր վրա կկրէ հին քրիստոնեայ պրօլէտարութեան աստիճանը, որ ինք մահացուց, և որի, իբր թէ, առաքելութիւնն է, իր խոշտանգումին իսկ գիտով, հետապնդել ցանկալի վախճաններ, մինչդեռ ինք կանդնած է արդէն ճնշողներու կողմը՝ ճնշողներուն հակառակ:

Ընդվզեցուցիչ է մտածել թէ՛ միլիոնաւոր ժողովուրդներ թաթխւած արւեստականօրէն ստեղծւած տգիտութեան մէջ և կալանւած այս կրաւորականութեան հսկայ մեքենայէն, պէտք էր որ ղեկավարւէին անոր իրենց սիրտին ամենէն խոր բունկ գաղտնիքները, պէտք էր որ անպայմանօրէն անձնատուր ընէին իրենց մանչերուն ու աղջիկներուն կոյս ու անարատ միտքերը իր դիւային դործերուն, և պէտք էր որ ստրկացնէին իրենց իսկ կեանքերը կեանքի ամենատարրական պահանջներուն համար, որպէսզի այդ ճիւղը և իր ճարպիկ արբանեակները կարենային փառաւոր ու հեշտին կեանք վարել, հակառակ իրենց ուսուցած տառին ու հողին:

Տակաւին աւելի ընդվզեցուցիչ է մտածել թէ՛ այն մարդերը, որ հիմա կկառուվարեն այս մեքենան, տակաւին միջոցներ պիտի փնտռէին թակարդելու համար ժամանակակից պրօլետարական յեղափոխութիւնը, նոյն անամօթ միտումներով այն յեղափոխութիւնը, որ միակ տարրն է մարդկային ընկերութեան մէջ, որ իրապէս ու ճշմարտօրէն կհետեւի իր առաքելութեան:

Եթէ իրապէս հաւատան անոնք թէ՛ ան

երկիր պիտի գայ նորէն և պիտի դատաստան ընէ, անշուշտ իրենց որջացած հոգին պիտի դողայ, որովհետև գիտեն թէ՛ իրենք բուն իսկ այն մարդերն են, որոնց համար ըսաւ ան, իրենց իսկ գրածով. «Դո՛ւք զաւակներն էք անոնց, որ մարգարէները սպաննեցին. լեցուցէ՛ք ուրեմն ձեր հայրերուն չափը. դո՛ւք, օձե՛ր, ի՞՞՞՞՞՞՞ ծնունդնե՛ր, ինչպէ՞ս պիտի փախիք դժոխքի անէծքէն»):

Իրենց համար աւելի լաւ պիտի ըլլայ վստահել պրօլետարին վեհանձնութեան քան Բրիտտոսի: Ան կսպառնայ դժոխք զրկել, մինչդեռ պրօլետարը դործի պիտի զրկէ: Բայց թերևս անոնք կխորհին թէ՛ շատ տարբերութիւն չկայ դժոխքին ու դործին մէջ: Պրօլետարը շատ լաւ կը հասկնայ այդ տարբերութիւնը: Ան թէև դժոխքի մէջ և սակայն գիտէ թէ՛ դործը, որով ճիւղը դժոխք մը ստեղծեց այս աշխարհէն, կընայ կեանքի վերածել իրական հաճոյքով:

Պրօլետարը, սակայն, գիտէ նաև որ ստիկա կընայ ըլլալ միայն յաղթական վախճանին հասցնելով այն նպատակը, որ նախնական քրիստոնեաները փառաւորօրէն սկսան. իսկ կաթոլիկ ու բողոքական եկեղեցիները ջնջեցին: Եթէ սպասա-

ւորութեան, գերութեան, ստրկութեան
ու վարձկան բանւորութեան բոլոր կողմերը
կանգնին կողք կողքի այսօր քրիստոնեայ
գործաւորները կվճարեն լիօրէն
ու կխղճեն իրենց թշնամիները իրենց
եկեղեցիներուն մէջ, ինչպէս այս վերջինները
կընեն այսօր քաղաքական պաշտօնատուներուն
մէջ:

Միակ տարրը՝ դասակարգօրէն դիտակից
պրօլէտարն է, որ կճանչնայ իր թրջնամիները
թէ՛ եկեղեցիին և թէ՛ կառավարութեան
մէջ, որ անաչառօրէն (uncompromisingly)
կպայքարի անոնց դէմ, և որ վերջապէս
պիտի յաղթանակէ, որովհետեւ չէ
կարելի թակարդել այլևս նոյնիսկ
սատանայական միջոցներով կամ
այն հնարքներով, որոնք աղետալի եղանակով
նախնական պրօլէտարութեան ու խղճեցին
Միջին Դարի յեղափոխութիւնը:

Եւ երբ դատաստանի օրը հասնի, որովհետեւ
ան վստահաբար պիտի դայ, տիրող դասակարգերու
եկեղեցիները պիտի տապալին նոյն
այն սիսախմբներով, որոնցմով
ասլրեցան, և հին ու միջնադարեան
յեղափոխականներ անցեալը պիտի նշանացուցեն
մեզի ու ըսեն. «Աղէկ եղաւ»:

VI

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՅԵՂԱՓՈՅՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԻՐ ՅՈՒՔԸ ՖՐԱՆՍՍՅԻ ՄԷՁ

Ամերիկեան առաջին դալթականութեան
պատմութիւնը պատանքած է անդամակերպ
ու առասպելի բանաստեղծական շարքով
մը: Սիրուն է ան, բայց անճիշտ. առասպել
մը, որ պատմութիւն անունին տակ
կտպաւորեն երիտասարդ մտքերու
մէջ և որ քաղաքական ու գրական
ներկայ ձևերով կանուցանէ չափազանց
թեւեղութեան միտքը:

Արկածախնդրութեան լուսաճաճանչը
կիսայլի Մէյ Ֆլաուր-ի (նախն անունը)
թրջած առաջատին վրայ, իր զօրաւոր
ճամբորդները հագած են փիւրիթան մար-

տիրոսութեան գեղեցիկ պատմութեանը, և
կսիզան անկախութեան հարաւ կանգնե-
լածքով: Սարսուցուցիչ ջարդեր և բարե-
կամական գրկախառնումներ իրարու կյա-
նորդեն հնդիկներու հետ յարարութիւն
ունեցողներու կեանքին: Զինուորական թօն
մը կտիրէ ամբողջ պատկերին, և արիւնի
ու հերոսութեան հոտը միշտ օդին մէջ կը
բուրէ: Այս կեանքին դաժան պատկերը
երբեմն կը քաղցրախառնուի պատահական
յուզիչ սէրով մը և մարդագետիներուն ու
անտառներուն վայրի գեղեցկութիւնը այս
ամբողջին լրացուցիչ փայլը կուտայ:

Ամէն պղտիկ հաստատութիւն, և ամեն
գաղութ ինքնիրմով կապարարի հնդիկնե-
րու վայրենութիւններուն դէմ: Երբ հըն-
դիկներ քիչ մը ատեն հանդիստ կմնան,
այն ատեն մէկ գաղութը կկուրի ուրիշ գո-
ղութի մը դէմ. անդղիացի, տանիմար-
գացի, Փրանսացի, սպանիացի՝ հնդիկ-
ներու գործերուն միօրինակութիւնը կը բա-
րեխառնեն պարբերաբար իրարու դէմ ար-
շաւելով: Անշուշտ ամեն մէկ գաղութ կա-
ղօթէր նոյն աստուածին բնաջնջելու համար
միւսը: Ոչ մէկը կհարցնէ թէ՛ ի՞նչպէս
կրնայ ըլլալ այս քրիստոնեաներու իրար
դէմ ունեցած փարատիչ առաքելութիւնը.
և տակաւին իրար սպաննելէ վերջ, այնքան

հեռուները կերթան, որ հնդիկներուն կը
քարոզեն սէրի ոգին, գիտնալով որ հըն-
դիկները չեն որ կը ջարդեն կամ կը ջարդուին:
Այնպէս կը թւի թէ ասոնք յիմարական յան-
կարծական նուաճելէ բռնած, որի մի-
ջոցին մէկ կողմ նետած քրիստոնէութեան
բոլոր յանկարծական սկզբունքները, ա-
ւելի հեթանոսներ էին քան հեթանոս հըն-
դիկները: Բայց երբ լուսնոտութիւնը
կանցնէր, յաղթողները նորէն կը առնային
քաղցրաբարոյ ու սիրատար քրիստոնեա-
ներ, եթէ կարելի է հաւատալ պատմա-
բաններու ըսածին: Բայց ի՞նչ բանէ կը ը-
նէին այս յիմարութիւնները:—Ո՛հ, ո՞վ
պիտի ուզէր, որի՞ հոգն էր հարցնել,
փնտռել այս սարսուզեցիկ պատմու-
թիւններու պատճառները:

Ասիկա ամերիկեան պատմութեան ա-
ռաջին շրջանն է:

Յետոյ պատկերը կիտիւի: Երկրորդ
շրջանին տասներեք գաղթավայրեր անգ-
լիացիներու ձեռքը անցան. բայց տարօ-
րինակ բան. անոնք ամէն ատենէ պակաս
դուճ եղան, թէ և անոնք ժողովուրդներուն
մեծագոյն մասը անգլիացի էին: Ու մենք
կլսենք որ անգլիացիները կճնչեն գաղթա-
կանները. ուրիշ խօսքով, բրիտանական
անգլիացիները կճնչէին ամերիկեան անգ-

լիացիները :

Յանկարծ մենք կտեսնենք մեծ և բացառապէս հերոսական ու արդարադատ դէմքեր , որ կբարձրանան դադթականներու մէջ : Յանկարծական երեւոյթը մարդկային այս կատարեալ արարածներուն ցընցող տպաւորութիւնը կսկսին ընել : Եւ ահա խանդավառող յեղափոխութեան մը փոթորիկը կտարածւի դադթավայրերուն վրա : Անկախութեան հռչակումը հնչուն շեշտերով կյայտարարէ մարդերու հաւասարութիւնը : «Մեր երկրին հայրը» կըլըզըքտէ բրիտանական առիւծը և ազատորդիին հողն ու քաջորդիին տունը» իր իւր անկախ կառավարութիւնը կհիմնէ , խզելով նենդաւոր Ալլիսոնի հետ ունեցած արիւնի ու ազգակցութեան բոլոր կապերը :

Ի՞նչն էր որ այսպէս նոյն տեղի եղբայրները , նոյն քրիստոնեայ եղբայրները մահացու թշնամիներ կընէ իրարու : Դարձեալ մեր հարցումը կհանդիպի դատան լըռութեան մը :

Այսպէս կվերջանայ ամերիկեան պատմութեան երկրորդ ժամանակաշրջանը :

Յետոյ կբացւի երրորդը , որի մէջ կապրինք այսօր : Այս շրջանին մէջ բարդաւածումի ալիքներ իրարու կյաջորդեն , բացառապէս բարեացակամ թւականներ գըր-

կելով : Հաւասարութիւն և ազատութիւն յաւերժօրէն կթագաւորեն : Կեանք , ազատութիւն , երջանկութեան հետապնդում և այսօրինակ մարդկային անփոխարինելի իրաւունքներ խօլադին կապրին , և ամեն բան սիրուն է , կամ պէտք է ըլլայ : Ու ով որ ուէ կասկած կյարուցանէ ուէ հարցումով վրդովելու այս երազը՝ անիշխանական մը , կամ բանւորական միութեան անդամ մը , կամ , թերևս , ընկերավարակոն մըն է :

Ամերիկեան պատմութեան այս շրջանը տակաւին չէ փակւած :

Բայց այս երկիրին անդիր կամ թաղւած պատմութիւնը ուրիշ լեզու մը կխօսի : Այս երկիրին անգիր պատմութիւնը ամերիկեան գործաւոր ժողովուրդին պատմութիւնն է : Իսկ թաղւած պատմութիւնը կմբափէ պաշտօնական վաւերագրերու փոշիներուն տակ անմատչելի՝ պրօլէտար բոլոր մտածողներուն , որոնք լոյս աշխարհ պիտի հանէին անոնք , դատապարտելու համար տիրող դասակարգերու պատմագիրերը ու խցելով այդ դասակարգերու բոլոր բերանները :

Օր մը անոնցմէ մէկին կողմէ պիտի դըրի ամերիկեան գործաւոր ժողովուրդին պատմութիւնը : Հետագայ տողերով ես

պիտի հրատարակեմ քանի մը ցանուցիր
իրողութիւններ, թաղւած պատմութեան
մէջ, որ կ'մոռնայ յիշել արծաթեղու քո-
ղաքագէտը, երբ ան գործաւոր ժողովուր-
դի ունկնդրութեան մը առջև, Յուլիս Չոր-
սի առիթով կ'հասէ :

Պատենք վէպի ու աւանդութեան քո-
ղը և սրօլետար մտածողի պայծառ աչքե-
րով դիտենք այս երկիրի պատմութեան :
Ի՞նչ տեսակ ժողովուրդներ էին, որ եկան
Նւրպայէն, հաստատուելու համար Ամե-
րիկա, և ո՞ր աստիճան կ'համաձայնին ի-
րենց թուղթ-յայտարարութիւնները իրենց
գործերուն հետ :

Ճլօրիտայի մէջ սպանիացիները առա-
ջին անգամ հաստատուեցան :

Անոնք կաթոլիկ քրիստոնեաներ էին և
Ճլօրիտայի մէջ հաստատուեցին ճիշդ նոյն
սխտէմով աւատական բռնակալութիւնը,
որ իր ամբողջ փառքովը տեսանք նախորդ
գլուխին մէջ : Ոչ մէկը վայրկեան մը կըր-
նայ ակնկալել որ այդ հողամասէն եկած
ըլլան զիջողութեան, հաւասարութեան և
մարդկային ազատութեան զաղափարնե-
րը :

Վիրճինիայի մէջ ձէյմսթաունի գաղ-
թավայրը կազմուեցաւ անոնցմէ, որոնք հին
արձանագրութիւններու համաձայն «ամ-

բողջապէս աղնւական էին» : Անոնք, բնա-
կանաբար, հետեւորդ ծառաներ ունէին :
Անդին, Բոնօքի գաղութը գլխաւորաբար
կբազկանար երկրագործներէ, իրենց կի-
ներով ու զաւակներով : Այս տարրե-
րուն միջև հաւասարութեան պահանջ չը
կար. անգլիական եկեղեցին պաշտօնակա-
ն կրօնն էր, և բոլոր հրովարտակները թոյլ
չէին տար գաղթականութեան առաջին
սարիներուն միանալ ուրիշ կրօններու :

Մէյքիլէնտը Անգլիայէն եկած հոգի-
մէտական կաթոլիկներ հաստատուեցին : Ի-
րենց նկարագիրը ընդունակ էր կրօնական
և քաղաքական ազատութեան», բայց այս
կրօնական ազատութիւնը կմերժէ ամեն
անոնք, որ չէին համաձայնէր գաղութին
պետերուն հետ, իսկ քաղաքական ազա-
տութիւնը այլտեղ ալ անձանօթ է, որքան
միւս գաղութներուն մէջ :

Փիւրիթանները «պարզ երկրագործներ»
էին, բայց Ուինսլօի պէս Մէյքլաուրն ալ
«բարձարագոյն պայմաններու անձնաւո-
րութիւններ» տարաւ իր հետ, որոնց մէջ
Մայլս Սթէնտիշի պէս զինուորական ար-
կածախնդիրներ շատ եղան : Փիւրիթանները
կուղէին աստուած պաշտել իրենց ուղած
կերպով. բայց անոնք ուրիշներու հանդէպ
այնքան մոլեռանդ էին որ փիւրիթաննե-

րու իշխանութեան ատեն Անգլիայի մէջ կաթոլիկներու համար եղած պաշտպանութիւնը տեղի տւած էր: Եւ այն փիւրիթանները, որ Բօճըր Ուիլիըմս գաղութէն արտաքսեցին կրօնական հայածանքին պատճառով, շուտով ստիպեցին ուրիշ աղանդներու պատկանող անդամները փախիլ անտառները: Բօճըր Ուիլիըմս գաղութէն արտաքսեցաւ, որովհետեւ բողոքեց ըսելով թէ՛ ամեն աղանդ հաւասարապէս իրաւունք ունի օրէնքէն պաշտպանելու և որովհետեւ յարձակեցաւ քաղաքակրթութեան հիմնարկութիւններուն վրայ, յայտարարելով որ թագաւորը իրաւունք չունի հընդիկներու հողերը յափշտակելու: Բայց ինչ որ մոլեռանդ փիւրիթաններ կընէին արդարացի էր իրենց մտածումով: Աղօթել, կուրի և յափշտակել իրենց գլխաւոր գրադումներն էին. վերջերը պատրաստեցին շաքարօղիի պատրաստութիւնը և անոր փոխանակութիւնը ամերիկեան նէկրօներու ուրիշ արտադրութիւններուն հետ: Իրենց գիւղական ժողովը, որ շատ մը պատմագիրներու կողմէ նկատուած է իբր ամերիկեան ռամկալարութեան որրան, ամենէն բացարձակ նկարագիրով աստուածպետութիւն մըն էր: Նոյնիսկ իրենց գաղութային կոչաւ եկեղեցիներուն

մէջ ամեն մարդի տեղը որոշուած էր, իւրաքանչիւրին ընկերային գիրքին համաձայն:

Բնակչութեան աճումին հետ դասակարգի բաժանումներն ու կրօնական հակառակութիւններն ալ աճեցան բոլոր գաղութներուն մէջ: Քէյքըրներու դէմ եղած հուլածանքն ու իբր «կախարդ»-ներու խաբակումները կհաստատեն այն ժամանակներու Նիւ Ինկլընտցիներու մոլեռանդութիւնն ու անտանելիութիւնը:

«Անգլիայէն բերած ընկերային նախապաշարումները տակաւին կապրէին, կը դրէ Սթիլ իր «Մ. Նահանգներու համառօտ պատմութեան» մէջ: «Նոյնիսկ Նիւ Ինկլընտի մէջ պաշտօնական գիրքեր մեռաւոր հեղած էին քանի մը մեծ ընտանիքներու կողմէ և յաճախ հայրէն որդիին կփոխանցէին: Հարվըրտի և Եէյլի ուսանողներու ցանկը երկար ատեն դասաւորուած են ընտանեկան անուններու առախճաններուն համաձայն... Տարագներու որոշ ձևեր, որ կցուցնէին ընկերութիւններու բարձր և ստոր դասակարգեր, ինչպէս Եւրոպայի մէջ, երկար ատեն հետևողականօրէն պահուած մնացին նոյնիսկ ռամկալար Նիւ Ինկլընտի մէջ: Հորթի կաշիէ շինուած կօշիկներ հագնիլ, մինչև

Յեղափոխութեան ժամանակ, ազնւականներու բացարձակ իրաւունքն էր. իսկ ծառաներ կհագնէին կովի կաշիէ շինւածներ: Ազարակապաններ, մեքենադորձներ, աշխատաւորներ ու բանւորներ ընդհանրապէս կարմիր կամ կանաչ պաստառէ բաճկոն կհագնէին և անոր հետ կաշիէ կամ դունաւոր տալիատ ու կաշիէ դոգնոց մը... Վարձւած կիներ կհագնէին կանաչ պաստառէ կարճ չըջաղպետ և կտակէ կիսաղդեպտ... Գաղթական ազնւականը, սակայն, իբր աւաւօտի տարաղ կկրէր մետաքսէ կամ թաւիչէ դտակ ու չըջաղպետ, իսկ իբր իրիկունի տարաղ՝ կաշոյտ, կանաչ կամ ծիրանեղոյն, գեղեցկօրէն զարդարւած մետաքս կամ թաւիչ բանւածքներով, ճոխացած ոսկի կամ արծաթ կապերով, կոճակներով ու ճարմանդներով: Լայն ծոպեր կրնային ձեռքերուն վրայ, իսկ փողոցի լաթերը կիւպրիէին իրենց ոսկի ճարմանդակներուն տակ, միւս կողմէն ոսկեղունդ դաւազան մը ու քթախոտի ոսկի կամ արծաթ տուփ մը իր ընկերային դիրքին անհրաժեշտ պայմաններն ու նըշաններն էին: Հագուստի մասերը օրէնքով սահմանաւորւած ու կանոնաւորւած էին: Ո՛չ մէկ մարդ, որի ստացւածքը 200 սթէրլինկը չէր անցներ, կրնար ոսկի կամ ար-

ծաթ ճարմանդներ կրել կամ ուէ կապորի եարաը երկու շիլինը անցնէր: Երեսփոխաններէն կպահանջէր իրենց հագուստով զանազանիւ ժողովուրդի հագուստէն, մասնաւորապէս իրենց «ժապաւէնով և մեծ կօշիկներով»: Ազնւականները մինակ, մէջը ըլլալով երէցներն ու իրենց կիները, իրենց անունին հետ կունենային «պարոն և տիկին» տիտղոսը: Միւսները, այսինքն ծառաներու դասակարգէն վեր գտնւողները, կկոչուէին լաւ մարդ (Good man) և լաւ կին (Goodwife)... Հարաւամասի մեծ ընտանիքներու պետերը լօրտերու պէս կապրէին, ու կպահէին բանակներու վոհմակներ ու ախոռներու մէջ գեղեցիկ նժոյգներ. եկեղեցի կամ քաղաք կերթային կառքով ու ձիաւոր հետևորդներով: Իրենց ընդարձակ ապարանքները երբեմն շինւած էին ընտիր աղիւսով, որի մէջ մեծ սանդուխը, զարաւանդակներն (Mantels) ու որմադրւազները (Wainscot) շքեօրէն զարդարուն՝ տախտակամածէն մինչև առաստաղ կհասնէին, որոնք շինւած էին դուռ մահոկանիէ ու գեղեցկօրէն զարդարւած: Պնակադարանները կիւայլէին իրենց ոսկի և արծաթ պնակներով, իսկ սէղանները ծածկւած էին հին աշխարհի բոլոր զարդարանքներով: Սև սպասաւորներ

կազմ ու պատրաստ կտարախէին հրամանի: Ամէն աշխատութիւն կըլլար գերիններու միջոցով նկատելով որ այդ գործը ճերմակ մարդուն համար նւաստութիւն էր: Նոյնիսկ սարուկներու և բոյսերու հսկողութիւն ընդհանրապէս կյանձնէր վերակացուններու, երբ անդին տէրերը շտալ հիւրասիրութիւններ կրաշխէին ու ընկերային կամ քաղաքական խնդիրներով կը դրադէին»:

Ո՞ր է սնապարծ ռամկավարութիւնը այս նկարագրութեան մէջ: Հիւսիսային գաղթականները կներկայացնէին հին Եւրոպան իր ծառայի ու խեղճ բանուորի կեանքով: Լօրտը անոնք կյատկացնէր իրեն հաճոյ երեցած գործին: Անդին Հարաւի մէջ հոռովմէական անտեսականօրէն սարուկ կեանք մը կպարզէր, ուր խեղճ ճերմակ ժողովուրդը գործաւորի արհամարհամ «չքանչան»ն ունէր իրեն իբր զարդ:

Կրնա՞ր Հիւսիսի կղերականութիւնը կամ Հարաւի արխատողատութիւնը ինքզինքը կամաւորապէս զրկել իր բարձր դիրքէն ու առաւելութիւններէն և կամ կրնա՞ր ինքզինքը հաւասար յայտարարել գործաւորներուն ու ծառաներուն, որոնց վրա կնայէին իբր ցած արարածներու:

Տակաւին, մինչև որ ժողովրդային յե-

ղափոխութիւնը չծագեցաւ, կղերականութիւնն ու արխատողատութիւնն էին մինակ որ կրնային այս տեսակ յայտարարութիւն մը գործնական վիճակի մէջ դրնել: Անոնք իրենց ձեռքին մէջ ունէին բուրբ էական պաշտօնները թէ՛ Հիւսիսի և թէ՛ Հարաւի մէջ, կհսկէին ամէն անոնց վրա, որ հասարակական ներքին պաշտօններ ունէին: Անոնք օրէնքներ շինած՝ կը ճնշէին միւսները, մասնաւորապէս «ստորին դասակարգերը»: Իսկ այս օրէնքները այնքան դաժան ու անտանելի էին որ մինակ ճիւղային մոլեռանդութիւնն ու վայրագութիւնը կրնային դանոնք ստեղծել: Հազիւ կատակի նշանակութիւն ունեցող յանցանքներու համար սովորական բան էր հրապարակային նախատինքի ենթարկել: Պաշտօնական առաջին օրէնքներէն մէկն էր, եկեղեցիին համաձայնութիւնով, կախաղանի բարձրացում: Նիւ Ինկլընտի մէջ ատեն մը տասներկու մահով պատժելի յանցանքներ կային, իսկ Վիրճինիայի մէջ տասներեօթը: Եւ այս «յանցանք»ներէն մեծագոյն մասը մասնաւոր սեփականութիւն «արբութեան» հանդէպ ջնշին թերացում մըն էր: Պարտքի համար բանտարկութիւնը սովորական բան էր իսկ գործաւոր ժողովուրդին կէսէն աւելին

ծանր պարտքերու տակ էին: Հազադէպ էին այն պարտական աշխատաւորները, որ փոխանակ բանտարկելու կ'արձէին իրենց պարտատէրերէն աշխատելու համար, իրենց պարտքերուն փոխարէն, ճիշդ ինչպէս հիմա նէկրօներուն կընեն Հարաւի մէջ: Նոյնիսկ դործաւոր ժողովուրդի ապրելակերպը սահմանազուծ էր օրէնքներով: Որքան ատեն որ փիւրիթաններ կ'իշխէին Նիւ Ինկլընտի, դործաւոր ժողովուրդը պարտաւոր էր անկողին երթալ կամ անկողինէն ելնել զիւրի զանգակի ղօղանջին հետ: Իսկ կարգ մը օրէնքներ ալ կային փող ու թմբուկ դործածելու համար զանգակի փոխարէն:

Ամերիկեան Յեղափոխութեան ատեն արգարութեան մաքիալէլական օրէնքներէն շատերը մեղմացան: Կրօնական հակառակութիւններ իրենց բացարձակապէս քաղաքական հանգամանքը կորսնցուցին, սակայն դասակարգային շերտաւորումները աւելի քան երբեք շեշտեցան ու դործաւոր ժողովուրդի զանգամօր քաղաքականապէս ո՛չ լաւացաւ և ո՛չ ամբողջապէս իրաւազրկեցաւ:

Ուէ դործաւոր չկար իբր անգամ տասներեք գաղթավայրերու ուէ օրէնսդրական մարմինին մէջ: Այն յիսուն և մէկ

մարդերը, որոնք հաւաքեցան Ֆիլատէլֆիայի մէջ, 1776-ին, համաձայնելու համար Ամերիկայի Հասարակապետութեան հռչակումին, բոլորն ալ («ազնւական») էին, ո՛չ իսկ մէկ գործաւոր կար որ ստորագրէր Անկախութեան հրովարտակին տակ: Այն ժամանակ գրեթէ երկու միլիօն բնակչութիւն կար գաղթավայրերուն մէջ և միայն քանի մը հազար («ազնւական»), որոնք սակայն սկսան բոլոր յուզումները առաջնորդել ղէպի յեղափոխութիւն:

Ի՞նչպէս կարելի է որ այս ազնւականները, հպարտ իրենց ընկերային առանձնաշնորհումներով և անհնար անոնց նոյնիսկ ամենապղտիկ մասէն զրկելու, կարենային յայտարարել թէ՛ ամէն մարդ հաւասար ծնած է: Ի՞նչ նշանակութիւնով, ի՞նչ իմաստով գրեցին ատիկա, կամ ուղեցի՞ր որ բան մը նշանակէ. կա՞ր արդեօք մէկ հատ գոնէ այդ մոլորեցնող Փրօրագներէն, որ քաղաքագէտները այնքան ազատական կղարձնէ, երբ դործաւոր ժողովուրդին պէտքը կղզան զայն գընդակներուն բերանը զրկելու համար:

Քիչ մը մտածենք այդ Փրօրին վրայ: Ի՞նչ հայեացքով բոլոր մարդեր հաւասար ծնած կհամարուին: Հաւասար ծնած են անոնք Փիլիքապէս ու մտաւորապէս: — Չը-

կայ մէկը որ ատոր հաւատալու չափ մի-
ամիտ ըլլայ: Անոնք տնտեսապէս հաւա-
սար ծնած են:—Մենք տեսանք արդէն
թէ՛ ո՛չ, թէ՛ դադրականային օրերուն և
թէ՛ այսօր: Անոնք ընկերականօրէն հաւա-
սար ծնած են:—Անիմաստ պիտի ըլլար
ընկերային հաւասարութեան մասին մը-
տածել առանց տնտեսական հաւասարու-
թիւն ունենալու: Անոնք քաղաքականապէս
հաւասար ծնած են:—Բնա՛ւ: Գործաւոր
դասակարգերու խոշոր զանգւածները քա-
ղաքականապէս իրաւագրկւած էին դադ-
րականական օրերուն, ինչպէս այսօր՝ այս
«փառաւոր հասարակապետութեան» օրե-
րուն: Անկախութեան հռչակումը ստորու-
գըրողները ամենադոյզն միտումն անդամ
չունեցան անոնց տալ «ազնւականներ»ուն
հաւասար իրաւունքներ: Արդէն ամբողջ
իգական սեռին արգիլւած էր քաղաքական
կեանքի մէջ ունէ մասնակցութիւն ունե-
նալ: Անոնք հաւասար էին օրէնքի առ-
ջև:—Ո՛չ մէկ մտածող մարդ վայրկեան
մը պիտի հաւատար թէ՛ քաղաքական ի-
րաւունքներէ զրկւած գործաւոր ժողո-
վուրդը ազնւականներու հետ հաւասա-
րապէս պիտի դատէր դատաւորներէն,
որոնք նոյն այդ ազնւականներն էին:

Ուրեմն ի՞նչ կնշանակէր այդ Ֆրազը:

Արդեօ՞ք կնշանակէր թէ՛ պէտք է որ ա-
մէն մարդ հաւասար ծնի, թէ՛ պէ՛տք է որ
ընկերային, քաղաքական ու տնտեսական
հայեցակէտէ հաւասար ըլլայ: Եթէ՛ այդ-
պէս է, ի՞նչ ըրին ազնւական յեղափոխա-
կանները զայն իրագործելու համար: Ի՞նչ-
պէս առաջադրեցին օգնել բոլոր մարդե-
րուն, առանց ստացւածքի ու դասակարգի
խտրութեան, ու ապահովելու համար ա-
նոնց «անփոխանցելի իրաւունքներ»ու
սեփականութիւնը:

Անոնք ոչինչ և բացարձակապէս ո՛չինչ
ըրին իրենց թուղթ-յայտարարութեան ո-
գիւր համաձայն: Ընդհակառակը իրենց
ամբողջ ուժով ամէն բան ըրին մարդերը
անհաւասար պահելու համար: Ո՛չ միայն
ամէն բան ըրին յաւերժօրէն ապահովելու
համար ազնւականներու առանձնաշնոր-
հումները, այլ զօրաւոր արգելքներ ալ
դրին գործաւոր ժողովուրդին առջև, որ-
պէսզի «գերազանցօրէն տառացի» ըլլար
անկախութիւնը անոր, այդ ժողովուրդին,
համար:

Միջանկեալ կարելի է ըսել որ Ամերիկ-
եան Յեղափոխութեան այն ազնւականօ-
րէն հերոսները այնքան ալ դադափարա-
կան առաքինութեան նշանակելի տիպար-
ներ չէին, ինչպէս պատմագիրներ կներ-

կայացնեն: Ուօշինկիթըն, մարդ մը, որ «սուտ չէր խօսեր», գրեթէ 30,000 արտավար հող դողցաւ անդլիական կառավարութենէն, երբ կառավարական հսկիչ էր, և երբ իր սեփականութիւնը վտանգւեցաւ “Quebec Act” ի կողմէ, ուրիշ աղնական մը, Բենիամին Ֆրանքլին, Լօնտօն զրկեց, բաժնեկիցի պայմանաւորումով, կառավարական ուրիշ պաշտօններ ձեռք բերելու համար: Ասիկա ակներև կցուցնէ Ուօշինկիթընի ճկուն կարողութիւնը առևտրական տեսակէտէ. իսկ մարդ մը, որ կրնար գողնալ առևտրական ձևի տակ, պիտի տիրանար անպայման ուրիշ աւելի դերագանց կարողութեան մը—ստելու կարողութեան—միշտ առևտրական յաջողութեան ի նպաստ:

Առևտրական դասակարգի հայեցակէտէն Ուօշինկիթըն կրնայ խօսալական աղնըական մը եղած ըլլալ, և արդէն անոնք նախապէս գիտէին թէ՛ ինչ կընէին, երբ գինքը նախագահ ընտրեցին, սակայն գործաւորական տեսակէտէն ան հաշտագէտ ու խարդախ շահագործող մըն էր: Ան փորձեց Փալաթինաթէն դերմանացիներ բերել աշխատցնել իր հողերուն վրա, բայց անոնց առաջարկած պայմանները այնքան խիստ էին, որ նոյնիսկ այս գեր-

ման ազարակապանները, որ այնքան վարժած էին ճնշումի, մերժեցին զալ Ամերիկա ու աշխատիլ «Մեր Երկիրին Հայրին» համար:

Ճէֆըրսոն նոյնպէս թիփիկ հարաւցի աղնական մըն էր, արխտողրատ բոլոր սովորութիւններով ու յատկութիւններով. իր տէժօկրատութիւնը այն տեսակէն էր որ ձերմակներու ու ստրուկներու իրաւազրկութիւնը հաստատ կզահէր անոնց ուսերուն վրա կանգնած: Ան ալ նոյնքան անխիղճ յափշտակիչ մըն էր հողի որքան Ուօշինկիթըն, Ֆրանքլին, Համիլթըն և ուրիշ աղնականներ էին: Ճան չէնքաք, մինչև վերջին օրը, կփորձէր յափշտակութիւններ ընել, երբ արդէն Լէնքսինկիթընի մէջ Յեղափոխութեան առաջին դնդակները կսկսէին կրակել: Ինքն էր, որ դարձեալ աչք կզոցէր աղնըականօրէն մաքսախուսութիւնով զբաղողներուն: Այս բոլոր աղնականները բռնաւ չեն շահազրգուած գաղութները Անգլիայէն ազատագրելով, որովհետև այս տեսակ գործ մը անոնցմէ ամէն մէկին համար յանդգնութիւն մը պիտի ըլլար եթէ չկրնային յաղթել Անգլիային: Սակայն ի՞նչ էր պատճառը որ գաղթալայրերու գործաւոր ժողովուրդը համեստօ-

րէն կաշխատէր և կպահէր «անաղարտ նկարագիրի» այս ընտիր ազնւականները ընկերային ու քաղաքական առանձնաշընորհած գիրքերուն մէջ:

Դարձեալ մտաւորական նոյն վերապահումներն էին պատճառը որ օտար ազնւականներ ինքզինքնին խանդավառուած կըզգային «ամերիկեան կառավարութեան» հանդէպ: Պատմարաններու ըսածին նախելով անոնք պատիւ ու հարստութիւն լըքեցին Եւրոպայի մէջ ու ովկիանոսը կըտրեցին իրենց ազնւական արիւնը թափելու համար Ամերիկայի ժողովուրդին ազատութեան համար, առանց վարձատրուելու ակնկալութիւն ունենալու: ԼաՖայէթ, «ազատութեան ու սոսկալարութեան սիրահար» Փրանսացին, ամբարտաւան արխտոկրատ մըն էր, թեկնածութիւններու բացարձակ մոլեռանդ մը, և այնքան քիչ հող կընէր ժողովուրդի ազատութեան համար որ առաջին հարածողներէն մէկը եղաւ նրբ Փրանսական յեղափոխութիւնը ծագեցաւ քանի մը տարի վերջ: Սթէօպէն, ազատութեան ուրիշ ենթադրած սիրահար մը, Յրէտէրիկ Մեծի դոսոզ և բռնապետ մէկ գինւորականն էր, որ Ուոշինկիթընի կողմէ կարգուած էր «դէպի մեծերը աւելի յարգանք

ու հլութիւն» քանդակելու համար ամերիկեան գինւորներու յամառ գլուխներուն մէջ: Կարելի՞ է վայրկեան մը ենթադրել թէ՛ այդպիսով մարդեր կընան ժողովըրդական յեղափոխութեան հանդէպ ուէ սէր ունենալ:—Ո՛չ: Ազատութեան Փրագները իրենց բերանէն կարտաբերէին պարզապէս իբր արգիւնք անգլիացի աշնըական առևտրականներու հանդէպ իրենց ունեցած տեսլութեան: Այս տեսլութիւնը կըբաժնէր ամերիկացի ազնւական առևտրականներու մէջտեղ ալ. ահա այս էր ամերիկեան ժողովուրդին ազատութեան համար իրենց ցոյց տած բողոքներու թաքուն շարժառիթը:

Ամերիկայի զաղթավայրերու բնակչութեան մեծ զանգւածին չէին պատկաներ այն անիրաւութիւնները, որ այս ջրջերը ըմբոստացուցին Անգլիայի դէմ: Վերցուցէք, օրինակի համար, Նամակազբրոշմի Սնդիրը: Հրամայած էր որ աւմէն օրինական վաւերագրեր, թերթեր, գրքոյկներ ևայլն անգլիական կառավարութենէն դնւած դրոշմներ պիտի կրէին: Առաջին, զաղթականներու մեծագոյն մասը չէր կարդար ուէ գիրք կամ թերթ, ո՛չ իսկ կհետաքրքրէր օրինական վաւերագրերով: Երկրորդ, բոլորովին անիմաստ

պիտի ըլլար ենթադրել թէ՛ քանի մը փէն-
նիի տուրքը այնքան մեծ յուզում պիտի ա-
ռաջ բերէր որ յեղափոխութիւն ծագէր,
ո՛չ ալ մաքսախուսութեան դէմ եղած
կարգադրութիւնները պիտի կրնային
դայն առաջացնել: Ատիկա մասնաւորա-
պէս Նիւ Ինկլընտի Փիւրիթան «Չոջեր»ուն
գործն էր, որ այդպէսով ուղեցին հեշտ
կեանք վարել: Երկու միլիոն բնակչու-
թեան մեծագոյն զանգուածը անմեղ էր
մաքսախուսութեան ուէ մեղադրանքէ,
որովհետեւ անոնցմէ շատ շատ քիչերը
կրնային առիթ ունենալ մաքսանենդու-
թիւն ընելու: Կամ վերցուցէք Թէյի Տուր-
քը, որ ընդհանրապէս ենթադրւած է թէ՛
ուզտերու կոնակը կյոզնեցնէր: Դարձեալ
Չոջերն էին, որ կղիղէին ներածւած թէ-
յերը, որովհետեւ խեղճ զանգուածը հազիւ
թէ իր ապրուստը կրնար ճարել և դրամ
չունէր այդ տեսակ, ինչպէս թէյը, ընտ-
րանքներ ընելու: Այդ կարգի բոլոր բա-
ները կներածէին Անգլիայէն և նոյն ժա-
մանակի պատմադիրերը կըսեն մեզ թէ՛
բնակչութեան մեծ զանգուածը ինքզինքը
հազիւ կապրեցնէր և թէ՛ ան կբարկանար
ապրանքներու վրա դրւած տուրքերուն
համար, որոնք տարիէ տարի քանի մը
փէննի կաւելնային. բաներ մը, սակայն,

որ իրենք բնաւ չէին գործածեր: Քանի մը
պատմաբաններ կաւելցնեն տակաւին թէ՛
այս տուրքը շատ չնչին բան մըն էր կարե-
նալ ամբողջ յուզումը առաջացնելու և թէ՛
առանց ներկայացուցչութեան տուրքի դը-
րութեան (Taxation) սկզբունքն էր, որի
զաղթականները կընդիմանային: Բայց ի-
րողութիւնն այն է, որ՝ զաղթականներու
մեծ զանգուածը չէր գիտեր թէ ի՛նչ կնշա-
նակէ ներկայացուցիչ ունենալ և շատերը
տակաւին չէին ուզեր ունենալ նոյնիսկ յե-
ղափոխութեան յաղթական վախճանէն
վերջն ալ: Այսպէս Չոջութիւնը կմնար իր
գիրքին մէջ ինչպէս առաջ:

Այս Չոջերն էին, որ սկսան յեղափո-
թիւնը և ոչ թէ գործաւոր ժողովուրդը:
Ազնւական Փէթրիք Հէնրին էր, որ Վիր-
ձինիայի օրէնսդրական ժողովին մէջ յար-
ձակեցաւ Բրիտանիայի թագաւորին վրա .
ազնւականներու զաւակներու բազմու-
թիւն մըն էր, որ առաջնորդեց իր կուսա-
կիցները որ Պոսթընի նաւահանգիստին
մէջ թափեցին թէյը: Գործաւորներու ամ-
բոխ մը պիտի բանտարկէր, եթէ փոր-
ձէր այդ տեսակ խաղաղութիւնը վրդովող
արարք մը ընել:

Եւ իսկապէս, թէ և գիւտերու կող-
մէ զաղթականներու տուներուն վրա եղած

բռնադատութիւնները, առանց պատճառի տուններու խուզարկումները և նման արարքներ Անգլիայի ու դադթականներու շիրումը յաճախցուցին, սակայն այս բաները տեղի չէին ունենար մինչև այն ատեն, երբ տակաւին ամերիկեան ազնւականները ամերիկեան ասլրանքներու ու առևտուրի վրա եղած անգլիական հեղինակութիւններուն դէմ չէին ըմբոստացած: Այս ըմբոստացումն էր հիմնական պատճառը Ամերիկեան Յեղափոխութեան: Ամերիկացի ազնւականները կողմէին ազատ ըլլալ ու շահագործել ամերիկեան դադթականները. իսկ անգլիացի առևտրականները կմտածէին թէ՛ իրենք նոյնքան լաւ կրնային շահագործել ամերիկացի դադթականները: Ահա թէ՛ ինչո՞ւ ամերիկեան առևտրականները կռիւի կմղէին ամերիկեան դադթականները, երկիրէն դուրս քշելու համար անգլիացի առևտրականները:

Բայց ամերիկեան դադթականները բռնաւ չէին խանդարւեր դուրս քշելու համար կարգ մը արտաքին տէրեր, ներքին շահագործող տէրերու փոխարէն: Յեղափոխութեան ատեն այն տե՛սակ լայնածաւալ խանդավառութիւն երբեք տեղի չէ ունեցած, ինչպէս պատմադիրներ կախ-

րեն մեզ հաւատացնել: Իրողութիւնն այն է թէ՛ զանազան նահանգներ բնա՛ւ տրամադիր չէին իրենց կամաւորներու լման բաժինը բերելու և Քոնկրէսը անգամ մըն ալ ու աւելի պարտաւորւած էր նոր զօրք քաշելու: Մինչդեռ ամերիկեան բանակը Վէլի Պօրճի մէջ սովամահ կըլլար, անդին Փէնսիլվանիայի ազարակապանները կը մերժէին անոնց բանջարեղէն տալ, որովհետեւ միւս կողմէն անգլիական բանակը աւելի դին կվճարէր: Քոնկրէսը կատղեցաւ ասոր վրա և բռնադատւած քանի մը անգամներու կողմէ՛ հարկադրեց ազարակապանները բանջարեղէն տալ յեղափոխական բանակին: Փէնսիլվանիայի նահանգին մէջ պատերազմական օրէնք յայտարարեցաւ, պէտքերու հայթայթումը ապահովելու համար: Սակայն ես չեմ մեղադրեր ազարակապանները, որոնք ճիշդ այն սկզբունքով կվերարբերէին դէպի ազնւական յեղափոխականները, ինչպէս այս վերջինները դործած էին ազարակապաններու և մնացած բոլոր դործաւոր ժողովուրդին հանդէպ:

Իրողութիւն մըն է, ինչ որ բոլոր պատմադիրներ յամառօրէն կախողեն, թէ՛ ազնւական յեղափոխականները շատ կվախնային որ իրենց յեղափոխութիւնը կրնայ

յանկարծ վերածելի «Ամերիկեան Ներքին Յեղափոխութեան», այն մտածումով, թէ՛ ամերիկացի գործաւոր ժողովուրդը կրնար ունէ ատեն դառնալ բոլոր ազնւականներուն դէմ, ըլլան անոնք ամերիկացի կամ անգլիացի, ու դուրս կըջեն երկրէն: Այս է այն պատճառներէն մէկը, որ զազթականներէ կազմւած բանակը միացուցած էր օտար ազնւականներու հետ: Եւ, իսկապէս, երբ ամերիկեան ժողովուրդը յեղոփոխեցաւ ամերիկացի ազնւականութեան դէմ, ինչպէս Ծէյզի Յեղափոխութեան մէջ, 1786-ին, կամ ինչպէս Ուիաքիի Յեղափոխութեան ատեն, 1794-ին, ան ընկճեցաւ ու ճնշեցաւ բանակներու ուժերուն առջև: Նոյն ճակատադիրը վիճակեցաւ Յեղափոխութեան այն զինուորներուն, որոնք փորձեցին սարսափեցնել Քօնկրէսի անդամները, վճարելու համար իրենց ուժիկները: Ուօշինկթըն միացաւ այն կոչին, որ անոնք «անկարգ, ըմբոստ զինուորներ, աւազակներ ու բանակի նախատինք») կ'իտջէր և զօրաւոր խումբ մը զրկեց ձերբակալելու ու զինուորական ատեանի առջև դատելու համար անոնք: Իսկ մեծաշռինդ օրէնքները, որոնք պաշտօնապէս դրւած էին օտարականներու համար, իրականին մէջ փորձ մըն էին ճնշելու ա-

զատ խօսքն ու մամուլը, որ կրնար հակադրել Քօնկրէսի մեծամասնութեան արիստոկրատ միտումները:

Այս բոլոր իրողութիւնները կուզան պայծառօրէն ցուցադրելու թէ՛ Ամերիկեան Յեղափոխութիւնը առևտուրը յեղափոխութիւն մըն էր: Ան չկուեցաւ ազատելու համար ամերիկեան գործաւոր ժողովուրդը, այլ ամերիկեան առևտրականները. ո՛չ իսկ ան կուեցաւ յայտարարելու համար «յաւիտենական սկզբունքները. ազատութիւն, հաւասարութիւն, արդարութիւն»: Եւ եթէ ազատութեան, հաւասարութեան, արդարութեան աղաղակները կըբարձրանային, անոնք պարզապէս իտէալական ներշնչումն էին Յեղափոխութեան, առևտրական պետերու անձնական շահերուն մէջ լուծւած, ու կգործածէին միևնոյն ատեն իբր խայծ մը գործաւոր ժողովուրդին համար, որ, սակայն, բնա՛ւ չէր կրնար թափանցել այդ Փրագներու խորքը:

Ամերիկայի համար «Ազատութիւն եւ անկախութիւն» ամերիկեան առևտրականներու ազատութենէն ու անկախութենէն տարբեր բան չէր նշանակեր: Անոնք էին, որ զրեցին Անկախութեան Հրովարտակը. անոնք էին, որ յայտարարեցին

պատերազմ․ անոնք էին, որ բանակ մը ոտքի հանեցին ու չկրցան հողալ․ անոնք էին, որ նաւատորմիդ մը ստեղծեցին, ու չկրցան հաւասարակշռել, դրամական փոխառութիւն ըրին ու չկրցան վճարել․ դաշնակցութիւններ կազմեցին օտարներու հետ, որովհետեւ բաւական զինուոր չունէին որ կրնային կուրի անոնց հետ․ կազմակերպեցին զինուորական բռնապետութիւն մը պաշտպանելու համար իրենց շահերը անգլիացի առևտրականներու ու ամերիկացի դործաւորներու դէմ, որոնք կրնային վտանգաւոր դադափարը ունեննել թէ՛ Անկախութեան Հռչակումը արդարօրէն ու իրականին մէջ պէտք էր բան մը արժէր աշխատաւոր դասակարգին համար: Ու այս առևտրականները տեսան թէ՛ Համելթընի բառերը իրականացած էին․ «Թէ ուժը, որ ձեռք կառնէ քսակին կապերը, պէտք է բացարձակապէս ղեկավարէ»:

Այս էր ահա «անձնիշխանութեան և ազատութեան դադափարը, որի մէջ ազգը ծնած էր»: Նպատակն էր Ամերիկայի դործաւոր դասակարգը ազատել, մարդկային ազատութեան անունով, անգլիացի առևտրականներէն ու ենթարկել զայն ամերիկեան առևտրականներու ղեկավար-

րութեան: Անձնիշխանութեան ու ազատութեան այս ըմբռնումը պրօլէտարական ըմբռնումին հետ ոչ մէկ առնչութիւն ունէր, ան պարզապէս առևտուր մըն էր և անտրամարան էր կոչ ընել ամերիկեան ժողովուրդին, իբր պաշտպաններ այս դադափարին, օգնելու պրօլէտարական յեղափոխութեան, քանի որ անոնցմէ շատերը չմտածեցին իսկ պաշտպանել զայն:

Ո՛չ ալ դանադան դաղթավայրէջ առևտրականներն իրենք կատարելապէս ըմբռնեցին իրենց իսկ ինքնավարութեան ու ազատութեան դադափարը: Իրենց առևտրական շահերը շատ բաղխեցան իրարու: Հարաւի հողատէրերը միշտ կնախան ձէին Հիւսիսի ճարտարարւեստին և փոխադարձարար: Նոյնիսկ, երբ տակաւին իրենց Յեղափոխութիւնը իր թափին մէջ էր և յաջողութիւնը հաւասարակշռութենէն կախած, անոնք իրենց պայքարը կը մղէին իրարու դէմ, իրենց տնտեսական շահերուն համար: Ճարտարարւեստականները կուղէին կեղբոնացած «արգելիչ միութիւն» մը (Coercive union) և «գորաւոր դաշնակից կառավարութիւն» մը, և ուժ կուտային այդ հայեացքին, հակառակ հողատէրերու ձգտումներուն: Ազգային կառավարութիւնը դործնականապէս կը բար-

ւէր նահանգային հողերը և կլերածէր ազգային հողերու, որպէսզի կարող ըլլար բաւականաչափ ապահովութիւն տալ ազգային պարտքին համար դրամ փոխ տրուողներուն: Համիլթընի ամբողջ ուժը կեդրոնացած էր ճարտարարւեստական ու դրամատիրական քառիթալիստները այս երկիրին տէրերն ու զեկալարներն ընելուն մէջ: Այս է բոլոր կռիւներուն ոգին նահանգային իրաւունքներու ու ազգային վեհապետութեան տեսակէտէն, թէ և շատ մը «յարգելի» ազնւականներ կ'իորձէին կեղծել այս իրողութիւնը փարլամէնթական Փրազներով: Քաղաքական պատեւրազմը յետոյ վճռեցաւ ի նպաստ ճարտարարւեստական քառիթալիզմին, որ տակաւին կ'օրանայ փոխւած կազմի մը տակ ու պիտի վերջանայ որքան ատեն որ տնտեսական շահերով դրաււած քառիթալիստներ կան:

Անկախութեան Հրովարտակին հրատարակութենէն երեք տարի վերջ և Վիրձինիայի մէջ ձէֆֆերնի կառավարիչ ընտրուելէն օր մը վերջ՝ այդ նահանգի օրէնսդրական ժողովը տակաւին կ'ախնար դաշնակցութեան խզումէն և օտար ուժեր կ'ինտոէր օգտուելու համար անոնցմէ, միւս «հայրենասէրներ»ու հակառակութեան

պարագային: Նոյնիսկ Անգլիայի հետ կնքւած խաղաղութեան դաշնագիրէն վերջ, Համիլթընի հայրենասէրները տակաւին կրողօքէին ազգային ուժի այնքան կեդրոնացումին դէմ: Ամէն անոնց հայեցակէտէն, որոնք Ամերիկեան Յեղափոխութեան մէջ կտեսնեն տարրական իրաւունքներու յաղթանակ մը միայն, ասիկա պիտի անասելիօրէն տխուր թւիրայց պրօլէտարին տեսակէտէն ասիկա միայն ամբողջ կազմին սլակումն է, որի համար յեղափոխութիւնը կուած է ու կանդնած ամերիկեան քառիթալիզմի թաղաւորութեան տաճարը: Ասոր համար է որ Համիլթըն սկիզբէն աշխատեցաւ ու բնաւ չդադրեցաւ մինչև որ ամբողջ երկիրը ճարտարարւեստականներու ու դրամատէրերու ձեռքը յանձնեց, հաստատելով ազգային դրամատուն մը և դրաւիտակ առնելով ամբողջ տասներեք դաղթավայրերը, այն դրամին իրր ապահովութիւն, որ փոխ տւած էր ազգային կառավարութեան: Այս դրամը պատրաստ չպիտի ըլլար եթէ պարագաները չստիպէին Հարաւի նահանգները ենթարկել ազգային կառավարութեան տիրապետութեան. ո՛չ ալ Յեղափոխութիւնը պիտի յաղթանակէր առանց Փրանսացի առեւտրական

ներու օժանդակութեան: Միթէ՞ այս դասակարգը, որ քանի մը տարի վերջ Փրանսացի գործաւոր ժողովուրդէն հազարաւոր յեղափոխականներ սուրէ անցուց, պիտի այնքան դրամ ծախսէր աղատելու համար ամերիկեան գործաւոր ժողովուրդը:

Ամերիկեան առևտրականներու յեղափոխութիւնը նախաբանն էր Ֆրանսականին: Եւ շատ մը կէտերու մէջ Փրանսացի առևտրականները տառացի ընդօրինակեցին իրենց ամերիկացի պաշտօնակիցներուն մէթոտներն ու Ֆրազները: Պատմական այն տարբերութիւնը կար միայն, որ անգլիացի թագաւորին տեղ Փրանսացի թագաւորը, իսկ անգլիացի առևտրականին տեղը Փրանսացի աւատական ազնւականութիւնը անցած էին: Պարագայ բար Ֆրանսայի մէջ քրիստոնեայ եկեղեցիները տապալւած էին, և մինչդեռ ամերիկացի առևտրականներ վերջնապէս կտիրէին իրենց ազգային կառավարութեան, Փրանսացի առևտրականներ գործաւոր յեղափոխականներու զայրոյթէն կփախէին զինուորական տիրութատորի՝ Նաբոլէօն Պօնափարթի թևերուն մէջ: Բայց Փրանսացի կարգ մը գործաւոր ժողովուրդներ, ամերիկացիներուն պէս, խաբւած էին կուելով իրենց ապագայ տէրե-

րուն համար և նոր շղթաներ դարձնած ինքզինքնին կաշկանդելու համար անկէ վերջն ալ:

Ուրիշ խօսքով քափիթալիստները իրական յաղթակալներն էին:

Ո՛չ առաջին կազմակերպիչները, ո՛չ ալ ազնւական յեղափոխականները ջնջեցին դասակարգային տիրապետութիւնը և անոր հետ ալ հասարակական արտադրութեան համար յատկացւած մեքենաներու անհատական սեփականատիրութիւնը. այլ պարզապէս զգեստաւորեցին այս սեփականատիրութեան կազմը, փոխանցելով ուրիշ ձեռքերու: Անոնք յաւերժացուցին հիմնական չարիքը, որմէ ամբողջ քաղաքակրթութիւնը չարչարւած է հազարաւոր դարեր: Անոնք Համիլթընի հետ, յայտարարեցին թէ՛ այս հիմնական չարիքը չկրնար փոխելի և թէ՛ պիտի արդասաւորէին զայն իրենց ճիգերով: Այս էր իրենց բոլոր հակառակութիւններուն պատճառը անոնց թէօրիներուն ու գործերուն մէջ:

Այս պայմաններուն մէջ ամերիկացի գործաւոր մը, որ կտօնէ Յուլիս Զորսը, ինչպէս Փրանսացի գործաւոր մը, որ կտօնէ Նափօլէօն Պօնափարթի Brumaireի 18ը, կամ ուրս գործաւոր մը, որ կտօնէ

Րօմանօֆի յաղթութիւնը, կնշանակէ թէ
տօնած կըլլայ բռնակալներուն յաղթա-
նակը:

Զգեցէ՛ք որ տէրերը տօնեն իրենց իսկ
յաղթանակները: Դասակարգային դիտակ-
ցութիւն ունեցող դործաւոր ժողովուրդը
ամբողջ աշխարհի չորս կողմը կտօնէ ՄԱ-
ՅԻՍ ՄԷԿԸ:

VII

ՊՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՆՈՒԹԻՒՆ-

ՆԵՐԸ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՁ

Պուրժուական յեղափոխութիւններու
պատմութիւնը համաձայնութիւններու
յաջորդականութիւն մըն է: Աւելի՛ թըշ-
նամութիւնները սկսելէ առաջ վախկոտու-
թիւն մը ու վարանք մը և անկարող ցան-
կութիւն մը ուրիշներու կողմէ վաստակ-
ւած յաղթութիւններու ամբողջ պտուղ-
ներուն հանդէպ: Այս պատկերն է, որ մեզ
կյաճախադիպի պուրժուա առաջնորդնե-
րու ամէն մէկ փորձին մէջ, որ ըրած են
տիրանալու համար քաղաքական ուժե-
րուն: Եւրոպայի քափիթալիստական դա-
սակարգերու և ոչ մէկը ամբողջապէս նը-
ւաճած է քաղաքականապէս իր աւանդա-

կան ախոյեանները, այլ ստիպւած է եղեր անոնց հետ բաժնել իր ուժը: Իսկ Մ. Նահանգներու մէջ, ուր քափիթալիստական դասակարգը սկիզբէն մինչև վերջը աւատական մնացորդներէ ազատ դաշտ մը ունեցած է, ամերիկեան «բարեգործ» պուրժուան միշտ շնականօրէն քծնած է ևրոպական աւատական ուժերու ոտքերուն առջև, կամ դաւաթ պարսպած է աղնըականութեան հետ ներքին կաշկանդըւած ռամկալարութեան կեանքին: Ամերիկեան քափիթալիստ դասակարգը յեղափոխութեան մէջ Անգլիայի վրա տարած յաղթութիւնները կ'պարտէր Եւրոպայէն եկած աւատական օգնութեան, իսկ Յեղափոխութեան սիգատոհմ մանչերն ու աղջիկները երբեք չեն մոռցած իրենց աւատական բարեկամները: Միւս կողմէ Ռուսիանկթընի մէջ պուրժուա քաղաքագէտները միշտ շատ դիւրին առաջնորդըւած են ոսկի թելերէ, որոնք տիպլոմաթիք պաշտօնատուները ազգային դրամատունին հետ կ'կապեն, և, այսպէս կոչւած, հասարակական հաստատութիւններու մէջ երկու կողմէն ալ աւատական ուժերը տակաւին այնքան զօրաւոր կ'ներկայանան որքան չերևակայեր ժողովուրդին մեծամասնութիւնը:

Վարանք ու համաձայնութիւն պուրժուական արիւնին մէջ սնած են միշտ: Պուրժուազիին ճակատադիրը եղած է ծընած ըլլալ կրակներու մէջ: Մէկը ջնջելու իսկ միւսէն ջնջելու հարկին տակ պուրժուա բնութիւնը ստեղծեց այն հողմացոյց միտքը, որ պատմական նախատինք մը եղաւ:

Քափիթալիստ դասակարգը մէկ կողմէն պէտք էր հարթէր աւատական պատւարները, որ իր ճամբան կ'խափանէին, իսկ միւս կողմէն պէտք էր դործաւոր ժողովուրդը իր հսկողութեան տակ պահէր զայն շահի ու շահագործութեան առարկայ դարձնելու համար: Ասիկա այնքան դժուար չէր, ինչպէս կը թւի առաջին նայւածքով, որովհետև աւատական աղնականներու տնտեսական դրութիւնը անդիմադրելի դարձած էր այլևս պուրժուազիի քաղաքական ղեկավարութեան տիրանալէ առաջ. իսկ դործաւոր ժողովուրդը այնքան տգէտ էր ու իրարու հակառակ բաժանւած՝ որ պղտիկ քաղաքականութիւն մը կրուէր անոնց տիրանալու համար: Եւ, իսկապէս, տիրապետութեան ամենապղտիկ ոգի մը պուրժուական միտքին մէջ այն ատեն, երբ մարդկային առաքինութիւններու ցուցադրութիւնը տեղի

կունենար, ու, ահա, ան արդէն տէրը
կըլլար Եւրոպայի, այնքան զիւրին որքան
երբեմն աւատական՝ եկեղեցին ու ազնւ-
ւականութիւնը եղած էին: Բայց «տիպար»
պուրժուան պատմական հիմքերու համա-
ձայն, աւելի ճարտիկ առևտրական մըն
է քան հերոս մը. և ճիշդ ատոր համար ան
միշտ տխուր դեր մը ունեցած է աշխարհի
բեմին վրա: Ան շատ շուտ կահարեկի ու
մժեղներ կզարնէ տասներկու մատնաչափ
հրացաններով, իսկ դադանօրէն վայրագ
ու դոռող կզառնայ, բոլոր վատասիրտնե-
րուն պէս, երբ վստահ է իր հակառակոր-
դի տկարութեան մասին:

Բոլոր դարերու ժամանակամիջոցին,
երբ պուրժուազին ճզնած է Եւրոպայի դա-
նադան երկիրներու քաղաքական ղեկա-
վարութիւնը ձեռք անցնելու ու իր ժամա-
նակաւոր գերակայութիւնը հաստատելու
համար, վայրկեան մը դոնէ չէ յիշատակ-
ւած որ ան իր պատմական առաքելութեան
հանդէպ կատարելապէս խղճամիտ գըտ-
նըւած ըլլայ, կամ կատարելապէս նւա-
ճած՝ իր հակառակորդները: Ո՛չ ալ ան
առանձին կուած է իր ուէ մէկ յեղափո-
խութեան մէջ ու դոնէ մէկ յաղթանակ
տարած՝ իր իսկ ուժով, առանց ուրիշ
օժանդակութեան. միշտ նախընտրած է

ապաւինիլ միւս դասակարգերուն, որոնք
կուած են իրեն համար:

Պուրժուական առաջին մեծ գործն էր
տասներեօթերորդ դարին Գերմանիայի
մէջ Բաբելարգութեան հաստատումը:
Այդ ժամանակաշրջանին մէջ գերման
պուրժուազին ուէ կերպով հասունցած
չէր քաղաքական ուէ գերակայութեան
համար և իր վերջնական պարտութիւնը
անխուսափելի էր տիրող պայմաններու
տակ. բայց նոյն բանը կարելի է ըսել ա-
ւելի մեծ ճշգրտութիւնով գիւղացիներու
մասին, որոնք կուրի խանդով լեցւած
էին. թէև, սակայն, գիւղացիները չվա-
րանեցան և մինչև վերջը յամառօրէն գոր-
ծեցին, ոչ թէ պուրժուազիին պէս ընկեր-
ակցեցան: Թէև այս դասակարգը ամենէն
աւելի նպաստաւորւողն էր աւատականու-
թեան տապալումով, և, սակայն, ան վա-
րանեցաւ ու ընկրկեցաւ և լքեց իր բնական
դաշնակիցները — ստորագաս ազնւակա-
նութիւնն ու գիւղացիութիւնը — տատան-
քի մէջ ամենէն ծանրակշիւ վայրկեաննե-
րուն, երբ Ֆէօտալ ուժերը վերջնապէս
պիտի մաքառէին իր տնտեսական պայ-
մաններու կազմաւորութեան ճամբան
հարթելու համար: Վերջնական ու միակ
կուողները նորէն գիւղացիներն էին, որ

յեղափոխութիւնը մինչև իր վախճանին տարին ու ընկճւեցան: Յաջորդ երկու հարիւր տարիներուն Գերմանիայի մէջ ազգային դործօն կեանքը խեղդւած էր ազնւականութեան մէջ ու կայսրի հեղինակութեան դէմ մղւած անծայր կռիւններու հեղեղներով: Այս պայմաններուն տակ պուրժուական դասակարգը աւելի շատ կտառապէր քան ուրիշ ունէ դասակարգ, բայց ան տակաւին կծրազրէր մասնակցիլ գիւղացիներու ու քաղաքացի պրօլէտարներու շահագործումին:

Աւատականութեան դէմ Եւրոպայի մէջ երկրորդ պուրժուական մեծ յեղափոխութիւնը տեղի ունեցաւ Անգլիայի մէջ, տասնըօթերորդ դարին: Այդ ժամանակաշրջանի բրիտանական պուրժուազին տնտեսապէս ու քաղաքականապէս շատ երիտասարդ էր տակաւին, իր տիրապետութիւնը վերջնականապէս հռչակելու. բայց, միևնոյն ատեն, բաւականաչափ չափահաս էր, իր իսկ ոտքերուն վրա կանգնելու ու ցուցնելու համար իր ինչ ասլրանքէ շինւած բլլալը: Գիւղերու միջին դասակարգը սկսաւ իր յեղափոխութիւնը, օգնութեան կանչելով գիւղացիները: Այս վերջինները ազնւօրէն պատասխանեցին. բայց աւելի իրերը իրենց ընթացքով հասան ի-

րենց վախճանին քան թէ կորուստ պատճառեցին պուրժուազիի ջիղերուն: Գիւղացիներուն ու քաղաքի հասարակ ժողովուրդին համար չէր որ պուրժուազին պիտի գիղէր ընկերային բարեշրջումի այն պտուղները, որ յետոյ աւելի հասունցան: Յեղափոխութիւնը, ազնւականութեան հետ կայացւած համաձայնութիւնով մը, վճուեցաւ բրիտանական պուրժուազիին նպաստաւոր կերպով. այսպէսով առաջինը ձեռք կառնէր քաղաքական ղեկավարութիւնը, իսկ վերջինը ճարտարաբանտի աւելի ընդարձակ հող ունեցաւ: Այս երկու դասակարգերը միացան նաեւ լու համար յեղափոխական գիւղացիներն ու հասարակ փլէպլիւրները և երբ տապալեցին, սկսան փոփոխակի շահագործել անոնք: Հարիւր տարի «վերջ Գրօմվէլի ոստանիկները որ պուրժուազիին ամենէն քաջ դաշնակիցները եղած էին, գերթէ բնաջնջեցան ազնւականութեան ու իր պուրժուա բաժնետէրերու առևտրական մէթոտներուն միջոցով:

Բրիտանական ազնւականութիւնը այսպէս հեշտօրէն ձեռք առաւ քաղաքական ուժը հակառակ պուրժուազիին: Հակառակ պարագայական կռիւններուն, տակաւին տնտեսական զարգացումը նպաստաւ-

ւոր էր ճարտարարւեստական քափիթա-
լիսթներու քան հողատէր արխատոկրա-
տութեան: Գիտական միջոցներով եւ շո-
գիլի ու մեքենայի կատարելագործումով
ճարտարարւեստատէրեր պուրժուազին ա-
պահովեց տնտեսական առաւելութիւննե-
րը, որոնք ստիպողաբար քաղաքական ա-
ւելի մեծ ուժ կ'ստանային: Տասնըիննե-
րորդ դարի սկիզբը վերջնապէս բրիտա-
նական պուրժուազին յայտարարեց իր քա-
ղաքական պահանջները եւ 1832-ին ետ
առնելով Արմտիքներու Օրէնքները՝ տա-
րաւ իր մեծագոյն յաղթանակը. բայց
նոյնիսկ այն ատեն հողատէր արխատոկրա-
տութիւնը դրեթէ բացարձակապէս ձեռքն
առաւ քաղաքական պաշտօնատուններու
ղեկավարութիւնը, որովհետեւ պուրժու-
ազին կ'սարսափէր պրօլէտարի «աղէտա-
ւոր» գործերէն, որ քափիթալիզմը ինքն
իսկ ստեղծեց. ու այսպէս անգամ մըն ալ
պուրժուազին ցուցուց իր սլատմական տը-
կարութիւնը, առաջնորդութեան ու պաշտ
պանութեան համար, յոյսը դնելով արխա-
տոկրատութեան վրայ:

Բրիտանական պուրժուան մինչեւ այ-
սօր իր կրաւորական դերը կ'չարունակէ ա-
րխատոկրատութեան առաջնորդութեան
տակ, որ իբր իր գերադասը կ'համարէ:

Միւս կողմէ արխատոկրատութիւնը դար-
ձած է վարպետ առեւտրական եւ գիտէ
թէ ինչպէս պէտք է յաղթահարել պուր-
ժուազին իր իսկ խաղին մէջ: Հակառակ
իւր մեծ հարստութեան ու տիրադոմններուն
բրիտանական պուրժուազին բնաւ չէ թօ-
թափած պղտիկ առեւտրականի իր մոր-
թը, եւ արխատոկրատները իրական քա-
փիթալիստ ներկայացուցիչներն են Մի-
ացեալ Թագաւորութեան:

Փրանսայի մէջ պուրժուան բաւական
բախտաւոր էր, երբ իր ծնունդին ժամը
հնչեց. ճիշդ այն ատեն, երբ թագաւորն
ու ազնւականութիւնը հասած էին իրենց
ծայրագոյն շղթայումին, իսկ գիւղացիները
ըմբոստացած: Տնտեսական զարգա-
ցումը առանց մեծ ճիգերու Փրանսական
պուրժուան տիրացուց կացութեան: Աւա-
տական կառավարութեան սնանկութիւնը
գործնականապէս հրաւիրեց զայն ստանձ-
նելու ղեկավարութիւնը. ո՛չ թագաւորը,
ո՛չ ազնւականութիւնը, ո՛չ կղերականու-
թիւնը կրնային կանգնեցնել զայն: Ֆէօ-
տալ դասակարգերու տնտեսական դիրքը
ծայրայեղ հակառակութեան հասած էր
արտադրութեան տիրող եղանակին դէմ,
եւ գիւղացիներու ու պրօլէտարներու ըմ-
բոստութեան պատճառով, որի առաջնոր-

դուժիւնը շատ բնական կերպով բողբո-
վին ինկաւ պուրժուազիի ձեռքին մէջ, եւ
այն որ գրեթէ դար մը ինքզինքը հակա-
Փէօտալական դասակարգերու մտաւորա-
կան թարգմանն ըրած էր, սարսափեցուց
ամէնքը :

Այս պուրժուազին Փրանսական ընկե-
րութեան ամենէն վերջին տարրն էր, որի
վրա կարելի էր յոյս դնել իբր առաջնոր-
դողի: Այս տեղ, սակայն, ինչպէս միւս
բոլոր երկիրներուն մէջ, յեղափոխու-
թեան ժամը այս դասակարգը ամբողջա-
պէս անպատրաստ ու դործունէութեան
առանց որոշ ծրագիրի դտաւ: Միակ պատ-
ճառը, որ պուրժուազին յաղթական հա-
նեց, այն իրողութիւնն է թէ՛ ան տնտե-
սապէս ամենէն ուժեղ դասակարգն էր,
իսկ ճարտարարւեստական դարգացումով
եղաւ իմացական առաջնորդը: Փէօտա-
լիզմը Փրանսայի մէջ յտասպալեցաւ պուր-
ժուազիին որոշ սկզբունքներէն, այլ իր
իսկ փտտածութեան պատճառով: Ո՛չ մէկ
յեղափոխութիւն այնքան դիւրին չահւած
էր: Ճշմարիտ է, սակայն, որ առանց գիւ-
ղացիներու ու քաղաքի պրօլէտարներու
սպառնական դիրքին, շատ տարակուսելի
է թէ՛ Փրանսական պուրժուազին կարող
պիտի ըլլար քաղաքականապէս աւելի լաւ

տասպալել Փէօտալ աղնւականութիւնը քան
իր բրիտանացի դասակարգակիցը, թէեւ
պատմական այնքան նպաստաւոր պայ-
մաններ չըջատատած ըլլային Յեղափո-
խութիւնը Փրանսայի մէջ: Բայց նոյնիսկ
այս պարագային անոնք իրենց աճող ճար-
տարարւեստի ամբողջ գերակայութիւ-
նովն ալ չկրցան մնալ շատ երկար իբր քա-
ղաքական տէրեր:

Որքան որ Փրանսական պուրժուազին,
իբր դասակարգ մը, խղճամիտ չէր—աւելի
քան ուրիշ ազգերու պուրժուազին—իր
դասակարգային առաքելութեան հան-
դէպ, տակաւին, սակայն, իր առաջնորդ
մտածողները լաւ գիտակ էին քաղաքական
յեղափոխութեան տնտեսական պատճառ-
ներուն, ու այս դասի քաղաքական ներ-
կայացուցիչները կկեղծէին մաքուր կեր-
պով ու մարդկային սէրի հեռապատկերով
առաջնորդելի: Անոնք Ազատութեան, Հա-
ւասարութեան ու Եղբայրութեան իտէալ
սկզբունքներուն վրա կանգնած ըլլալ ցու-
ցուցին այնքան ատեն որ կրցան խաբել
պատմադիրներն ու անոնցմէ վրիպեցնել
իրենց բուն ազդակները: Գերմանացի ի-
տէալիստը, Հէկէլ, օրինակի համար, իբր
մեծ հիացող մը Փրանսական Յեղափո-
խութեան, խանդավառօրէն գրեց. «Իրա-

ուռնքի դադարիարը իր ամբողջ հեղինակութիւնը հաստատեց մէկ անգամէն. եւ հինցած արդարութիւնը չկրնար իր արշաւանքը սպրեցնել: Սահմանադրութիւն մը հաստատեցաւ համաձայն իրաւունքի հասկացողութեան եւ այս հիմին վրա ապագայ ամէն օրէնսդրութիւն պիտի հիմնուի»:

Բայց պուրժուազին ուէ բախտաւորութիւն չունեցաւ իր սահմանադրութիւնով. նոյնիսկ երբ բոլորովին անկաշկանդ էր իր դործին մէջ. ինչպէս եղած էր Ամերիկեան Յեղափոխութեան ատեն: Հազիւ թէ մեկանը չորցած էր, պուրժուական սահմանադրութիւնը արդէն կարկանդակու վիճակին մէջ էր, եւ հակառակ տիրող կեղծիքին հինը մաշած էր ու գրեթէ չէր կարելի ուէ գործնական նպատակներու դործածել՝ բայց եթէ մասնաւոր առիթներու մէջ ցուցադրել:

Այսպէս եղաւ Ֆրանսական Յեղափոխութեան ատեն ալ:

Ո՛չ մէկը որոշապէս դիտէր թէ՛ ի՞նչ պիտի ըլլայ նոր կազմակերպութիւնը: Մինակ պուրժուա քաղաքագէտներ քչիկ մը հասկցան իրենց դասակարգային շահերու տեսակէտէն թէ իրենք պէտք էր կատարելապէս յօժարէին ու թազաւորը

սահմանափակէր իրենց նոր սահմանադրութեան մէջ: Բայց շատ շուտ անոնք ալ մտաւախ դարձան անոր, ուրիշներու և մասնաւորապէս իրարու համար: Վերացական «Ազատութիւն, Հաւասարութիւն, Արդարութիւն»ը մերժեց նոյնիսկ թուղթի վրա մարմին տալ իրենց բաղձանքին: Եւ, տակաւին, մէկը պէտք էր որ կառավարէր և պահէր միւսները. ի՞նչ որ կուզէին ընել հաւաքական ուժով: Այսպէս ընդհանուր հաւաքում մը ինքզինքը կհաստատէր կառավարող մարմինի մը մէջ, լոկ ստուգելու համար մեծ արհաւիրքով, թէ՛ կարելի չէ իրադործել իր նպատակները: Յետոյ չըջանակը հետըզհետէ սեղմւեցաւ: Հինգ մարդերու տիքթատորութիւն մը, Ֆրանսական Յեղափոխութեան մէջ, պուրժուական կառավարութեան վերջին փորձն էր, և ան ալ շուտով մէկ մարդի ուժին մէջ կեդրոնացաւ. — Նաբոլէօն Պոնափարզ, որ հռչակւեցաւ իրր ընկերութեան մեծագոյն փերլիչը, և որ նւաճեց ճշմարտապէս յեղափոխական տարրը, դործաւոր դասակարգը, բռնակալութեան երկաթ ուժովը: Այսպէս, պուրժուազին հրապարակով ցուցուց կառավարելու իր անկարողութիւնը: Եւ ասիկա այն դասակարգն է, որ

յեղափոխական պրօլէտարին գործակցական հասարակարկութեան կատարելագործւած ծրագիր մը կ'սկսանք, հաճելով ամենէն առաջ աւելցնել թէ՛ Սօցիալիզմը աւելի քան երազ մըն է :

Ֆրանսական պուրժուազիի սնանկութիւնը, այսչափ նպաստաւոր պայմաններու տակ, այնքան և աւելի դատապարտելի է որքան իր այն պոռոտ յայտարարութիւնը թէ՛ ինք պիտի հաստատէ «իրաւունք» թագաւորութիւնը : Անոնք իրենց ամբողջ իրաւունքով անխմաստօրէն թափւած արիւններու գետերէն անցան . 1793-ի նոյեմբեր 10-ին Ազգային ժողովի հրովարտակով դահ բարձրացուցին իրաւունքի աստուածուհին, յետոյ տապալեցին աստուածուհին ու 1974-ի յունիս 8-ին բարձրացուցին աստուածը, և անգամ մըն ալ 1794-ի յուլիս 27-ին քանի մը չարձանագրւածներու համար լքեցին . . . ամէն առիթով ալ արիւնի առատ գոհարեցումներ ընելով : Անոնց վարմունքը կարելի է նրմանցնել տղաքներու, որոնք մինակ կճրգւելին անտառներու մէջ :

Ինչ որ չկրցան հասկնալ և մինչև այսօր ալ չեն հասկնար, այն է թէ՛ իրենք անկարող են ստեղծելու այն խոհալական սահմանադրութիւնը, որ պիտի կրնար

ընկերութեան մը անդամներուն բոլոր պահանջները գոհացնել, որ կրողկանայ շահագործողներէ և շահագործողներէ : Հազիւ թէ Փէօտալ ուժերը արտաքսեցան, ահա միահեծանութիւնը դահակալեց անդիմակ . բայց երբ պուրժուազին փորձեց հաստատել հանրային իրաւունքի թագաւորութիւն մը դիմակաւոր բռնակալութեան մը հիմքերուն վրա, ան սկսաւ տառապիլ ու վերջապէս զինուորական բռնակալութեան պաշտպան թեքերուն տակ ապաստան փնտռեց, շահագործւած գործաւոր դասակարգի կատաղութենէն խուսափելու համար :

Միևնոյն պատկերը կրկնեցաւ կրկին ու կրկին Ֆրանսական Յեղափոխութեան ժամանակէն մինչև տասնևիններորդ դարի կէսերը, ո՛չ միայն Ֆրանսայի մէջ, այլ կեդրոնական Եւրոպայի երկիրներուն մէջ ալ : Ամէն պարագաներուն մէջ ալ պուրժուազին ինքզինքը անկարող ցուցողրեց քաղաքական ուժը վարելու մէջ : Ամէն փորձ, որ ըրին հաստատելու համար գուտ պուրժուական կառավարութիւն մը, ան վերջացաւ կամ զինուորական քանի մը արկածախնդիրներու կամ Փէօտալ գորութիւններու տիրապետութիւնով : Եւ երբ 1870-ին, Նաբոլէօն Գ. -ի ան-

կումէն վերջ, Յրանսայի մէջ պուրժու-
ական հանրապետութիւն մը հաստատուե-
ցաւ, Ֆէօտալական ազնւականութիւնը
տակաւին շարունակեց իր էնթրիկները և
մէկէ աւելի անգամներ քիչ մնաց որ հան-
րապետութիւնը տապալէր: Եւ եթէ ժա-
մանակակից պրօլէտարին հսկող աչքերն
ու որոշ ընդդիմութիւնը չըլլային, քիչ մը
կասկածելի է թէ՛ պուրժուաներ քաղա-
քական յաղթանակը պիտի տանէին Յրան-
սայի արքայական ու Ֆէօտալ տարբերուն
դէմ: Ամէն պարագայի մէջ եթէ այսօր
Ֆրանսական պուրժուա հանրապետու-
թիւնը կշարունակէ իր կեանքը, այդ չը
պարտիր Ֆրանսական պուրժուազիի ձե-
ւընհասութեան:

Պուրժուական չորրորդ ըմբոստու-
թիւնը տեղի ունեցաւ Գերմանիայի, Ա-
ւստրիայի և Իտալիայի մէջ 1848-49-ին:
Իսոյց փոխանակ ծաւալուն ու դօրեղ շար-
ժումը իբր մարդկութեան տալիք պուր-
ժուազիի միածինը ըլլալու, եղաւ տկար
ու կիսակամ արձագանգ մը Ֆրանսական
գործաւոր դասակարգի յեղափոխութեան:
Եւ թէև միջին դասակարգի ճարտարա-
ւեստական զարգացումը անոնք դէպի ա-
ռաջ, դէպի գործ կմղէր, սակայն գործա-
ւոր դասակարգի յեղափոխականներու առ-

թած վախը իրենց ձեռքերը հաշմեց Կեդ-
րոնական Եւրոպայի մէջ գնդակ մը կրակ
ւելէ առաջ:

Բնական ո՛չ մէկ յարակցութիւն կար
յիշած երեք երկիրներու միջին դասա-
կարգերուն մէջ: Գերմանիան կուտակում
մըն էր քանի մը տասնեակ թաղաւորու-
թիւններու ու իշխանութիւններու, մէջը
ըլլալով ֆրոստիան ալ, իբր միակ մեծ ու-
ժը: Աւստրիան տակաւին անւանապէս
գերմանական դաշնակցութեան մէկ մասը,
բայց իրականին մէջ ֆրոստիայի ամենէն
մեծ թշնամին, կաղմլած էր Գերմանիայի
հակառակորդ տարբերով, չեխերով, սը-
լաներով և հունգարացիներով: Իտալիան
Գերմանիայի պէս մանր նահանգներու
հաւաքածոյ մըն էր, եկեղեցին ալ վրան
աւելցան իբր անմիաբանութեան ակ: Ե-
րեք երկիրներուն մէջ ալ Ֆէօտալ ազնւա-
կանութիւնը զօրաւոր կերպով պաշտպան-
ւած էր, թէև ղինւորական ուժը միապետ-
ներու ձեռքին մէջն էր և պատրաստ ան-
խնայօրէն վարւելու: Ազգային պուրժու-
ական յեղափոխութիւնները, սակայն,
Կեդրոնական Եւրոպայի մէջ հարցէ դուրս
էին, թէև ազգային միութեան պէտքը ի-
րենց տնտեսական շահերէն բղխելով՝ ե-
րեք երկիրներուն մէջ ալ կշեշտէր, ազ-

դային ուժի մասին եղած պուրժուական սին ու տարտամ երազներով:

Կեդրոնական Եւրոպայի պուրժուազիին կողմէ Ֆէօտալիզմի դէմ ուէ պարզ միջազգային դործ կամ մտածում կերթար պահել մանր առևտրականի հորիզոնին ետին: Ֆրանսական Յեղափոխութեան քանի մը առաջնորդները թէև հասկցան իրողութիւնը թէ՛ ատիկա երոպական հարց մըն էր և ոչ թէ ազգային, որ կոչւած էին կարգադրելու. բայց այս հասկացողութիւնը քաղաքական ուէ արդիւնք չբերաւ. ընդհակառակը լեցւած կոյր անհատապաշտութիւնով մէկ երկիրի պուրժուազին վնասեց միւսը ու առուտուրի մէջ իր օտար արհեստակիցներուն դըժբաղդութիւններովը շահւորեցաւ:

Յեղափոխական այս պզտիկ ոգին Կեդրոնական Եւրոպայի միջին դասակարգը տիրացուց ժամանակին. թէև ան բնաւ չէր մտածեր տէր ըլլալ քաղաքական ուժին վճռական քայլով, քանի որ ուշ չէր: Եւ յետոյ ինքզինքը այս տեսակ դործի մը պատրաստած չէր, հետևարար ինքզինքը վատասիրտ ու տարտամ ցուցադրեց, ինչպէս միշտ ու օդնեց Ֆէօտալ ուժերուն, ճնշելու համար դործաւոր ժողովուրդը, որ միակ սահմանւած տարրն էր Յեղափո-

խութիւնը իր վախճանին հասցնելու:

Գերմանական պուրժուազին, հակառակ իր մեծխօսիկութիւններուն թէ՛ Պրէտէ-րիկ Դ.րդ. իր թագաւորական սիրտի բարութենէն սահմանադրութիւն պէտք է չնորհէ իրեն. շատ համեստ էր իր պահանջներուն մէջ: Ան իրապէս որոշ ծրագիր մը չունէր իր համար բայց եթէ սահմանադրութեան չնորհումը, և յօժար էր որ կառավարութիւնը կարգադրէ զայն իր համար: Բաւական ժամանակ առաւ հասկնալու համար թէ՛ թագաւորը իր (պուրժուազիին) փափաքներէն տարբեր բան կուզէր, և երբ հասկցաւ ալ ասիկա, իր առաջին մտածումը եղաւ ո՛չ թէ համախմբել ուժերը այլ աւստրիական պուրժուազին արտաքսել ներկայացուցութեան և փրոսիական կառավարութիւնը փոխակերպել սահմանադրական միապետութեան, որ իր շահերուն պիտի ծառայէր բացարձակապէս: Այսպէս ցուցադրեց ինքզինքը մանր առևտրականներու ոգին ալ: Փոխանակ միացնելու իրենց ուժերը և յեղափոխութիւնը ընդհանրացնելու, անոնք ցրեցին իրենց շարքերը ու զօրացուցին Ֆէօտալական յետաշրջութիւնը: Ֆրանսական պուրժուական յեղափոխութեան նախորդ յիսուն տարիներէն ուէ

դաս առած չէին :

Վիէննայի մէջ, մինա՛կ Վիէննայի բընակչութիւնն էր, որ կարճ ժամանակի մը համար միացաւ Փէօտալ ուժին դէմ, իսկ ասիկա այդ քաղաքի պուրժուազիին չը պատկանիր, այլ գործաւոր դասակարգին ու ուսանողներուն : Հագիւ թէ Փէօտալ տարրերը հաստատեցին իրենց ուժն ու քաղաքականութիւնը, ահա, Աւստրօ-Հունգարիայի պուրժուազին, իր մէջ ունենալով՝ Վիէննան ալ, ինքզինքը ցուցադրեց այնքան փոփոխամիտ որքան ուրիշ երկիրներու իր դասակարգակիցները : Եւ անոնք Եւրոպայի քաղաքական պայմաններու մասին այնքան տգէտ էին որ՝ այն նոյն մարդերը, որ Վիէննայի պատնէչները բարձրացուցին աւստրիական Փէօտալիզմին դէմ, խանդավառութիւնով զինուորագրեցան աւստրիական բանակին մէջ նւաճելու համար Իտալական Յեղափոխութիւնը :

Ճիշտ ա՛յնպէս ինչպէս անգլիական պուրժուազին օգնեց ջնջելու համար իր ոստիկանութեան նախկին դաշնակիցները . ա՛յնպէս ինչպէս Ֆրանսական պուրժուազին, որ Փէօտալական տիրապետութենէն ազատագրելու խանդավառող խոստումներով ներշնչեց գիւղացիներն ու յե-

տոյ զրկեց իրենց տարրական իրաւունքներէն ու ճնշեց քաղաքի պրօլէտարիատին հաւաքական ամենատարրական իրաւունքը, այդպէս ալ բրաւ վրուսիական պուրժուազին օգնելով վերահաստատել Փէօտալական բռնակալութիւնը Փրուսիայի կէսին՝ Հարաւի գիւղացիութեան վրա : Եւ եթէ աւստրիական պուրժուազին նոյն կերպով չդաւաճանեց իր գիւղացի դաշնակիցները, պատճառը այն էր որ Աւրստրիայի գիւղացիները երկիրին մէջէն ամբողջապէս մաքրած էին Փէօտալական աղտոտութիւնները, այնպէս որ զօրաւոր դէլ իրենց գործը :

Պուրժուազիի անձնասպանական ընթացքին գերագանց կուրուցիւնն ու յիմալետագիւմական շարժումը չէր կրնար քանրութիւնը կպարզւի իր ամբողջ զարհուրանքով, երբ կյիշենք թէ իրենց ամէն մէկ ձախաւեր գործերը ո՛ր միայն հաստատեցին իրենց իսկ հակառակորդ Փէօտալիզմին ուժը, այլ նաև անփոփոխելի ծառայութիւններ մատուցին ուսն ինքնակալութեան, — Եւրոպայի մէջ Փէօտալական ամէն բռնակալութեան պատւարին : Իսկ ասոր համար աւելի աչք ծակող ամբաստանութիւն չէ կարելի բերել անոնց դէմ քան այսօրը, երբ ուսական պրօլէտա-

րիատը կճնչէ իր (Ռուսիա) պուրժուազին
և կսպառնայ Ֆէօտալ ինքնակալութեան,
որ արգիլեց և բողոքական ճարտարարեւս-
տի զարգացումը: Արեւմտեան Եւրոպայի
պուրժուազին բռնած է տիպլումաթիկ
ծուղակներու մէջ համագործակցելով
ռուսական բռնակալութեան հետ, որով-
հետև Մայրագոյն Ասիայի մէջ ճարօնա-
կան պուրժուազիի ետ մղւած առաջխա-
ղացումի սկզբնական առաջադրութիւնն
ու անոր համաշխարհային պրօլէտարիա-
տի ոտքի կանգնումը արգիլեց: Եւ տակա-
ւին կան բազում ասպոցոյցներ հաստատե-
լու համար թէ՛ Ուոչինկիթընի մէջ պուր-
ժուա ուժեր դաշնակից են այս խնդիրին
շուրջ:

Եւրոպայի մէջ հինդերորդ պուրժուա-
կան յեղափոխութիւնն է ռուսական պուր-
ժուազիի յեղափոխութիւնը, որի մէջ պը-
րօլէտարիատը դրեթէ առանձին տարաւ
առաջնորդող դերը: Ռուսական քա-
փիթալիստական դասակարգը, ծայրա-
յեղօրէն վատ ու նւաստ բացէ ի բաց կըռ-
ւելու համար բիւրօկրատ և Ֆէօտալ ու-
ժերուն դէմ, յեղափոխութեան հոսանքէն
քշող լաստակ մըն է: Առաջնորդները խա-
ղացին ու տակաւին կշարունակեն խաղալ
անջիղ սրիկաներու դերը, մինչդեռ պրօ-

լէտարը կկուրի նւաճելու համար ինքնակա-
լութիւնը և թողելու պուրժուա տէրերը
անտեսական ուժերու մէջ: Եւ եթէ ռու-
սական քափիթալիստներ չեն կրնար բաժ-
նել քաղաքական ուժը վերապրող Ֆէօտալ
արխատոկրատութեան հետ, ատիկա չեն
պարտիր իրենց ուէ մէկ կարողութեան
կամ քաջութեան, ո՛չ ալ ուրիշ երկիրնե-
րու իրենց դասակարգակիցներուն: Աշ-
խարհածաւալ է այն խանդը, որ ուրիշ եր-
կիրներու պրօլէտարներու սիրտերէն կը
բղխի դէպի ռուս յեղափոխական ընկեր-
ները, բայց աշխարհի պուրժուազին դըժ-
ւար թէ՛ քաջալերանքի բառ մը կամ
գործնական օժանդակութեան մաս մը
բերէ Ֆէօտալ տիրապետութենէն ազատե-
լու համար ռուս պուրժուազին:

Փոխանակ իր ամբողջ ուժը գործածե-
լու անտեսապէս և քաղաքականապէս հա-
մաշխարհային պուրժուական գերիշխա-
նութիւն մը հաստատելու համար. փո-
խանակ սրտապնդւած իր սկզբունքներով,
միայն այս հարցը վեր առնելու, պուր-
ժուազին տակաւին մինչև այսօր կերթայ
նոյն անհեռատեսութիւնով ու շնական ան-
յազութիւնով, որ իր ամբողջ պատմու-
թեան նկարագիրը կազմեց: Համաշխար-
հայնացած անտեսականօրէն, բայց տա-

կաւին քաղաքականապէս նեղմիտ տըլի-
մարներ, համայնագէտ առուտուրի մէջ,
բայց տակաւին թաթաւուն չարչիւ ինկած
ողիով. աշխարհածաւալ ուժ մը, բայց
տակաւին անկարող շքեղ հնարաւորու-
թիւնները կանգնելու: Ու այսպէս պուր-
ժուաղին ամէն տեղ նոյն անճարակ, ան-
կարող խոստմնատուն եղած է ու է:

Պուրժուաներու նւաստ շահագիտու-
թիւնները կըշեն զիրենք դէպի առաջ,
պրօլէտարական յեղափոխութեան սար-
սափը աւելի զօրաւոր է քան իրենց շահա-
սիրութիւնը: Անոնք որոշապէս գիտեն թէ՛
Ֆէոտալ ուժերուն մէջ ամենէն աւելի ան-
տանելի ու վայրագ թշնամիներ կդտնւին
գործաւոր դասակարգին համար և այս
իսկ տրամարանութիւնով մենք կտեսնենք
որ երբ անոնք կանցնին աշխարհի առաջ-
դիմական ուժերուն գլուխը, ամեն տեղ
դաշնակից կըլլան պատմական նախկին
շրջաններու իրենց հակառակորդներուն
հետ: Գետնաքարշօրէն կմուրան Ֆէոտալ
ազնւականութեան պաշտպանութիւնը, ա-
նոր հետ յետադիմական եկեղեցին, ոճ-
րագործ տարրը և ամենէն ինկած ու տը-
գէտ մասը գործաւոր դասակարգին: Ար-
գիլել միա՛կ կենսունակ ու պատմականօ-
րէն խղճամիտ դասակարգին ազատագը-

րութիւնը. այս եղաւ իրենց կեանքին ա-
մենավատ նպատակը, իսկ այս նպատակին
յատակը կայ միայն շահագիտութեան սո-
ղուն պաշտանքը:

Այսպէս. անոնք կկեղծեն ծաղրել ա-
րիտոկրատութիւնը, բայց իրենք կոր-
դեգրեն անոր ապրելու կերպերը: Իրենց
անձնական պաշտօնատուններուն և ժողո-
վըրդատեղիներուն մէջ կհեզնեն կրօնա-
կան վարդապետութիւնները, բայց ասոնք
իրը պատնէշ կգործածեն քաղաքական նը-
պատակներով. կդատապարտեն անբարո-
յութիւն, ոճիր, պոռնկութիւն, բայց ա-
ռանց անոնց չեն կրնար ապրիլ և լրջօրէն
չեն փորձած բնաւ ջնջել անոնք. հպար-
տօրէն մատնացոյց կընեն իրենց ղեկավա-
րութեան տակ գտնուող ընկերութեան զար-
դացումը, բայց նոյն տեղը դամւած մնա-
ցին ու կմնան այսօր ալ, առանց մէկ մատ-
նաչափ առաջ երթալու, քանի որ անողոք
և իրենց անհասկնալի օրէնքները իրենց
առաջդիմութեան համար ստեղծած, կը
հարւածեն իրենց իսկ գլուխները, հակա-
ռակ յամառ ընդդիմութեան:

Անոնք կպարծենան իրենց բարձր դա-
շախարներուն և մաքուր ազգակներուն
համար, բայց գիտակից չեն իրենց դա-
շախարներու գոնէ մէկ հատին գործնա-

կանացու՞մքն . անոնք քարոզիչներն են մարդկային իրաւունքներու թէօրիին , բայց մէկ բան անգամ դործնականով չապացուցին . ընդհակառակը անոնց դէմ կուեցան կատաղօրէն ամէն անգամ որ պատմական պայմանները անոնց իրականացումին կնպաստէր . և աշխարհի մէջ չկայ երկիր մը աւելի առաջադաս այս ուղղութեան մէջ քան Մ . Նահանգները : Եւ եթէ այս թէօրին ցանուցիր ու կղզիացած տեղերու մէջ կարճ ժամանակի մը համար կըցաւ ինքզինքը արտայայտել , ասիկա ամենէն աւելի իրենց կամքէն անկախ եղաւ . և անմիջապէս փութացին խըղճել զայն , եթէ ոչ դործաւոր դասակարգը կրնար աւելի իրաւունքներու տիրանալ :

Իրենց ազգակիները :—Այն բաները , որ հրապարակով ուրացան իբր իրենց ազգակիները , բնա՛ւ իրենց իսկական ազգակիները չէին , և միակ հաստատուն շարժիչը , որ ազգեց , անոնց դրամի նւաստ անյազութիւնն էր , որ բացէն չխոստովանեցան . բայց միշտ իրենց իտէալն էր աշխարհի առջև ու կարգարացնէր զիրենք իրենց խիղճերուն առջև :

Անոնք հագան բացարձակ ճշմարտութիւնն ու բացարձակ արդարութիւնը իբր դիմակ և ինքզինքնին կեղծ ասուածուհի-

ներու պաշտպաններ հռչակեցին . բայց ո՛չ մէկ դասակարգ այնքան ազատօրէն ու վայրագօրէն յօշոտած է արդարութիւնը որքան քափիթալիստ դասակարգը : «Մի՛ սպաններ» գոռացին իրենց ամենազգի բեմերէն , սակայն ո՛չ մէկ դասակարգ այնքան լպլիւշօրէն թափեց մարդկային արիւնը և այնքան տկար պատուականերով քան իրենք :

Ասոր հետ մէկտեղ , սակայն , անոնք Լըբութիւնն ունին յայտարարելու որ իրենցմէ աւելի և ո՛չ մէկ դասակարգ կարող է այնքան ձեռնհասօրէն ու արդարօրէն ղեկավարելու աշխարհը :

Պատմութիւնը կխարանէ զինքը իբր ամենէն անճարակ ու աննպատակ դասակարգը , որ երբէք ընկեք լթեան ղեկավարութիւնն ունեցած ըլլայ : Եւ պուրժուազիի գերեզմանին վրա պիտի գրւի բոցեղէն տապանազիւրը . «Այստեղ կպառկի քափիթալիստ դասակարգը . դաւաճան մը իր իտէալներուն , անճարակ մը կառավարելու մէջ և թշնամի մը մարդկութեան» :

VIII
ՓՐՈԼԷՏԱՐԱԿԱՆ
ԱՇԽԱՐ ՀԱԾԱԻԱԼ ՇԱՐԺՈՒՄԸ

Քրիստոնէական առաջին շարժումը Հռոմէական կայսրութեան մէջ միջազգային պրօլէտարիատի մտաւորական կեանքը անկախ հռչակեց: Այդ կնշանակէր կայսրութեան մէջ դանւող բոլոր ազգութիւններու մտաւորական ազատագրութիւնը: Սեռային-կազմակերպութիւններու (Sex organizations) անկումէն ի վեր առաջին անգամն էր որ ժողովրդային զանգւածներ քրիստոնէական առաքելութիւնով սրտաղեղ՝ փորձեցին իրականացնել իրենց անհատական ազատութիւնն ու մասնաւոր դիրքն ու միսիօնը աշխարհի մէջ:

Հազարաւոր նարիններ անցեր էին առանց մտաւորական ուէզ զարգացում տեղի ունենալու տիրող դասակարգերու նեղ ու անձնամոլ մտածումներուն մէջ: Քրիստոնէական առաջին շուժումին հետ մարդկութեան ճշմարիտ միտքը սկսաւ խորհիլ այն կապերուն վրա, որոնք առընչութիւն ունէին մարդկային ամբողջ ցեղին բնական բարեշրջումին հետ: Եւ այսինքնազիտակից մտաւորական կեանքը, իր անտեսական ու քաղաքական պայմաններէն բղխած, ինքնաբերաբար ստեղծեց միջազգային եզրայրութեան բարեշրջական գաղափարները — հանգստութիւն տունի մէջ ու դուրսը, ազատագրութիւն ամէն ճնշումներէ, հաւասարութիւն ու արդարութիւն ամենուն համար:

Քօնսթանտինի օրով հարուստ, ընչեղ քրիստոնէաներու դաւաճանութիւնը փոխեց այս բոլորը: Եկեղեցին, աշխարհի վրա իբր առաքելութիւն մը («երկինքի թագաւորութեան») մը, որ կը տրէր քրիստոնէական կեանքի փոխարէն, և անձանօթին մէջ ապազայ երջանկութեան մը անարժէք մէկ ուրւաղիծը, լքեց հասարակական բարեկեցութեան հիմնական հարցը ու զայն լուծեց («սուրբ»)երու համայնացումին մէջ: Ան զրկեց ժողովրդային զանգ-

լածները միտքի ազատութեան տարրական իրաւունքէն. սպաննեց նոյնիսկ հոգիները, որոնք փրկել կոչւած էր, իր 1500 անէծքի ու դժոխքի տարիներու ընթացքին խոշտանգեց այն հոգիները, որոնք ամբողջ մարդկութիւնը մտաւորական խաւարէն պիտի փրկէին, դասակարգային տիրապետութեան ու անհատական սեփականատիրութեան յուղայական վարձատրութիւնով խարուկեց, այրեց եղբայրութիւն, խաղաղութիւն, ազատութիւն, հասարակութիւն ու արդարութիւն:

Ժողովրդային զանգւածները կուրորէն չարչարեցան ու տառապեցան փոփոխակի ստրկութեան, աւատական ժառանգատիրութեան և քաղիթալիստական ճնշումներու տակ: Երբեմն երբեմն մինակ անոնք անհանդստութեան նշաններ կը ցուցնէին. բայց իրենց կեանքերը լուսազրկւած էին ու դիտակցութեան շրջափակը իրենց համար գոցւած ու նիւթւած էր: Տիրող դասակարգերու խարեբայ ուսուցմունքով թունաւորւած ու հաշմանդամւած հասարակական զանգւածները կը տըքային իրենց ոտներուն վրա դրւած ծանր բեռերուն տակ, կը հռաչէին ու կ'անիծէին ինքզինքնին իրենց դժխեմ ճակատագիրին համար: Փոխանակ հաւաքելու ի-

րենց մարդկային ուժերն ու փոխելու դասակարգային հաւատքը, անոնք սինալոթքներով կը բողոքէին տիրող դասակարգին կողմէ ստեղծւած աստուածին, սակայն, տիրողներու ճշմարիտ կուռքը, ոսկի հորթը, միայն շահագործողներու ալոթքներուն կը պատասխանէր եւ վայրագորէն կը յօշոտէր միլիոնաւոր տառապողները, քանի անոնք կը գետնաքարչէին իրենց կեանքերը:

Գերմանիայի Բարեկարգութիւնը փոխանակ ազատագրելու՝ նոր շղթաներով կաշկանդեց անոնք: Տնտեսապէս և քաղաքականապէս անոր նպատակն էր միայն տէրերը փոխել, իսկ հոգևորապէս ունէ փոփոխութիւն չկար: Թէև Լուտեր և իր աշակերտները Պօղոս առաքեալի և զրիտոնէական ուսմկավարութեան պատմութեան ճանովն էին զգեստաւորւած, սակայն նոյն խարեբաներն էին, ինչ որ էին Փէօտալ եկեղեցիի առաջնորդները: Անոնց պաղան հոգևորական կալանքներէ ունէ ազատագրութիւն չէր ենթադրեր, այլ Փէօտալական կղերապետութիւն ու կրօնի բաժանում մը: Իր դրսերեւոյթին մէջ թէև աստուածաբանական կրօնի բաժանումն սկիզբը որոշադեց, բայց ասիկա բան մը չէր արժեր բնաւ:

Յետոյ բողոքականութեան պատմութիւնը անոնց, որոնք հեռացան կաթողիկէկեղեցիէն, կեղծիքներու շարք մը եղած է, յաջորդական բաժանումներու շրջան մը, որ մինչև կաթողիկէկեղեցիին սիրտը հասաւ. իսկ այս կրօնական անկումը հոգևորական ցուքն ու նախանշանն էր տընտեսականին: Տասնութերորդ դարի Անգլիական Յեղափոխութիւնը տնտեսական նոր տէրերու ստրիկանդներու մինակ նշանը չէր, այլ ասպացոյց մը եկեղեցիի քայքայումին: Ամերիկեան և Ֆրանսական Յեղափոխութիւնները այս տէրը, պուրժուազին, աւելի ասպահով նստեցուցին դահին վրայ և միևնոյն ատեն ալ յայտարարեցին թէ՛ այն օրերու պուրժուան գիրենք ազատագրեր էր աստուածպետական կրօնէն: Մասնաւորապէս Ֆրանսական պուրժուազին գործնականապէս ալ ասպացուցուց ասիկա եկեղեցիին ստացւածքները կողոպտելու վորձերով: Ասիկա պարագայ մըն է շատ լաւ յիշելու, որովհետև ժամանակակից պուրժուազին է որ պրօլետարական յեղափոխականները «եկեղեցիի թշնամի» կը յայտարարէ: Պուրժուազին է, որ իր ծնած օրէն իսկ քանդեց աստուածաբանական կրօնը և եթէ ամբողջապէս չջնջեց, պատճառը պարզապէս

իր թշուառական վատասրտութեան մէջ կը կայանայ, որ յատկանիշը կը կազմէ բոլոր պուրժուա գործերուն, երբ անոնք ուղղւած են յետադիմական ուժերուն դէմ. և, յետոյ, այս պարագային մէջ պուրժուազին էր, որ պիտի տկարանար, որովհետև ան չկրնար ջնջել եկեղեցիին առանց ջնջելու տնտեսական այն ննարդարութիւնները, որոնց վրայ ամբողջ պուրժուազին կը կանգնի:

Ժամանակակից պրօլետարիատն է, որ պիտի լրացնէ ինչ որ անողն պուրժուազին սկսաւ բայց անկատար թողուց: Պրօլետարիատը պիտի քանդէ անոնք խորապէս գիտակցելով որ եկեղեցիներու մեծագոյն ուժերը ո՛չ թէ անոնց հոգևորական գորութեան, այլ անոնց աշխարհային ըստացւածքներուն մէջն են: Վերցուցէ՛ք կղերապետութեան նիւթական կողոպուտները և քանդած կ'ըլլայ բոլոր կրօններու կրօնապետականութեան հիմնաքարը. պարտաւորցուցէ՛ք կղերականութեան ամէն մէկ անդամը ապրիլ համեստ վաստակով և ո՛չ թէ յաւելւածական շահով, որով կը հոգան իրենց արխատուրտ կազմակերպութիւնը, և արդէն ջնջւած պիտի ըլլայ կղերական ուժը մարդկային միտքին վրայէն, որովհետև այս ուժը չկրնար

գլխամանալ գլխտական օրէնքներու ու ազատ քննադատութեան փորձին :

Մենք չենք զարմանար եթէ ժամանակակից պրօլէտարիատի կէս գլխտակից շարժումները անմիջապէս չկրցան ինքզինքնին փրկել այդ լուծէն, ինչ որ քրիստոնէական յեղափոխութեան բնաջնջումը պիտի նշանակէր : Այն օրէն վերջ, երբ Ֆրանսական պուրժուազիին արհամարհեց իր իսկ աստուածն ու փարլամէնթի վճիռով աստուածարանական կրօնը քայքայեց, գործաւոր դասակարգին տրւած հին խըրատը՝ «աղօթէ՛ և գործէ՛»-ն կորսնցուց իր յենակէտը, այսպէսով Ֆրանսական պուրժուազիին ցուցուց թէ՛ իրենք աւելի կիյոթինին կհաւատային քան թէ աստուածին : Ինչո՞ւ համար պրօլէտարիատը չառնէր իրենց բառերը ու չգրէր իր գրօշակին վրա . «Ո՛չ աստուած, ո՛չ տէր», քանի որ գործը միշտ անոնց հետ էր աղօթէին կամ ոչ : Եթէ Ֆրանսական պուրժուազիին ջնջեց երկինքի տէրը, Ֆրանսական պրօլէտարը նշանաբան ըրաւ ջնջել երկիրի բոլոր տէրերը :

Թէև պուրժուազիին աւելի հեռատես անդամները զգուշացան բոլորովին ջնջել ճնշումի ձեռնտու միջոցները գործաւոր ժողովուրդի միտքին վրայէն, բայց ասի-

կա չկրնար ժխտել այն իրողութիւնը թէ՛ յեղափոխական պուրժուազիին անասուածութիւն գրեց իր եռագոյնին վրա : Եւ երբ ժամանակակից պրօլէտարիատը վճռապէս ձեռք կ'առնէ պուրժուազիին սկսած յեղափոխութեան տրամաբանական ու պատմական առաջացումը հինին վրայ, այս իրողութիւնը չեն կրնար անգիտանալ կամ անտեսել որքան ալ ժամանակակից շատ մը կարճատես «քրիստոնեաներ» և «անասուած» սօցիալիստներ այսօր կրկնեն պուրժուա հեռատես տարրերու անցեալի զգուշացումները : Եւ եթէ եկեղեցիները պիտի շարունակեն իրենց ընթացքը ապագային մէջ, ինչպէս անցեալին մէջ շարունակեցին, պէտք չպիտի ըլլայ յաղթական պրօլէտարիատին Ֆրանսական պուրժուազիին միջոցով ջնջել կրօնը, որովհետև աստուածարանական կրօնը ինքզինքը պիտի ջնջէ արդէն . իսկ կրօնը առանց աստուածարանութեան պատմականօրէն չկրնար երկար տեսել :

Այս համոզում սկզբունքներով էր որ ժամանակակից պրօլէտարական շարժումը դուրս ձգեց կրօնական հարցը իր պրօպականտէն : Բայց ի՞նչպէս փոխեցաւ աշխարհը, քանի որ 1500 տարիներ առաջ պրօլէտարական միտքը քնացած էր քրիս-

տանէութեան թմրեցուցիչ ազդեցութեան տակ: Քրիստոնեայ պրօլէտարը գտնուեցաւ աշխարհի մը մէջ, որ կեսարներու ձեռքերով միջազգային մեծ կայսրութեան մը մէջ ձուլւած էր. և այսպէս քրիստոնէական յեղափոխութիւնը պարագաներու ուժով դարձաւ միջազգային. բայց այսօր աշխարհը բաժան բաժան եղած է ազդութիւններու խառնիճազանձանդամներով, որովհետեւ չկայ յարարութեան կապ մը, միջազգային լեզու մը, խիստ ատոր փոխարէն կան աճող հակառակութիւններ ու դժարութիւններ. քաղաքի և դիւղի գործաւորներուն մէջ:

«Սէրի կրօն»ին տակ ապրւած 1500 տարիները չմեղմացուցին օրէնքները, որոնցմով գործաւոր ժողովուրդին միտքը կաշկանդւած՝ կը սքար Ֆէօտալիզմի տակ: Ընդհակառակը այս օրէնքները վարհուրեւ լիօրէն ու անդժօրէն ճնշեցին: Եկեղեցին ամէն կերպով դազանութիւն դարբնեց մարդ արարածին մէջ, մէկ կողմէն տանուէրերու մէջ բռնակալի ողին ներշնչելով, միւս կողմէն գործաւոր դասակարգէն հպատակութիւն պահանջելով. հպատակութիւն անասելի չարիքներու երկիրի վրա և անստոյգ անդէականին մէջ: Գործաւոր դասակարգերու յեղափոխա-

կան մտածողներուն համար ուրիշ բան չէր մնար ընելու բայց եթէ դադանի գործունէութեան մէջ ապաստան փնտռել, եթէ նոյնիսկ իրենց հոգեւորական խրատատունները ասուածառաք դազաններ հանէին իրենց դէմ:

Տասնըիններորդ դարի սկիզբէն մինչև կէսերը Եւրոպայի մէջ գործաւոր յեղափոխականներու դադանի ընկերութիւնները շատ բազմացան. թէև նոյնիսկ 1796ի ստեղծները «Հաւասարներու Ընկերութիւն»-ը, Պապէօֆի ղեկավարութեան տակ, իրաւահաւասարութեան կեղծիք երևան հանեց և յայտարարեց թէ «թէական հաւասարութիւնը օրէնքի առջև պատրանք մըն է և որքան ատեն որ մէկ մարդ կայ աւելի հարուստ ու աւելի զօրաւոր քան իր հաւասարները, հաւասարակշռութիւնը խանգարւած է... Հողը ո՛չ մէկին կը պատկանի, խիստ անոր արդիւնքները անկուն»:

Այս դադանի կազմակերպութիւններէն ո՛չ մէկը յիշատակելու արժանի քաղաքական ազդեցութիւն ունեցաւ, նոյնիսկ այն ատեն, երբ իրենց ամենէն նպաստաւոր պայմաններուն մէջ կը գտնուէին: Անոնք շատ դիւրին կ'իյնային անիշխանական փորձերու մէջ, պուրժուական ընկե-

ըութիւնը տասպալելու իրենց փորձին մէջ: Այս տեսակ կազմակերպութիւններու միակ դործնական քայլը եղաւ կատաղութիւններու մասնակի և վաղահաս պայթիւններու անպէտուծիւնը ցուցադրել և առիթ տալ որ իրենց շարքերէն պայծառատես միտքեր ծրագիրներու մասին աւելի լաւ լուսարանութիւններ տան:

Ֆրիդրիքական ուժի այս փաստաբաններու մէկ քանիին հերոսութիւնը արժանի պիտի ըլլար մրցանակի, եթէ ժամը հընչած ըլլար և որ սակայն տեղի կ'ունենար պրօլետարական կեանքի այդ առաջին բեմին վրա անօգուտ ու անժամանակ կերպով, թէև ան մեծ դեր պիտի խաղար եթէ տեղ ունենար ներկայ աշխատաւորներու առաջնորդներու ստրուկ ու վատ հոգիին մէջ: Այս տեսակ հերոսութիւններ յաճախ ծնան յուսահատութենէ, ինչպէս, Ֆրանսացի ոստայնանկներու կախաղան բարձրանալու ատեն, որոնք Լիօնի պատնէշներուն վրա ծառայան, 1831-ին, իրենց դըրօշակներուն վրա գրելով սա մռայլ վերատառութիւնը. «Կամ պէտք է ապրինք գործելով կամ մեռնինք կուելով»: Երբեմն այս կատաղութիւնը կը թափուէր պրօլետարներու վրայ. ինչպէս Փարիզի մէջ, 1848-ին, Յունիսեան ապստամբութեան

ատեն կամ Փարիզեան Գոմմիւնին, 1871ին և նոյնպէս շատ անդամներ մինչև մեր օրերը. ու այս բոլորը տիրող դասակարգերու լիրբ ձեռքերով: Սաչափը, սակայն, ճշմարիտ է որ ամէն անգամ որ պրօլետարները բազուկները բարձրացուցին, կուեցան մարդերու պէս և՛ միայն տեղի տւին ջախջախիչ անհաւասարութիւններու դէմ յուսահատօրէն կուելէ վերջ: Իսկ պուրժուազիին համար պատմութիւնը կ'ըսէ միայն թէ՛ ան երբէք քաջ չէ եղած բացի այն պարագայէն, երբ նրժարը անհամեմատ հաւասարութիւնով իր կողմն է եղեր:

Ամէն ժամանակներու և ամէն երկիրներու մէջ քաջութեան ոգին պրօլետարական շարժումներու առաջնորդող տարրերուն հզօրագոյն յատկանիշն է եղեր. ան մեզ չպիտի յուսախաբէ ապագային ալ, երբ պատմական ժամը հնչէ: Փարիզեան բուռ մը պրօլետարներ, 1848-ին, ո՛չ միայն Ֆրանսական պուրժուազին այլ ամբողջ Եւրոպայի ղեկավարները սարսափեցուցին: Ի՞նչեր չպիտի ընէ միջազգային ամբողջ պրօլետարներու միացած յեղափոխութիւնը...

Զայրացած պրօլետարներու այս առաջին կատաղի պայթիւններուն կողքին կը

կանգնին Սէն Սիմօնի, Փուրիէի և Օէնի պէս մտածողներու իւթօփխտ ուսումնասիրութիւնները: Այս մարդերը մտաւորապէս շատ աւելի բարձր կը կանդնէին քան գաղանի ընկերութիւններու առաջնորդները, և իրենց դադարները հզօրապէս կ'ազդէին ժամանակակից դործաւոր դասակարգի միտքին վրայ: Տասնըիններորդ դարի սկզբնաւորութեան ատեն ամէն յեղափոխական գործունէութիւն կապւած էր այս իւթօփխտներու միտքերուն հետ: Այս մարդերու գրածներուն մէջն էր որ պրօլէտարը առաջին անգամ գտաւ իր պատմական պայմաններուն ու նպատակներուն գիտական հասկացողութիւնը: Սէն Սիմօն աղօթօրէն տեսաւ թէ՛ Փրանսական Յեղափոխութիւնը դասակարգային պայքարներու շարք մըն էր, և թէ այդ կռիւնները երկարաձգւած էին աշխարհի պատմութեան ամբողջ երկայնքին: Եւ հակառակ իր շուրջը գտնուած ազդութիւններու ծայրագոյն բաժանումներուն, ան միջնազգային համադործունէութեան մը անհրաժեշտութիւնը տեսաւ:

Փուրիէ Սէն Սիմօնէ աւելի յստակ տեսաւ ընկերային կազմաւորութեան թաքուն թելերը և յայտարարեց թէ՛ մարդկութիւնը վայրենութենէ դէպի վեր, բար-

բարոսութեան և նահապետականութեան մէջն դէպի քաղաքակրթութիւն կը բարձրանար, թէ այդ քաղաքակրթութիւնը առաջ կ'երթար փոխադարձ հակառակութիւններու միտումներու մէջն եւ թէ՛ «աղքատութիւնը կը ծնի փարթամութենէն»: Ո՛չ մէկը իրմէն աւելի պայծառօրէն ու անխնայ քննադատած է պուրժուական ընկերութիւնը:

Բօպլըթ Օէն էր առաջինը, որ իգական սեռի, տղաքներու աշխատութիւնը արդիւլող օրէնք մը առաջարկեց, և անդլիական ճարտարաբուհատական պրօլէտարներու առաջին շարժումին՝ անդլիական քարթիստներու եռանդ ու կեանք ներշնչեց: Նիւ Լէնարքի մէջ իր գաղութը շատ լաւ կազմակերպւած ու ծրագրւած էր ազատագրելու համար գործաւոր դասակարգը շահակցական ձեռքերէն, նոյնիսկ քափաթալիստ դասակարգի ղեկավարութեան տակ:

Փուրիէի համալրարկաններուն մէջ նման գաղափարներու արտայայտութիւններ կը գտնուին և շատ մըն ալ ծրագրերներ կան, խուսափելու համար քափիթալիստական շահագործութենէն և ղիմելու դէպի գաղթականութիւն:

Թէև թերի էին իւթօփխտներու դա-

դաժարներն ու գործերը, սակայն կ'արտայայտէին խորհուրդի վսեմութիւն, նըպատակի անկեղծութիւն և գործունէութեան՝ անձնւիրութիւն, ինչ որ պուրժուազիին կողմէն բնաւ ծրագրւած կամ ձեռնարկւած չէ եղեր: Ֆրանսացի և անգլիացի իւթօրիստ սօցիալիստներ և քոմիւնիստներ անմահ յիշատակարան մը կանգնեցին պատմութեան մէջ, հաստատելով մարդկային բնութեան անկորընչելի «բարութիւն»ը, որ նոյնիսկ հազարաւոր դարեր՝ անհատապետականութեան ղեկավարութեան օրերուն մէջ անկարելի եղած է մահացնել ընկերութեան ամենէն աւելի ճնշւած ու տառապած անդամներու մէջէն: Ժամանակակից պրօլէտարիատի առաջին ռահվիրաները, քրիստոնէայ պրօլէտարիատի առաջնորդներուն պէս, տիրող դասակարգերու բերանին ծամոցներ տւին, որոնք կեղծաւորօրէն ամբողջ մարդկային բնութեան «մեղանշականութիւն»ը ողբացին, որովհետեւ իրենց իսկ սեփականատիրութեան ուտիճովը սպառած, վատօրէն ու նեղմիտօրէն անձնամոլ եղան:

«Փոխեցէ՛ք պայմանները և փոխած պիտի ըլլաք մարդկային բնութիւնը»: Այս է այն յանկերգը, որ կը լսուի ժամանակա-

կից պրօլէտարական մտածողներու գործերու մէջէն: Պուրժուազին, սակայն, վատ պայմաններ ստեղծեց մէկ կողմէն ու միւս կողմէն ալ լաւ մարդերու պակասութենէն կը դժգոհի: Այս տեսակէտէն, հակառակ իրենք շրջապատող ճնշիչ պայմաններուն, գործաւոր դասակարգի մտածողները մարդկութեան ըմբռնումի մասին աւելի բարձր, աւելի վսեմ բարոյական մը ցուցադրեցին քան տիրող դասակարգի ամենաբարձր անհատականութիւնները, որոնք անկարող են բարոյականութեան հիմքը դնելու, որովհետեւ իրենց իսկ գոյութիւնը նախատինք մըն է բարոյականութեան դէմ: Սակայն տակաւին յոյս մը կայ նոյնիսկ իրենց և իրենց վարձած քարոզիչներուն համար: Պրօլէտարը պիտի ազատագրէ անոնք իրենց նւաստ դրամի անյազութենէն և ընկերային շրջանակով մը պիտի շրջապատէ ու բուժէ անոնք իրենց բնական չարութենէն ու նոյնիսկ իրենց բարոյախօս քարոզիչներուն պիտի տայ աւելի օգտակար, աւելի նւազ ալլասերող զբաղում մը:

Ճիշտ ինչպէս որ ժամանակակից պրօլէտարիատը իր ստեղծումէն մինչև վերջը բնական բարոյականութեան մը ճամբան բացաւ պահանջելով անբարոյական տիրող

դասակարգին ու շահագործութեան ջրն-
ջումը, այնպէս ալ միջազգային խաղա-
ղութեան պուրժուական կեղծիքէն աւելի
բարձր կանգնեցաւ սահանջելով դասա-
կարգային ներքին կռիւի ջնջումը, իբր
առաջին պայմանը բոլոր խաղաղութիւն-
ներուն: Եւ այս հասկացողութեան միջո-
ցովն է, որ պրօլէտար յեղափոխականնե-
րը կրցան յաղթել անապաշտ և անմարդ-
կային ենթադրութիւններուն, պուրժու-
ական «հայրենասիրութեան» ու նւիրա-
գործեցին բոլոր երկիրներու գործաւոր
ժողովուրդին միութիւնը, համաձայնելով
չկուել իրարու դէմ շահագործող դասա-
կարգերու շահերուն համար:

Տիրող դասասարգի «խաղաղութեան հը-
րեշտակներ»ը դո՛հ մնացի՞ն այս միջազ-
գային խաղաղութեան կազմակերպութե-
նէն: Ընդհակառակը առաջին նախատինքը
իրենք ունացին խաղաղասէր գործաւոր-
ներուն դէմ, իբր թէ անոնք «ոչ-հայրե-
նասէր»ներ էին, որովհետեւ մերժեցին
կուել իրարու դէմ դահերու վրայէն ու
սակարաններու մէջէն խաղաղութիւնը
սիրողներու հրամանով:

Երբ քոմիւնիստներու քլըպին առաջ-
նորդները Քարլ Մարքս և Ֆրէտէրիք էն-
կէլս իրենց համբաւաւոր Մանիֆէսթը

հրատարակեցին, 1848-ին, անոնք այսպէս
պատասխանեցին ամբաստանութեան. «Քօ
միւնիսթները կը մեղադրին, որովհետեւ
կրբ թէ անոնք երկիրներ և ազգութիւններ
ջնջել կ'ուզեն: Գործաւորները երկիր չու-
նին: Մենք չենք կրնար անել անոնցմէ
այն ինչ որ չունին արդէն... Ազգային
տարբերութիւններ և հակառակութիւններ
ժողովուրդներու մէջ օրէ օր կ'անհետա-
նան պուրժուադիւ առաջըլծութեան միջո-
ցով... Պրօլէտարիատի գերիշխանութիւնը
պատճառ պիտի դառնայ որ անոնք աւելի
չուտ չընան: Քաղաքակրթապէս առաջ-
նորդ երկիրներու միացած գործունէու-
թիւնը վերջապէս պրօլէտարիատի ազա-
տագրութեան առաջին պայմաններէն մէ-
կըն է...» Եւ վերջացնելով իրենց անմահ
տօքիւմանը, միջազգային գործաւոր դա-
սակարգին Անկախութեան դիտական ա-
ռաջին Հրովարտակը, անոնք հնչեցին աշ-
խարհաշունչ մարտահրաւէրը — «Պրօլէ-
տարը բան մը չունի կորսնցնելիք եթէ ոչ
կը շղթաները. իսկ շահելիք աշխարհ մը
ունի: Բոլոր աշխարհի գործաւորներ,
միացէ՛ք»:

Քօմիւնիստ Մանիֆէսթը ո՛չ միայն
միջազգային գործաւորներու եղբայրու-
թեան սկզբունքները յայտարարեց, այլ

նաև խիզախօրէն ծրագրեց պատմական
անխուսափելի ձևակերպումը դասակար-
գային պայքարին, որ գործաւոր դասա-
կարգը պիտի բարձրացնէ աշխարհը ա-
ռաջնորդողի դիրքին: Ազգային բոլոր
փտտածութենէն զատ, շահագործողներու
անձնամով վէճերը, տիրող քրմապետու-
թեան մոլեռանդ դառանցանքները ամբող-
ջապէս պարզւեցան այս երկու պրօլէտար
մեծ մտածողներուն կողմէ, որոնք գոր-
ծաւոր դասակարգի միտքը բացին իրենց
փրկարար միսիօնով ու պարզեցին գի-
տակցական պայծառ երկինք մը:

«Երբ բարեչըջումի ընթացքին դասա-
կարգային շերտաւորումները անհետա-
նան և ամբողջ արտադրութիւնները բոլոր
ազգերէն կազմւած ընդարձակ ընկերու-
թեան մը ձեռքերուն մէջ գտնւին, այն ա-
տեն համաձայնութեան ուժը պիտի կոր-
սընցնէ իր քաղաքական հանդամանքը:
Քաղաքական ուժը պարզապէս դասակար-
գի մը կողմէ կազմակերպւած ուժ մըն է
ճնշելու համար ուրիշը: Եթէ պրօլէտա-
րիատը պուրթուադիին հետ ունեցած իր
հակառակութեան միջոցին, ստիպւած է,
պարագաներու հրամայականութենէն
մղւած, կազմակերպւել իբր դասակարգ
մը, եթէ, յեղափոխութեան մը նպատա-

կով, ան ինքզինքը ղեկավար դասակարգը
կը դարձնէ, այսպէսով արդարութեան հին
պայմանները բռնի կերպով վտարելու հա-
մար, յետոյ, այս պայմաններէն վերջը,
ան պիտի ջնջէ դասակարգային հակառա-
կութիւնը ճնող պայմանները և դասակար-
գերը ընդհանրապէս. ու ինքն ալ իբր դա-
սակարգ մը պիտի ջնջւի: Հին պուրթուա
ընկերութեան տեղ, իր դասակարգերով
ու դասակարգային հակառակութիւննե-
րով, մենք պիտի ունենանք ընկերութիւն
մը, որի մէջ ամէն անհատի ազատ զարգա-
ցումը պայմանը պիտի ըլլայ ամբողջին
ազատ զարգացումին»:

Այս մարդերը չդոհացան միայն հաս-
տատելով այս սկզբունքները, այլ տենդո-
րէն հետապնդեցին բոլոր առիթները ի-
րենց սկզբունքները գործնականացնելու
համար: Եւ երբ, 1864-ին, պայմանները
հասունցան, գործնական քայլ մը առնելու
համար, անոնք կազմակերպեցին «Միջազ-
գային Գործաւորներու Ընկերութիւն»-ը
(International Working Men's Associa-
tion), ժամանակակից առաջին միջազգա-
յին կեդրոնը հաստատւած բոլոր երկիր-
ներու յեղափոխական սեփականագործ-
ներուն տեղեկատուութեան և կարգադր-
ութեան համար:

Եւ տակաւին շատ աւելի ընդարձակ ծը-
րագիրներ ու լայն ըմբռնումներ, յղաց-
ած պրօլէտարական մտածողներու կող-
մէ, ամչցուցին աւատական ու պուրժուա
պետերն ու փրօֆէսորները: Մինչդեռ
պուրժուազին նոյնիսկ իր ծագկած ատենը
ընաւ չկրցաւ ստեղծել համաշխարհային
եղբայրութեան մը հասկացողութեան
հիմքը, պրօլէտարիատը անդին կատարե-
լադործեց դայն նոյնիսկ իր առաքելու-
թեան սկզբնաւորութեան մէջ: Եւ Մարք-
սի ու Էնկէլսի դործերու արդիւնքով պրօ-
լէտարիատը գրականութիւն մը հիմնեց,
որ իր առաջացումներուն մէջ իբր գիտա-
կան առաջնորդ ծառայեց, և որ պուրժու-
ական իմացականութեան ամբողջ ճար-
տարութիւնը չկրցաւ հերքել:

Էնթէրնասիօնայի կազմակերպութենէն
տարի մը առաջ, Ֆէրտինանտ Լատսալ
գերմանացի դործաւորներու ընդհանուր
ընկերութիւնը կազմակերպեց, որ միև-
նոյն ատեն եղաւ գերման սօցիալիստ
փարթին, — պրօլէտարական յեղափոխա-
կան կուսակցութիւններու առաջինը —, որ
քափիթալիստ բոլոր երկիրներու մէջ ի-
րարու ետե գոյացուց ուրիշներ ալ, ան-
միջապէս որ պայմանները անհրաժեշտ
հասունութիւններն ունեցան: Այս կու-

սակցութիւնները, դէպի իրենց սկզբունք-
ները ցուցուցած անվհատ յարատեութիւ-
նով ու անկեղծ հաւատարմութիւնով, կը
պայքարին աշխարհի քաղաքական ուժե-
րը ձեռք անցնելու համար. խաղաղ միջո-
ցով՝ եթէ՛ կրնան, բազուկներու ուժով՝
եթէ՛ պէտք զգան: Անդին պուրժուական
կուսակցութիւններ կը արբալուծւին ու
կը մեռնին, երբ ասդին պրօլէտարական
աշխարհածաւալ կուսակցութիւնը յարա-
տեւօրէն կը ծաւալի ու ուղղակի կը քալէ
դէպի իր ստոյգ յաղթանակը:

Այստեղ տեղը չէ Միջազգային Սօցիա-
լիզմի պատմութիւնը գրելու, մինակ կը
բաւէ յիշել իրողութիւնը թէ՛ ժամանակա
կից բոլոր երկիրներու սօցիալիստական
կուսակցութիւնները կ'ապրին հալածանքի
դաժան տարիներէ վերջը և վճռականօրէն
կը յայտարարեն թէ՛ պիտի առաջ տանին
անցած տարիներու պրօլէտարական յե-
ղափոխութեան աւետարաններուն մինչեւ
ամենավերջին դիրք: Նոյնիսկ ռուսական
պրօլէտարիատը նւիրագործած է յեղա-
փոխութիւններու նոր շրջանը, որ պիտի
ծաւալի այս երկրագունդի ճարտարա-
բանական երկիրներուն մէջ ու աշխար-
հը պիտի մշակէ ճշմարիտ քաղաքակր-
թութեան մը համար:

Պուրժուական ընկերութիւնը իր վերջին խիթերուն մէջն է: Ամէն ատենէ աւելի տիրող դասակարգերու քաղաքագէտները անկարող են վարելու ընկերային գործերը, որով մարդկութիւնը կարենայ հասնիլ իր կատարեալ զարգացումին: Բայց պրօլէտարական աշխարհը ծաւալած է այսօր արևը մարը չմտներ իր տիրապետութեան սահմաններուն մէջ: Միլիօնաւոր գիտակից ու վճռական որոշումներով խանդավառ մարդեր, կիներ ու տղաքներ կը ծափահարեն ամէն կլիմայի տակ ու կը նւիրեն ինքզինքնին գլուխով ու սիրտով, հաստատելու համար միջազգային հասարակապետութիւնը: Պրիւսէլի Միջազգային Բիւրօին մէջ անոնք հին էնթէրնասիօնալի ժամանակակից ու խոստմնալի յաջորդն ունին:

Ի՛նչ որ քրիստոնեայ պրօլէտարները երազեցին, ի՛նչ որ յեղափոխական գերիներ ցանկացան իրենց ցաւատանջ հողիներու խորերէն, ի՛նչ բանի համար որ պրօլէտարական առաջին հերոսները պայքարեցան տասնըիններորդ դարին ու դայն նւիրագործեցին իրենց արիւնով, անոնք բոլորը յաղթականօրէն պիտի կատարելագործեն քսաներորդ դարի պրօլէտարական յեղափոխութեան ձեռքով:

Բայց միջազգային պրօլէտարիատի առաքելութիւնը չվերջանար քաղաքական ուժի տիրացումով, կամ երկրագործութեան ու ճարտարարւեստի համայնացումով, կամ միջազգային խաղաղութեան նւիրագործումով: Իր քաղաքական առաքելութեան զարթնումին հետ, պրօլէտարիատի միտքը գինովցած է նաև թէ՛ պէ՛տք է միջոցներ ստեղծել, որպէսզի մարդկային միտքը կատարելանայ ու կատարէ իր միսիօնը տիեզերքի հանդէպ: Անոր միտքը աշխարհածաւալ առաջին մացականութիւնն է, որ կը կանգնեցնէ մարդկային արարածները աշխարհի ու տիեզերքի հանդէպ կատարելութեան պահանջով:

Քաղաքական ու տնտեսական ճնշումներէ ազատագրութիւնը իսկապէս մարդկային բոլոր բարոյականութիւններուն անհերքելի հիմքն է. բայց մարդկութիւնը կատարեալ չպիտի ըլլայ, քանի տիեզերքի թաքուն ուժերը չեն ենթարկւած մարդ արարածի կամքին: Որքան ատեն որ հիւանդութիւն ու մահ կը պահւելուն կրակի, ջուրի, օդի, երկրաշարժներու, հեղեղներու, հրաբխային ժայթքումներու, ուրիշ աշխարհներու հետ պատահած

բաղխումներու մէջ, մարդկային ազատութիւնը տիեզերական ուժերու մէկ շնորհը պիտի ըլլայ: Եւ, սակայն, ինքը, մարդը պէտք է աշխատի ըլլալ այդ տիեզերական ուժը, որի առջև հլուօրէն պիտի խոնարհին տիեզերական միւս բոլոր ուժերը, և որի առջև կեանքն ու մահը երկարատեն չպիտի մնան իբր անլուծելի և անքօնթրօլ դաղտնիքներ:

Դասակարգային գիտակցութեան մասին մտածող պրօլէտարական միտքի զարթօնքը պատմականօրէն իր մէջ կը պարփակէ համաշխարհային մարդկութեան գիտակցութիւնն ու տիեզերական գիտակցութեան ծնունդը: Միւս դասակարգերու միտքերը աշխարհային գիտակցութեան երազներն ունեցան, բայց չհասկցան պատմական պատճառները, որոնցմով այս գիտակցութիւնն ու անոր խոչալները պիտի մարմնանային: Ատիկա մինա՛կ պրօլէտարական յեղափոխութեան յաղթանակն է, որ ազդանշանը պիտի ըլլայ միացած մարդկութեան մտաւորական յեղափոխութեան՝ ընդդէմ տիեզերական յեղափոխութիւններուն, որոնք կը սպառնան իր վերապրումին ու առաջըլմութեան:

Այս է ամենամեծ ու ամենալայն նպատակը,

որ կ'ընկերանայ պրօլէտարական գիտակցութեան, իր ծնունդէն իսկ: Եւ պրօլէտարիատի արդար իրաւունքն է յայտարարել թէ՛ այս ամենալեհ խոչալը, մարդկային ուրիշ միտք բնա՛ւ չէ յղացած. խոչալ մը, որ մարդկային ցեղի ներկայ ուժերը կը գլէ կ'անցնի: Ու այն նոյն պատմական օրէնքը, որ մեզի կը ներշնչէ այն հաստատ համոզումը թէ՛ սօցիալիզմը պիտի տիրէ աշխարհին, կը վստահացնէ նաև թէ՛ մարդկային միտքի բարեշրջումը անպայմանօրէն պիտի արտադրէ իմացական այն բարձրութիւնը, որ վեր պիտի ըլլայ տիեզերքի բոլոր վտանգներէն ու թշնամի տարրերու կոխներէն:

Տիեզերքը ժամանակի յաւիտենականութիւններ պահանջեց արտադրելու համար անասնային մակարդակի մը վրա մարդկային գիտակցութեան առաջին կայծը: Անհուն մը անցաւ անասուն մարդը դասակարգի ու աշխարհի գիտակից պրօլէտարիատի վերածելու համար: Ուրիշ անհուն մը պէտք է համաշխարհայնապէս գիտակից մարդկութեան միտքը բարձրացնելու համար մինչեւ տիեզերատիրական միտքին: Եւ ատիկա պրօլէտարական միտքի փառայեղ ճակատագիրն է: Փրկել մարդկութիւնը քաղաքական և տնտեսա-

կան բռնակալութենէն, ստեղծելու համար
իմացականութիւն մը, որ պիտի ազատա-
զըրէ տիեզերական բռնակալութենէն, ա-
մենաբարձր արտադրութիւնը տիեզերա-
կան բարեշրջութեան:

‘Ni dieu, ni maitre’: Միացած մարդ-
կութեան միտքը, սահմանւած աշխարհին
հսկելու պրօլէտարական յեղափոխու-
թեան միջոցով, տիեզերքի բնական «Աստ-
ւած»-ը պիտի ըլլայ և ինքզինքը տէրը
պիտի ընէ ինքնիշխան տիեզերքի մը, որի
ամենաբարձր արտադրութիւնն է:

Բոլոր երկիրներու պրօլէտարներ՝ը,
միացէ՛ք: Դուք ձեր շղթաներէն զատ ո-
չինչ ունիք կորսնցնելիք, իսկ աշխարհ
մը ու տիեզերք մը ունիք շահելիք:

(Վ Ե Ր Զ)

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Կրօնի ու դիտութեան, հոգիի ու նիւթի
հաւատքը յաճախ իմ էութիւնս սարսեր
էր իրենց պայքարներով ու ես յաճախ
տեսեր էի Գիտութեան շօշափելի փաստե-
րու յաղթանակը անստուգութիւններու
վարդապետութեան վրա: Սակայն դարե-
րու սպաննիչ դաստիարակութիւնը, որ
ժառանգականօրէն, սերունդէ սերունդ ե-
կած էր իմ սիրտիս ու ուղեղիս վրայ եր-
կանաքարի պէս ճնշել, ջլատելով զգա-
ցումներուս ազատութիւնն ու միտքիս
թռիչները և տղայութեան ու սպտանու-
թեան յիշատակներն ու դասերը, որոնք
այնքան խորունկ, երբեմն անջնջելիօրէն
դրոշմւած էին ծնողքիս, դասատուներ-

րուս, զժողովրդի սարսափներու, շրջապատիս և ամէն քայլափոխիս ներկայացող երևոյթներու ձեռքով, իմ մէջ վիրաւորի տատանքով մը կ'օրօրէին Գիտութեան հաւասքը, որ, սակայն, իր խորանը արդէն սկսած էր կտաւուցանել նիւթի, ուժի ու ձևափոխութեան անմահութեան, յաւիտենականութեան զարոյց պաշտանքին համար:

Պայքարը թեթե էր բայց յամառ ու յարատե. ու ես տակաւին չէի կրցած վերջնապէս ճշդել թէ ո՞ւր եմ. կրօնի՞, հոգեպաշտութեա՞ն, անդէնականի՞ սահմաններուն թէ գիտութեան, նիւթապաշտութեան, ասդէնականի՞ սահմաններուն մէջ:

Երիտասարդ ու ուշիմ ծանօթի մը յուզարկաւորութիւնը զիս օր մը գերեզմաննոց տարաւ:

Հազիւ 25 տարեկան, խոստմնալից երիտասարդ մը, որ ապրելու այնքան արեւ ու իրաւունք ունէր, և սակայն զինքը գրին գերեզմանափոսին մէջ ու հողը լեցուցին վրան...

Յետո՞յ...

Ահա այն սարսող հարցումը, որ այժե հողակոյտին առջև աննախընթաց ցնցու-

մով սարսեց ամբողջ էութիւնս:

Մահեր շատ տեսեր էի, դադաղներու ետէ. շատ անգամ յուզարկ դացեր էի. բայց այսօր անստուգութեան մշուշէն դուրս անչափելի բարձրութենէ մը ստուգութեան ժայռին զբա կ'իյնայի: Վայրկեան մը սարսափեցայ ստուգութեան անխաւար պայծառութենէն. ուղեցի նոյն միամիտ ու անստուգութեան տղան ըլլալ յաւիտեան. բայց պատրանքի, ինքնախաբուութեան հեշտալի գոյքը զգացի որ անվերադարձօրէն կը փախէր ինչ ու ես ցուրտ հարցումի մը հետ առանձին էի:

Յետո՞յ...

Ու այդ դաժան հարցը աւելի քան տարի մը, գիշեր թէ ցերեկ, քնած թէ արթուն, սենեակիս մէջ թէ փողոցը, ուրստութեան ատեն թէ արամութեան, գործի մէջ թէ հանգիստի... ինձ յաճախեց, ինձ տիրացաւ. նախ իմ կամքով, իմ ոգեկոչումով, բայց յետոյ կամքէս անկախ, առանց իմ ուղեւուն, իմ կամքիս հակառակ...

Ու ես, որ այնքան երգասէր էի սիրած երգերուս չորնալը զգացի շութերուս վրա. ժպիտը թառամեցաւ ու մտայլանքը օրէ օր աւելի խտացաւ... Ճշմարտութիւնըն անգամ իր առաջին երևոյթին մէջ

այնքան սարսափեցնող է եղեր. ինչպէս մեղրը գուցէ այնքան դառնահամ առաջին համտեսողին համար:

«Մեռա՛յ... մեռելազուրկ դրին. տարին գերեզմաննոց. փոսը բացին. զին փոսին մէջ դրին. հողը լեցու...»

Շունչս կը բռնէր. կը կարծէի թէ արդէն իսկ կը թաղւիմ. հողի թաց ու հաստ շերտ մը կուրծքիս վրա կը ծանրանայ... Ու կը ցատկէի ոտքի եթէ պառկած էի, կը քալէի եթէ կանգնած էի. վերմակը վրայէս կը նետէի եթէ անկողինիս մէջ էի. կ'ուզէի փախիլ այդ ճիւղ միտքէն, որ ամուր կերպով կը սեղմէր կողորդս, կուրծքս ու ուղեղս:

Յուզարկաւորութեանս այդ մռայլ ու ցուրտ թափորը իմ կողքէս կը քալէր ինձ հետ ամէն տեղ: Անկողինս գերեզմանափոս մըն էր, ուր կը վախնայի երթալ ու վերմակս հողի շերտ մը, որ վրաս քաշելէ կը սարսափէի: Ամէն օր, ամէն գիշեր ես տասնեակ անգամներ ինքզինքիս յուզարկաւորութեանը կ'երթայի ու կը թաղւէի, գտնելու համար այն սարսափեցնող «յետո՞յ»ին պատասխանը, որ գերեզմանի մը եզերքէն առի:

Յուսահատեր էի: Կ'ուզէի մոռնալ այդ

բոլորը: Յաճախ կը բռնանայի ինքզինքիս մտածել. «Թո՛ղ ըլլայ ինչ որ պիտի ըլլայ. վերջապէս կարժէ՞ այս կարճ կեանքին մէջ այսպէս անտանելիօրէն տառապել. կեանք մը, որ անստոյգ է, թերեւ երևութական և աննպատակ, որի մէջ ուղեղի ու սիրտի բջիջներու որոշ դասաւորումներով նպատակ ուզած է քակոյտը»:

Իայց անկարելի. ես արդէն դերին էի այդ մղձաւանջ-հարցումին: Յուզարկաւորութիւնս ու թաղումս իմ կամքիս հակառակ հարց կուտային ինձ. «Յետո՞յ... ի՞նչ կայ այդ փոսէն վերջ... Ո՞ւր գերեզմանէն յետոյ...»:

Գերեզմաննոցը կ'երթայի յաճախ անկամօրէն. չեմ զիտեր անո՞ր համար որ նոյն հողաթումբէն առնէի... դժուր լալեզու «յետոյ»ին պատասխանը, որ իմ կեանքս տառապանքի փշոտ ճամբաներու մէջէն, տատակներու վրայէն կուշտն վրա կը քշէր: Հողաթումբը ցածցեր էր ու աւելի լուռ ու համր էր:

Կը կանգնէի գերեզմանափորերու քով, երբ անոնք նոր նոր փոսեր կը փորէին յիմարութեան հասնող միամիտ անիմանալի բայց երջանիկ փիլիսոփայութիւնով:

Կը ղիտէի ծակոտկէն զանկեր, երէկի սը-
րասես աչքերու տեղ որդնոտած խստո՛ւ
մը. կրծոսկրներ, երէկի տանդէեան սիւ-
տեր կրող, աննիւթ ու տաքուկ, անշօշա-
փելի զգացումներով լեցուն սիրտեր սար-
փակող կրծոսկրներ, որոնք փտտած,
փշրած, պժգալի դարձեր էին. որունք-
ներ, երէկի արագավազ, անտեսանելի
շարժիչ ուժը մարմնաւորող սրունք-
ներ, որոնք ծեր գերեզմանափորի մը թոյլ
ձեռքերուն կը հնազանդէին. զանկեր, ե-
րէկի սարփակիչները այն ուղեղներուն,
որոնցմէ աշխարհահռչակ խորհուրդներ,
աշխարհն ու աշխարհային օրէնքները յե-
ղաշրջող ուժերը կ'արտադրէին: Մար-
մինը որդերու կեր, հող դարձեր էին. ոս-
կորները տակաւին կը մնային յիշեցնելու
համար ծեր գերեզմանափորին այն երի-
տասարդ, իարձ մարդաձեւը, որի համար
քանի մը տարի առաջ այդտեղ փոս մը փո-
րեր էր:

Շատ անգամներ ղիտեր էի այդ սլա-
կերը, կմախքի այդ մնացորդները ու ա-
նոնց մէջ իմ վախճանս տեսեր ու ակա-
մայ ինքզինքիս պատասխանած.—

Վե՞րջը.— Ափ մը հող...

Բայց ինչպէ՞ս հաշուել «այի մը հող»ի^{***}

զաղափարին հետ:

Դասատուներուս դասերն ու կարգա-
ցած գիրքերս աչքիս առջևէն տողանցել
կուտային Պղատոն, Աղէքսանդր Մեծն,
Տանդէ, Ռուսո, Շէյքսպիր, Նևտոն, Նա-
փօլէօն, Կէօթէ, Քարլայլ, Հիւլօ... վեր-
ջապէս Գիտութեան ու Իմացականութեան
բոլոր ներկայացուցիչները, որոնց գերեզ-
մաններուն առջև կանգնած ըլլալ կը կար-
ծէի ու չէի կրնար համոզել թէ՛ ի՞նչպէս
այդ հսկաները, որոնք աշխարհը յեղա-
շրջեր, անջրպետները լեցուցեր, միջո-
ցը արհամարհեր էին, կրնային միայն ափ
մը հող ըլլալ: Չէ՞ որ անոնց խորհուրդ-
ները այնքան վսեմ ու հզօր էին. չէ՞ որ ա-
նոնց մէջ բարձրասլաց միտքեր ու համ-
բուրելի զգացումներ, սէր, ատելութիւն,
վրէժ, գուգուրանք, լախութիւն, ուրա-
խութիւն, իղձ, իտէալ... վերջապէս
աննիւթ, հետեաբար նիւթ, հող ըլլալու
անատակ ուժեր կային ամբարւած, չէ՞ որ
անոնք դարերով ապրած են ու մինչև մե-
զի հետ ապրելու յիշատակներ ունին: Մի-
թէ՞ այդ անշօշափելի ուժերը կրնային
ափ մը հող ըլլալ:

Ու նիւթապաշտութիւնը, ամէն բան
նիւթին մէջ տեսնելու իմ հաւատքս կը
սարսէր, ու «ես»ս գերեզմանէն ալ վերջ

ապրած ըլլալու մարմաջ մը էութիւնս կը
զգըզէր :

Բայց եթէ ափ մը հող չեն այս մարմի-
նը, այս ուղեղը, այս սիրտը, այս իղձերն
ու ուժերը... Ի՞նչ կայ այն փոսէն վերջ :

Յուզարկաւորութիւնս ու մեռելաթաղս
դարձեալ կը ներկայանար ինձ ու հողը կը
լեցւէր վրաս...

Յետո՞յ...

Երկրորդ անգամն էր որ կը կարէի Ազ-
լանդեանը : Շատ էի տառապեր : Շարաթ
մը գոնէ մէկ կողմ էի նետեր միսթիւ
գիրքերս : Բուսարանութեան գիրք մը կը
կարդայի :

Ես, որ բոյսերն ու ծաղիկները թէև
այնքան շատ սիրած էի բայց անոնց գի-
տութեան ո՛չ մէկ յարմարութիւն ու ձրզ-
տում ունեցած ըլլալ կը զգայի, Ազլանդ-
եանը ինձ ծաղիկներու գիտութիւնովը հե-
տաքրքրեց :

Բոյսերու զգայականութիւնը, անոնց
ցաւն ու արևի ճառագայթներուն տակ
խնձիղ ու թարմութիւն, ամպին տակ
թօշնանք ու մռայլանք զգալը գիտական
չօշափելի փորձերով կը փաստէին այդ
գիրքին մէջ :

Վարդ մը ունէի լամբակիս մէջ : Սկսայ
խորհել անոր վրա :—

Այս վարդն ալ ուրեմն ցաւ զգաց, երբ
կտրւեցաւ իր ցօղունէն. ու հիւանդ է հի-
մա լամբակիս մէջ ու թօշնելու, մեռնելու
մօտ : Արդեօք ինքն ալ կը մտածէ՞ ինձի
պէս իր «յետո՞յ» ին մասին, արդեօք այս
վարդն ալ կը տառապի՞ իր յուղարկաւ-
որութեան ու թաղումի յաճախանքէն : Պի-
տի ապրի՞ իր ալ «ես»ը, կամ ինքը կը
բաղձա՞յ իր «ես»ին յաւիտենականութիւ-
նը...

Յաճախ տեսեր էի ծաղիկներու թար-
չամիլն ու ոտքերու տակ կոխկուտիլը .
շատ անգամներ քմահաճ վայրկեանի մը
մէջ իմ ձեռքերով փետտուտեր ու մահա-
ցուցեր էի այդ փափուկ ու զգայնիկ արա-
բածները, որի համար նոր կը սկսէի խըղ-
ճահարել. բայց այն ատեն ոչ իսկ մէկ
թեթև հարցում չոյած էր ճակատս ծա-
ղիկներու վախճանի մասին : Այսօր, սա-
կայն, թարչամող վարդը, որ արդէն իսկ
լամբակէս հանած նետեցի տախտակամա-
ծին վրա, այս անգամ նոյնքան ծանր էր
ու դժւար վարդի կեանքի «յետո՞յ»ն որ-
քան իմ թաղումիս «յետո՞յ»ն :

Ու ես երկար խորհեցայ այդ ծաղիկին
վրա, որի մէջ կը տեսնէի այն բոլոր զգա-

ցումները, որ իմ մէջ կը ծնէին ու կ'ազ-
րէին. անոր մէջ կը գտնէի սիրտ մը այն-
քան զգայնիկ որքան իմ սիրտս. այն սար-
բերութիւնով որ անոր մէջ անոնք վարդի-
ծն ունէին իմ մէջ՝ մարդի:

Բայց իմ ուղե՞ղս, իմ մի՞տքս...

Հազիւ այս հարցումները շանթեր էին
գանկիս տալ, զգացի որ նաւը կը տատա-
նէր ուռած ովկիանոսի ալիքներուն վրա,
փոթորիկի բռնած մտղուկի մը աննշա-
նութիւնով:

Լուսիթանիան, այն հսկան, որի կեր-
տըւածքին, որի մեքենաներուն, որի ըս-
տեղծիչ միտքին վրա քիչ առաջ հիացե-
ռ անոր մեքենաները շարժող ռոպիի ուժը
գտնող միտքը ինձ ստիպեր էր հաւատալ
անդէականութեան, հաւատալ թէ այդ
ստեղծագործող միտքը կ'ապրի գերեզմա-
նէն վերջն ալ, Լուսիթանիան, Ադլանդ-
եանի անջրպետը ծաղրող այդ հսկան, փե-
տուրի մը պէս թեթեւ, կը ճարձատէր բը-
նութեան մէկ պղտիկ ժամանցին առջև:

Բնութիւնն էր, որ կը խօսէր իր աստ-
ւածութեան լեզուով, կարծես սաստելու
համար իմ անմահութիւն բաղձացող
մարդկութեանս ոչնչութիւնը:

Մովը կ'ուռէր. Լուսիթանիան, մարմ-

նացումը մարդ արարածի բոլոր ուժերուն
ու կարողութիւններուն, Բնութեան ուժին
առջև կ'երկրպագէր: Ու ես Բնութեան
մէկ աննշան խաղին առջև մարդ արարա-
ծի «անմահութիւնը» փաստող կերտւած-
քին այս ողորմելիութեան մէջ տեսայ բո-
լոր մարդերն ալ վաւրդին քով, որ ոտքիս
առջև կը պառկէր:

Նաւ մը ովկէանին վրայէն տանիլը ի՞նչ
ողբալի արժանիք է, որի մէջ հողի մը,
նիւթէն դուրս ուժ մը, գերեզմանէն վերջն
ալ ապրելու իրաւունք մը տեսնել սովբեր
էի, երբ նիւթ բնութիւնը, անսկիզբ ու
անվախճան այդ յաւիտենականութիւնը,
տիեզերքը կը բաղգատեմ անոր հետ...
Տիեզե՛րք, որի անհունութեան մէջ եր-
կիրներ իրենց ծովերով ու ովկէաններով,
արևներ իրենց անշափելի տարածութիւն-
ներով իբր աննշան նաւակներ կը նաւեն...

Ու փիլիսոփայութեան տաճարը իր
գմբէթը կը բարձրացնէ երեք կոթողներու
վրա. — Նիւթ, ներդառնակութիւն (ծնող-
քը ուժին), Չլափոխութիւն... Երեք ան-
սկիզբ ու անվախճան անմահութիւններ,
յաւիտենականութիւններ:

Մարդերն ալ կուզան ու կ'երթան վար-
դերու պէս, իբր մէյմէկ օղակը Չլափո-

խութեան այն անվախճան շրջանակին, որ
նիւթի ներդաշնակ կառուցւածքով յա-
ւիտեաններ ապրեցաւ, յաւիտեաններ պի-
տի ապրի:

Այսօր Ներդաշնակութիւնը նիւթ —
թերթ կը կերտէ ու աննիւթ բոյր կը ստեղ-
ծէ, վաղը Ներդաշնակութիւնը նիւթ—ու-
ղեղ կը ձևաւորէ ու աննիւթ խորհուրդ կը
ծնի...

Ու հին աստուածներու անդէնականու-
թեան աճիւնին վրա ասդէնականի նիւթա-
պատուութեան փրկիտփայլութիւնը կը
կանգնի...

ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ

Սեր 2

«Ազգային գրադարան»



NL0127882

Սեր 1

«Ազգային գրադարան»



NL0127881

